



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

13378

*Faint handwritten text, possibly a name or title.*

*Faint handwritten text, possibly a date or location.*

342  
L-23

Upokuf  
1892

2010

012

N10

7 N<sup>r</sup>. Հրատարակութիւն Հնչակեան Կուսակցութեան. N<sup>r</sup> 7.

Ս օ ց ի ա լ ի ս տ ա կ ա ն Գ Ր ա գ ա Ր ա ն .



# ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

ՖԵՐԴԻՆԱՆԴ ԼԱՍՍԱԼԻ.



Թարգմանութիւն.



ՄԷԿ ԱՌԱՋԱԲԱՆՈՎ

«ՀԵՉԱԿ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ԵՒ

ՀԵՂԻՆԱԿԻ ՊԱՏԿԵՐՈՎ.

Գինը 40 սանտիմ.

ԱԹԵՆՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԱՏ ՏՊԱՐԱՆ

1893

2-952 a

7 Ռ. Հրատարակութիւն Հնչակեան Կուսակցութեան. Որ 7.

Սօցիալիստական Գրադարան.

342  
L-23



# ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ԷՈՒԹԵԱՆ ՄԵՍԻՆ.

ՖԷՐԴԻՆԱՆԴ ԼԱՍՍԱԼԻ.



Թարգմանութիւն.



ՄԵԿ ԱՌԱՋԱԲԱՆՈՎ

«Հնչակ»-ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ԵՒ

ՀԵՂԻՆԱԿԻ ՊԱՏԿԵՐՈՎ.

Գինը 40 սանտիմ.

ԱԹԵՆՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԱՏ ՏՊԱՐԱՆ

1893



8298  
3628

10054



ՖԻՐԻՐԱՆԻ ԼԵՍՈՒՆ



44523-ւհ.



29594-63

62001



## ԱՌԱՋԱԲԱՆ

Ներկայ բրօշերը Հնչակեան Կուսակցութեան Տրատարակութիւնների շարքում պէտք է բռնէ մէկ առանձին տեղ Տայերիս նկատմամբ: Եւ դա այն պատճառով որ նա ծառում է մէկ այնպիսի նիւթի մասին, որը Տայութեան Տամար ներկայումս առաջնակարգ նշանակութիւն ունի: Ներկայացնելով ու պարզաբանելով առՏասարակ սահմանադրութեան էութիւնը, ցոյց տալով ու բացատրելով նրա իրական Տիմբը կեանքի մէջ, տալով «սահմանադրական բոլոր արուեստի ու իմաստութեան» բանալին, սոյն բրօշերը գիտական եւ միանգամայն գործնական ուղեցոյց է Տանդիսանում Տայերիս Տամար այն մի շարք ծանրակշիռ Տարցերում, որոնք վերաբերում են ազգերի բաղաբական կարգերին: Ներկայումս գտնվելով բաղաբական այնպիսի պայմաններում, որոնք իւրաքանչիւր բայլափոխում գերանի պէս դէմ են կանգնում Տայութեան զարգացման առջեւ, եւ միեւնոյն ժամանակ մեր մէջ առաջացած լինելով այնպիսի պատմական ձգտումներ, որոնք անմիջական կերպով կապված են մեր կեանքի բաղաբական կարգերի Տետ, — այս

բրօշուրը հայ ժողովրդի համար հանդիսանում է մէկ անհրաժեշտ աղբիւր, որի շնորհով յայտնի եզրակացութեան գալով, նա, ժողովուրդը, կարող է որոշել այն քաղաքական հիմունքները, որոնց վրա պէտք է յենվեն իր կեանքի քաղաքական կարգերը, որպէս զի բաւարար լուծում ստանան իր, ժողովրդային ընդհանրութեան, քաղաքական շահերը:

Ներկայ բրօշուրի հեղինակ Ֆ Է ր դ ի ն ան դ Լ ա ս ս ա Լ Ը հանրածանօթ է: Նա այս դարուս ամենաօրիգինալ (original), հազագիւտ, հուշակաւոր հսկաներից մէկն է, որ իր հասարակական գործունէութեամբ ու կեանքով հանդիսանում է ներկայ ժամանակիս ամենաառաջադէմ, նոր, ս օ գ ի ա Լ ի ս տ ա կ ա ն (ընկերվարական) ձգտումների ու շարժման ոգեւորված, հանձարեղ վարդապետներից ու արտայայտիչներից մէկը: Ամբողջ 10-15 տարւայ ընթացքում Եւրոպայի ու շաղրութիւնը նա իր վրա բեւեռած պահեց՝ իբրեւ տրիբուն, իբրեւ հընդհանր, իբրեւ հասարակական հսկայական յոժերից մէկը, որոնց երեւան գալն աշխարհում իր ազդեցութեան խորունկ ակոսն է թողնում ամբողջ մարդկութեան հասարակական կեանքի անդաստանում: Ահա այդ անձնաւորութեան մի ճառը թարգմանօրէն ներկայացնելով հայ հասարակութեան, մենք նախ ընդհանուր ակնարկ կը գցենք գ ի տ ա կ ա ն ս օ գ ի ա Լ ի դ մ ի (ընկերվարութիւն), այսինքն մ ա ր ք ս ի դ մ ի պատմականի վերա, որով եւ միեւնոյն ժամանակ խօսած կը լինենք գերմանական սօցիալիզմի մասին, այնուհետեւ, լուսաբանելով ներկայ բրօշուրի նիւթն իր գլխաւոր կէտերում, այդ կէտերի հիման վրա կը շոշափենք հայկական իրականութիւնը եւ կեզըրակացնենք հայերիս պատմական պահանջները ներկայումս — երկուսն էլ քաղաքական-սահմանադրական տեսակէտից: Մեր այդ տեսութիւնը կը

լինի համառօտ, բանի որ աւելի ընդարձակ մի տեսութիւն կը պահանջէ շատ աւելի էջեր և յատուկ հրատարակութիւն:

## I

Որպէս բնութեան մէջ, նոյնպէս մարդկային հասարակութեան մէջ ամեն բան փոփոխվում է, ամեն բան կերպարանափոխվում է շարունակ: Այն, ինչ անցեալի յայտնի ժամանակամիջոցում ներկայանում էր իբրեւ օգտակար, յետագայում, պատմական ընթացքի մէկ ուրիշ՝ աւելի բարձր աստիճանի վրա, յայտնվում է վնասակար: Այն, ինչ առաջադիմական էր պատմութեան յայտնի շրջանում, հանդիսանում է պահպանողական կամ նոյն իսկ յետադիմական պատմութեան մէկ ուրիշ՝ աւելի զարգացած շրջանում: Այն, ինչ մարդկային հասարակութեան պատմական զարգացման յայտնի աստիճանում հարկաւոր էր, հասարակութեան զարգացման աւելի բարձր աստիճանում դառնում է այլ եւս անպէտք: Բայց պատմութեան ընթացքում ոչ մի հասարակական հիմնական երեւոյթ չէ եղել աւելորդ. իւրաքանչիւրն ունեցել է իր տեղը, իր ժամանակը, իր դերն ու իր նշանակութիւնը պատմական այն ֆազիսում, այն շրջանում, որը համապատասխան է եղել իր, այսինքն երեւոյթի, էութեան, իմաստին: Բայց պատմական ընթացքը յաջորդաբար հասնելով կենսական աւելի ու աւելի բարձր, զարգացած շրջանի, ամեն անգամ է վ օ Լ ի ւ ց ի ա յ ի (évolution, շրջանափոխութիւն) միջոցին ճակատագրական կերպով կործանում է այն ամենն, ինչ այլ եւս աւարտել է իր պատմական դերը: Կործանելով մի շարք պայմաններ, նոյնպէս ճակատագրական կերպով դրանց տեղն առաջանում է պայմանների մէկ ուրիշ շարք, նորն, ա-

ւելի կատարեալը: Այս վերջինը ծնունդ է առնում նախորդ պայմանների, կործանվածների, արգանդից, լինում է անհրաժեշտ հեռանկարը նախորդ պայմանների բնական զարգացման, մինչդեռ իրանց կողմից այս վերջինները կործանվում են հէնց այն պատճառով, որ իրանց միջից, հէնց նոյն իսկ իրանց անխուսափելի զարգացման ազդեցութեամբ, առաջացնում են նոր, աւելի կատարելագործված պայմաններ: Այդպիսով էվոլյուցիայի ընթացքում իւրաքանչիւր պատմական շրջան կործանվում է իր ներքին դիալեկտիկայի (dialectique, տրամասութիւն) ազդեցութեամբ:

Այսպէս, մարդկային հանրակեցութեան մէջ բոլորը շարժման մէջ է շարունակ, բոլորը փոփոխվում, կերպարանափոխվում է, ընդունելով միշտ աւելի ու աւելի զարգացած, հասուն կերպեր ու իմաստ: Սեփականատիրութեան, արդիւնաբերութեան, հասարակական, քաղաքական, ընտանիքի կազմութեան կերպերը, կրօնները, օրէնսդրութիւնները, սովորութիւնները, աշխարհայեացքները — բոլորն իրանց կերպերով ու իմաստով մշտական փոփոխութեան ենթակայ են, բոլորը ծագում են, աճում եւ իրանց զարգացման մէջ հասնելով յայտնի աստիճանի, սկսում են հնանալ, կորցնել իրանց պատմական օգտակարութիւնը, քայքայվել եւ ի վերջոյ կործանվել, աւել տալով նորերին: Հէնց իրանց կերպերի ու իմաստի զարգացման ընթացքն է, պրօցէսն է, որ պայմանաւորում է նրանց անկումը, ըստ որում իրանց կերպերի ու իմաստի զարգացման զօրութեամբ է, որ անհրաժեշտօրէն, բնական արամադրութեամբ սկսում են ծագել նոր կերպեր ու նոր իմաստ: Միանգամ ծագած՝ այդ նոր կերպերն արդէն անպայման կերպով պէտք է իրանք եւս զարգանան եւ իրանց զարգացումով նոյնպէս անխուսափելի

կերպով լինեն պատճառ նախորդ կերպերի կործանման: Կերպարանափոխութեան (transformisme) այդ իւրաքանչիւր միջոցն էլ որոշում է մարդկային հանրակեցութեան իւրաքանչիւր նոր շրջանը, Փազիան էվոլյուցիայի երկայն շարքում: Այդ իւրաքանչիւր շրջանից էլ սկսում են հանրակեցութեան նոր կերպեր, նոր պայմաններ:

Այդ օրէնքի հիման վրա յայտնվում է, որ յաւիտենական, մշտական գաղափար ու իդէալ չը կայ, որ յայտնի գաղափարը, յայտնի իդէալը, ինչպէս եւ ամեն երեւոյթ մարդկային հասարակութեան մէջ, ունի իր իմաստին համապատասխան ժամանակը, պատմական շրջանը, որից դուրս նա կորցնում է իր ամբողջ կշիռը, իր իմաստը, իր միտքը: Որպէս տեսական արտայայտութիւն յայտնի միջավայրի (milieu) ու պատմական յայտնի էպօխայի (époque, շրջան) հասկացողութիւնների, հայեացքների, մի խօսքով՝ աշխարհայեացքի եւ որպէս ծնունդ նոյն էպօխայի հասարակական-տնտեսական յարաբերութիւնների, — յայտնի գաղափարը, յայտնի իդէալը յատուկ է միմիայն այդ էպօխային եւ ոչ ուրիշ, եւ ոչ յետագայ էպօխային: Ճշմարտութեան, գեղեցիկի, արդարութեան յաւիտենական գաղափար, յաւիտենական իդէալ չը կայ: Այն, ինչ ճշմարտութեան, գեղեցիկի, արդարութեան իսկական գաղափարն է հանդիսանում պատմական յայտնի էպօխայում, հասարակութեան կուլտուրական զարգացման յայտնի աստիճանի վրա, միեւնոյն գաղափարը հանդիսանում է ոչ միայն անհամապատասխան, այլ եւ ուղղակի հակառակ պատմական մէկ ուրիշ էպօխայում, զարգացման մէկ ուրիշ աստիճանի վրա հասարակութեան մէջ կազմված գաղափարին, իդէալին: Մարդկային հասարակութեան մէջ պատմական իւրաքանչիւր շրջան ունի իրան պատկանող, իրան յատուկ մի շարք գաղափարներ, իդէալներ, որոնք ար-

դիւնք են նոյն այդ շրջանի կենսական որոշ պայմանների: Նոյն այդ գաղափարները կենսական պայմանների հիմնական փոփոխութեամբ դէպի առաջ այլ եւս հանդիսանում են ապրած, աւարտած իրանց պատմական նըշանակութիւնը, դերը: Պատմական յետագայ շրջանի համար նրանք յայտնվում են արդէն նախապաշարունմելի, հնացած, սխալ հայեացքներ ու իդէալներ, որովհետեւ այդ յետագայ շրջանն իր պատմական էութեամբ ու հանրակեցութեան կերպերով տարբեր լինելով նախկինից, հանրակեցութեան այդ նոր կերպերն արդէն ծնունդ են տվել իրանց էութեան համապատասխան գաղափարների մի նոր շարք ու իդէալներ, որոնք իրանց իմաստով նոյնպէս տարբերվում են նախորդ շրջանի գաղափարների շարքից: Այսպէս, մէկ օրինակ: Նախնական ստրկատիրութեան պաշտպան գաղափարները, որ ունէր նաեւ յունական ամենամեծ փիլիսոփայ Արիստոտելէսը, իրան ժամանակին հիմնական ու օգտակար էին, ըստ որում ստրկատիրութիւնը բնական կերպով զարգացաւ այն ժամանակւայ տնտեսական պայմաններից եւ հանդիսացաւ անհրաժեշտ մարդկութեան յետագայ առաջադիմութեան համար: Ստրկատիրութեան միջոցով աշխատաւոր ոյժերը շահագործվելով, տեղի ունեցաւ աշխատանքի աւելի մեծ բաժանում, քան մինչ այն ժամանակ կար: Աշխատանքի այդ աւելի մեծ բաժանումը նպաստեց արդիւնաբերութեան առաջադիմութեան, պայման եղաւ գիտութեան ու արուեստների ծագման, ընդարձակեց առեւտուրը, եւ այդպիսով զարկ տվեց մարդկութեան ընդհանուր աւելի բարձր զարգացման: Ստրուկ-մարդն իր ամբողջութեամբ ուրիշի ապրանքն էր, որին տէրը կարող էր պահել ծախել ուրիշին կամ սպանել իսկ — դա կախված էր լոկ իր կամքից. բայց հիմա ոչ ոքի գլխով մի րոպէ անգամ չանցնել վերակենդանացնել ստրկատիր-

ութիւնը, ինչ ի հարկէ, եթէ ամենքն էլ ցանկանային, արդէն չէին կարող անել, որովհետեւ դա անհնարին, հակաիրական կը լինէր արդիւնաբերական ներկայ պայմաններում: Ներկայ կենսական պայմանները բոլորովին տարբեր են եւ իրանց բնական զարգացման համար նըշանք բոլորովին պէտք չունեն նախնական ստրկական աշխատանքի մէջ: Եւ հէնց կենսական պայմանների այդ խորին տարբերութիւնն այժմ զարգացած մարդկութեան տվել է գաղափարների բոլորովին ուրիշ շարք, ներշնչել է բոլորովին ուրիշ իդէալներ, ըստ որում այժմ տարօրինակ, անմիտ, ծիծաղելի, վայրենի են դարձրել մեր աչքին ստրկատիրութեան պաշտպան գաղափարները ներկայիս վերաբերութեամբ: Արպէս ժամանակիս գաղափարների շարքը չէր կարող գոյութիւն ունենալ Արիստոտելի գարում, նոյնպէս այդ դարու գաղափարները ոչինչ տեղ չունեն ներկայումս:

Այսպէս, յաւիտենական, անփոփոխ գաղափարներ, իդէալներ չը կան: Գաղափարների իւրաքանչիւր շարքը յայտնի ժամանակի հանրակեցութեան ծնունդ է եւ մեռնում է, երբ այդ ժամանակը թերվում է դէպի անկում: Յայտնի գաղափարը ծագում է միայն այն ժամանակ, երբ արդէն կենսական պայմանների մէջ գոյութիւն ունեն այնպիսի իրական յարաբերութիւնն եր, որոնք պայմանաւորում են նրա ծագումը: Այդպիսով, ո՛չ մի գաղափար, ուրեմն, իր պատմական ժամանակից աւելի շուտ չէ ծագել. նա ծագում է ճիշդ իր ժամանակին, յաջորդելով այն իրական արդէն կեանքում սկսած գոյութիւն ունենալ երեւոյթիւն, որի արտայայտութիւնն է ինքը:

Պատմութեան մէջ ամենամեծ էպօսաներից (ըջջաններից) մէկն, անտարակոյս, այն էպօսան է, երբ բուրժուազիան, ունեւոր, դրամատէր դասակարգը, մլած սոսկալի պատերազմ աւատականութեան դէմ, յաղթութեամբ հաստատեց իր դասակարգային իշխանութիւնը: Այդ էպօսան պատմութեան մէջ արձանագրվեցաւ իբրեւ տրագէդիա (tragédie, ողբերգութիւն)՝ լի որպէս մարդկային ամենավսեմ գրգապատճառներով, զգացումներով, նոյնպէս ամենակրքոտ, ստէպ հակակրելի յատկութիւններով ու արտայայտութիւններով: Յամենայն դէպս, պատմութեան մէջ դա մի երես է, որին շատ են հակառակել թէ մասնաւոր կէտերում եւ թէ առհասարակ եւ որի պաշտպանութեան եւ կամ ուղղակի փառաբանութեան համար խօսվել ու գրվել է աւելի եւս շատ: Ինչ որ էլ լինէր, այն, ինչ անհերքելի է, դա նրա օգտակարութիւնն է, նրա մեծ նշանակութիւնն է, նրա պատմական անխուսափելիութիւնը, անհրաժեշտութիւնն է: Այդ մեծ էպօսան, Փրանսիական Մեծ Յեղափոխութեան այդ էպօսան, միանգամից ընդ միշտ կործանեց այն բոլորն, ինչ մօտիկից կամ հեռուից կապ ունէր աւատականութեան ամեն աւանդութիւնների հետ, ինչ կցված էր ու պատկանում էր աւատական կարգերին, աւատական շրջանին: Բուրժուազիայի դասակարգային իշխանութեան հաստատուիլը ճակատագրական, անխուսափելի, բնական հետեւանք էր այն տնտեսական նոր պայմանների, որոնք ծագել էին աւատականութեան միջոցին, բայց որոնք այլ եւս գտնվում էին ներքին հակառակութեան մէջ աւատական կարգերի հետ, այն է՝ մի կողմից էմանֆական (համբարական) եւ միւս կողմից՝ ճորտատիրական դրութեան հետ: Այդ էպօսայից

դեռ շառ առաջ բուրժուազիան՝ իրական պայմանների շնորհով՝ մեծ դեր էր խաղում աւատական հասարակութեան մէջ: Աւճառականութիւնը, առեւտուրը նրա ձեռքն էր գտնվում եւ նրա նախաձեռնութեան շնորհով ընդունում էր շարունակ աւելի ու աւելի լայն ծաւալ, բանում էր նորանոր վաճառանոցներ, ուր դիզվում էին նրա ապրանքները: Միւս կողմից էլ մանուֆակտուրական (ձեռագործական) արդիւնաբերութիւնն էր շարունակ աճում նրա ձեռքի տակ եւ անդադար մահացու հարուած տալիս մանր արհեստաւորական արդիւնաբերութեան: Ամերիկայի գիւտը եւս առաւել նպաստեց բուրժուազիայի շահերին, ահագին քանակութիւն ոսկի մասակարարելով Եւրոպային եւ նորանոր երկրներում հաստատելով նոր վաճառանոցներ: Կրամն աւելի ու աւելի դառնում էր հասարակութեան կեանքի գլխաւոր երակը եւ անբուժելի հարուածներ տալիս հողատէր-սեփականատէրերին, աւատական ճորտատէրերին, որոնք դրամ չունէին: Բազմաթիւ ճորտատէրեր մնանկանում էին անդադար: Տնտեսապէս բոլորովին քայքայվում էր նաեւ գիւղական դասը, որի անդամները վարձվում էին կապիտալիստների գործարաններում: Աւճառականութեան ու առեւտրի ստացած մեծ ծաւալի շնորհով հաղորդակցութեան միջոցներն անխմանալի կերպով ընդարձակվեցան: Աւատականութեան ոչ միայն ազգային սահմանափակութիւնը, այլ միեւնոյն ազգի մէջ գոյութիւն ունեցող աշխարհագրական բազմաթիւ աւելի նեղ սահմանափակութիւնները սկսան վերանալ, վերացաւ ազգային սահմանափակութիւնը եւս եւ մինչեւ այն ժամանակ միմեանց անձանօթ ազգեր կապվեցան իրար հետ առեւտրական կապերով, կործանվեցան նրանց մէջ կանգնած չինական պարիսպները: Նաւազնացութիւնն էլ ընդունեց մինչեւ այն ժամանակ չեղած ծա-

ւալ: Աւատական կարգերում ամեն բան իրչում, ջարդ-վում, քայքայվում, ընկնում էր: Կեանքի ծագող նոր պայմանների շնորհով եւ բնութեան զանազան ոյժերի գործադրութեան անհրաժեշտութիւնն արդիւնաբերութեան ու առեւտրի զարգացման համար՝ նորանոր նիւթեր ենթարկեցին մարդկային մտքի բնութեան: Գիտութիւնը սկսաւ անել մեծամեծ քայլեր դէպի առաջ, և նրա արդիւնները դարձան ընդհանուր սեփականութիւն բոլոր ազգերի համար միաժամանակ, որ կապված էին իրար հետ տնտեսական կապերով: Գասակարգային կռուիւր ստացել էր մինչեւ այն ժամանակ պատմութեան մէջ չը տեսնված սուր կերպարանք: Քաղաքային միջին, արդիւնաշահող դասից՝ առաջացած՝ ծագող բուրժուազիւն, կապիտալիստ դասակարգն անհաշտ, կատաղի պատերազմ էր յայտարարել կեանքի այն բոլոր պայմանների դէմ, որոնք հակառակ էին նրա դասակարգային ձրգտումներին, նրա շահերին, նրա պատմական դերին: Աւատականութեան մէջ գոյութիւն ունեցող զանազան դասակարգերն արդէն շարունակ իրար դէմ կուր մէջ էին. ճորտ գիւղացին դէմ էր իր տէրին, արհեստաւոր-ուստան (վարպետը) դէմ էր իր աշկերտին եւ փոխադրածաբար. — ճնշողը ճնշվածի եւ ճնշվածը ճնշողի դէմ: Ծագող բուրժուազիւն աւելի սուր կերպարանք տվեց այդ դասակարգային կուրին, ինքն էլ իր կողմից մղելով իր դասակարգային շահերի վրա հիմնված կռոււր միջնադարեան ազնականութեան դէմ: Քայքայվող դասակարգերի աղքատութիւնը, թշուառութիւնը ստացել էր չը տեսնված ծաւալ եւ առատացրել դժգոհների թիւը: Աւազակութիւնը, հարկահանների կամայականութիւնը, իշխողների բռնութիւն էլ աւելի եւս բարդվում էին ժողովրդի անկման օրդանական պատճառների վրա: Թրշուառութիւնը մուտք էր գործել մինչեւ իսկ ճորտա-

տէրերի առաջ հարուստ, այժմ աղքատացած ապարանը: Իրերի այդ վիճակը, արդիւնաբերական բոլոր նոր ոյժերն ու կերպերը, առեւտրականութեան զարգացումը, նիւթական նոր պայմանները — բոլորն աւելի ու աւելի հաստատ հիմք էին դնում բուրժուազիայի ոտքերի տակ, երբ անցեալ դարու վերջերն արած մեքենայի գիւտն էլ վերջնականապէս տակն ու վրա արեց ամբողջ միջնադարեան արդիւնաբերական պայմանները: Այդ բնական պրօցէսը, բուրժուազիայի այդ պատմական զարգացման ընթացքը գտաւ վերջապէս իր արտայայտութիւնը Փրանսիական Մեծ Յեղափոխութեան մէջ, որն արդէն օր է նքով հաստատեց այն, ինչ իր ապէս հաստատված էր, — այսինքն կործանումն աւատական կարգերի եւ նիւթական նոր պայմանների ու իմաստի համեմատ կառուցեց բուրժուազական նոր կարգերը: Բնական յեղափոխութիւնը կենսական բոլոր պայմաններում՝ պատճառ եղաւ Փրանսիական Մեծ Յեղափոխութեան, որով բուրժուազիւն առաջին անգամ իր ձեռքը գցեց քաղաքական իշխանութեան ղեկը, իբրեւ անհրաժեշտ ու ամենագլխաւոր զէնքը, որով մի դասակարգ կարող է կատարեալ կերպով հաստատել իր քաղաքական գերիշխանութիւնը եւս միւս դասակարգերի վրա եւ աւելի մեծ զարկ տալ իր դասակարգային շահերին նպաստող պայմաններին, իր արդիւնաբերական ոյժերի առաւել զարգացման, իր նիւթական զօրութեան առաջադիմութեան: Այդ էր Փրանսիական Մեծ Յեղափոխութեան կատարածը: Այդ էր բուրժուազիայի պատմական մեծ կոչումն ու դերը, որ վերին աստիճանի յեղափոխիչ էր. . .

## III

Պատմութեան այդ նշանաւոր էպոսայի նախորդներ-

ընն էին Ֆրանսիական մեծ մտածողները (penseur), որոնք բուրժուազիային հասկացրին ու որոշեցին այս վերջինի պատմական դերը, այդ պատմական ըրպէի իմաստը: Բուրժուազիայի դասակարգային կռիւը գտաւ իր տեսական արտայայտութիւնը նրանց հանձարեղ ուսմունքներում: Որպէս բուրժուազիան, իր նիւթական շահերով զրգված, դեռ XIV—XV-րդ դարերից սկսած անողոք պատերազմ էր մղել շարունակ աւատական ազնւական դասակարգի դէմ, աւատական բոլոր կարգերի դէմ առհասարակ, նոյնպէս XVIII-րդ դարու Ֆրանսիական հանձարեղ մտածողների լեզուներն իր մաքի անողոք քննութեան էր ենթարկել նոյն հասարակական կարգերը: Արժն, աստուածապաշտութիւնը, հոգեւորականութիւնը, ազնւականութիւնը, աւատականութեան տէրունական ու հասարակական կերպերը, ընտանիքը, սովորութիւնները, ընդունված հայեացքները, բարքերը — բոլորի դէմ մաքառում էր բուրժուազիան, բոլորը ձգտում էր նա ոչնչացնել՝ իբրեւ հնացած, իբրեւ անպէտք, իբրեւ վնասակար: Բուրժուազիան ունէր արդէն փիլիսոփայական, հասարակական ու պատմական բոլորովին նոր հայեացքներ, որոնք համապատասխան էին կեանքում մուտք գործած նիւթական նոր, նախկինից հիմնովին տարբեր, յարաբերութիւններին, յարաբերութիւններ, որ իրանց կողմից ծագում էին տվել ու պայմանաւորում էին բուրժուազիայի շահերն ու ձգտումները: Նոյն կռիւն աւելի ընդարձակ, աւելի խոր կերպով արտայայտվեցաւ Ֆրանսիական մտածողների ուսմունքներում: Այդ մտածողները հարազատ արդիւնքն էին իրանց պատմական ժամանակի եւ նրանց միտքն իրանց ժամանակից աւելի առաջ գնալ անկարող էր: Այնպէս որ միտքը մարմնացաւ Միլարայի մէջ, Ռուսոյի միտքը մարմնացաւ Ռօբէսպիէի մէջ: Բուրժուազիան սահմա-

նագրական տէրութեան հաստատումը զարձաւ մէկի ձգտման նպատակը. բուրժուազական-ուսմանարական հանրապետութիւնը եղաւ միւսի իղէալը: Մի բան, որ ամենագլխաւոր հոսանքն էր կազմում Ֆրանսիական այն ժամանակայ փիլիսոփայական մտքի եւ բուրժուազիայի ձգտման, դա — կործանել միանգամից ընդ միշտ այն բուրժուան, ինչ վերաբերում էր հնացած, ընկնող աւատական հասարակութեան ու աւանդութեան՝ մի կողմից եւ հէնց այդ պատճառով միւս կողմից գաղափարին, մշտքին վերագրել գերբնական մէկ ոյժ, որ կարող է իր, գաղափարի, գ ծ ա գ ր ա ծ ձանապարհով վերակազմել վերանորոգել կեանքը, տալով սրան այն կերպարանքը, ինչ կերպարանք, որ թելագրում է գաղափարը: Այդ տըրամաբանութեամբ դուրս էր գալիս, որ իբր մարդկութիւնն ինչպէս ուզենայ, նոյնպէս էլ կը կանոնաւորէ իր կեանքի կերպերը, բոլորովին հաշի տակ չառնելով կեանքի իր աւելան պայմանները, որոնք իբր գանձում են բանականութեան, գաղափարի տրամադրութեան տակ, որոնց մէջ ինչ փոփոխութիւն ուզենան՝ կանեն լոկ գաղափարի թելագրութեամբ: Գաղափարին, բանականութեան այդպիսի ամենակարող զօրութիւն վերագրելուց էլ առաջացել էր ի մ ա ս տ ու թ ե ա ն պ ա շ տ ե լ ու ձ գ տ ու մ ը («culte à la sagesse»), որով Ռօբէսպիէնը փորձեց փոխարինել աստուածապաշտութիւնը: Վերջապէս հռչակվեցան ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն, արդարութիւն գաղափարները, որ բանականութիւնը ներկայացնում էր իբրեւ մարդասիրական, իբրեւ մարդկային «բնական իրաւունքի բնածին պահանջ»: Ֆրանսիական մտածողը զարմացել էր, որ մարդկութեան մէջ աւելի շուտ երեւան չեկան այդ գաղափարները եւ չաղատեցին մարդկանց երկար դարերի չարչարանքներից, «տարածայնութիւններից»: Եւ նրանց թուում էր, թէ գաղափարի, բանականութեան, մտքի

կազմած մարդկային այդ նոր հանրակեցութիւնը նոյնպէս յաւիտենական պէտք է լինի, որպէս իրանց կարծիքով իրանց հասկացած արդարութիւնն էր, հաւասարութիւնն էր, ազատութիւնն էր:

Բայց իրականութեան, կեանքի նիւթական պայմանների գորութեամբ բուրժուազիայի եւ իր XVIII-րդ դարու մեծ մտածողների հասարակական իրէպը պէտք է յանգէր ներկայ հանրակեցութեան, երբ առաջացած լինելով նաեւ մէկ ուրիշ, նոր՝ պրօլէտարիատ, ամեն սեփականութիւնից զուրկ ու վարձու բանող դասակարգ, դասակարգային կուրը մարդկութեան մէջ ստացաւ իր ներկայ ամենասուր ու ամենանողոք կերպարանքը. երբ նրանց երազած հաւասարութիւնը դարձաւ ամենխորին անհաւասարութիւն նոյն իսկ կապիտալի, սեփականատիրութեան այդ նոր կերպի շնորհով, որ բուրժուա դասակարգի ծագման ու գոյութեան հիմքն է եւ որ լոկ այդ դասակարգի ձեռքն է, մինչդեռ մարդկութեան ահագին աշխատաւոր մեծամասնութիւնը զուրկ է ամեն սեփականութիւնից. երբ նրանց երազած եղբայրութիւնն ու արդարութիւնը կեանքի մէջ, նիւթական պայմանների շնորհով, յայտնվեցաւ բուրժուազիայի դասակարգային գերիշխանութիւնը միւս դասակարգերի վրա եւ բուրժուազիայի գոյութիւնը պայմանաւորեց նրանով, որ այս վերջինը լոկ իր օգտի համար անխիղճ, անարգար զորութեամբ պիտի շահագործէր իրանից շատ աւելի մեծ բանւոր դասակարգին: Այդ շահագործութիւնը ճակատագրական էր եւ պէտք է անպատճառ գոյութիւն ունենար յանուն նոյն բուրժուազիայի շահերի, իրերի բնական ընթացքի գորութեամբ, մի շահագործութիւն, որ միևնոյն ժամանակ նպաստում էր առհասարակ մարդկութեան ընդհանուր առաջադիմութեանը, մեծ զարկ տալով արդիւնաբերութեան ու նիւթական պայմանների զարգացման:

Բայց Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը դասակարգային կուր էր ոչ միայն աւատական ազնւականութեան ու բուրժուազիայի մէջ, այլ եւ չունեւոր, աղքատ ընդհանրութեան մէջ, որի ձգտումները մինչեւ մի յայտնի աստիճան միախառնվում էին բուրժուազիայի ձգտումների հետ: Այդտեղից էլ առաջացել էր այն հանգամանքը, որ բուրժուազիայի հետ միասին կուրում էր նաեւ այդ ժողովրդային ընդհանրութիւնը: Այդ ընդհանուր կուրի մէջ աւատականութեան դէմ, սակայն, չունեւոր ընդհանրութեան բուն շահերը հակառակ էին բուրժուազիայի շահերին, որ եւ արտայայտվեցաւ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան միջոցին Բաբեոֆ յայտնի Ֆրանսիացի ուտօպիստ (երազական) կոմունիստի նախաձեռնութեամբ գոյացած շարժման մէջ: Բաբեոֆի գլխաւոր միտքն էր, թէ «հաւասարութիւնը բնութեան օրէնք է» եւ իբր այդ պատճառով «մարդիկ պէտք է հաւասար լինեն եւ ամեն ինչը հասարակական»: Բուրժուազիայի պատմական յաղթութիւնից յետոյ կամացկամաց սկսաւ երեւան գալ այն խորին անհաւասարութիւնը, որ այդ դասակարգի շահերը պատճառել էին հասարակութեան զանազան խաւերում: Բուրժուազիայի ձրգտումները ծնունդ տվին մէկ ուրիշ դասակարգի՝ պրօլէտարիատ, որի գոյութիւնն անհրաժեշտ էր բուրժուազիայի գերիշխանութեան ու զարգացման համար, նրա դասակարգային, կապիտալիստական հասարակական կարգերի գոյութեան համար: Բուրժուազիային պէտք էին ազատ մարդիկ, որոնք բացի իրանց երկու բանող ձեռքերից՝ ուրիշ ոչինչ սեփականութիւն չունենային եւ որոնք այդպիսով հարկադրված պէտք է «ծախէին» իրանց այդ բանող ձեռքերը, բանող այժը, որպէս զի կապիտալիստնե-

րի գործարանների աշխատութիւնները լրացնելով, ստանային օրավարձ, այդ լինելով միակ աղբիւրն իրանց ապրուստի, գոյութեան: Մարդը մարդուն պէտք է, ուրեմն, շահագործէր շատ աւելի խիստ կերպով, քան երբ եւ է.—ստրուկը ապրանք էր, բայց ստրկատէրը ստիպված էր նրան կերակրել, որպէս զի ստրուկը կարողանար ապրել նրա համար աշխատելու. ճորտն աշխատում էր առաջնապէս ճորտատէրի համար, բայց նա աշխատում էր նաեւ իրան համար գէթ այնչափ, որ հայթայթում էր իր ապրուստը. իսկ պրօլէտարին, այդ ազատ բանւորն իր գոյութեան այդ չնչին ապահովութիւնը, գարանտիան (garantie) էլ չունէ. նա աշխատում է գլխաւորապէս կապիտալիստի շահի համար, մասամբ էլ իրան համար, և այդ միայն այն ժամանակ, երբ վարձված է գործարանում, երբ գործ ունի: Եւ այդպէս անգործ մնաց ժողովրդային բաւական ստուար ընդհանրութիւնը Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնից յետոյ, երբ նա դարձաւ կատարելապէս սեփականազուրկ: Աղքատութիւնը, հիւանդութիւնը, անստուգութիւնը, գեղձահոտութիւնը գարձաւ այդ ընդհանրութեան կեանքի մասն ու բաժինը: Կապիտալիստական արդիւնաբերութեան անընդհատ զարգացումը, Փինանսական (գրամական) ս պ է կ ու լ ա գ ի ա ն ե ը ը (շահագիտութիւնները), արդիւնաբերական մեքենան նիւթապէս աւելի ու աւելի քայքայեցին ժողովրդի միջակ ու չունեւոր խաւերը, որոնք շարունակ անցնում էին նոր կազմվող պրօլէտարիատ, այդ սեփականազուրկ ու վարձու բանուղ զասակարգի շարքը եւ այդպիսով դիզվում քաղաքներում: Բուրժուազիայի Մեծ Յեղափոխութեան եւ նրա փիլիսոփաների գեղեցիկ, վերացական սկզբունքները «յաւիտենական» հասարակութեան ու արդարութեան մասին յայտնվեցան լոկ գեղեցիկ խօսքեր, գեղեցիկ Ֆրազ-

ներ, որոնք չէին համապատասխանում իրականութեան:

Այդ ժամանակները երեւան եկան երեք մեծ հանձարներ. 1800 թ. անգլիացի Ռօբերտ Օուէն, 1802 թ. Սէն-Սիմօն եւ 1808 թ. Գուրիէ — վերջին երկուսը Ֆրանսիացի: Երեքն էլ, բողոքովն անկախ միմեանցից ու ինքնուրոյնաբար, սկսան քննադատել բուրժուազական կարգերից առաջացած հետեւանքները, մատնանիչ անել այդ կարգերի անթիւ պակասութիւնների վրա, երբեմն հանձարեղ դիտողութիւններ անելով այդ կարգերի ամենատկար կողմերի մասին, ցոյց տալ այն խորին անհաւասարութիւնը, մարդկութեան մի մասի այն իրական կախումը միւս մասից, որ, հակառակ բուրժուազիայի անգիր սերտած երրորդութեան — ազատութիւն, հասարակութիւն եւ եղբայրութիւն, — այդ կրակոտ խօսքերին, սկսել էր տիրել հասարակութեան մէջ եւ մեղանչել «յաւիտենական արդարութեան» դէմ: Բայց չը նայած իրանց քննութիւններին, որոնք երբեմն հանձարեղ նախադուշակութիւններ էին բուրժուազական կարգերից այն ժամանակ դեռ եւս չառաջացած հետեւանքների նկատմամբ, երեք մեծ հանձարներն էլ չէին հասկանում դեռ հազիւ ծագող ու միւս չունեւոր խաւերից դեռ բաւական չը զատված պրօլէտարիատ դասակարգի շահն ու կոչումը մի կողմից եւ միւս կողմից, որ բուրժուազական կարգերն անխուսափելի կերպով առաջացել են պատմական զարգացման ընդհանուր ընթացքից: «Կապիտալիստական դեռ չը հասունացած անդինաբերութեան», — ասում է Գրիգրիս Էնգելսը, խօսելով այդ երեք հանձարների մասին, — «դասակարգերի փոխադարձ դեռ մութ դիրքերին իրար նկատմամբ» համապատասխանում էին եւ տհաս թէօրիաներ: Հարկ էր լինում հնարել, եւ ոչ թէ գանել հասարակական խնդիրների լուծումը, որ դեռ անտեսական անզարգացած յարաբերութիւններ

րի շնորհով մթի մէջ էր: Ահնայտնի էին հասարակական կազմակերպութեան միայն պակասութիւնները, իսկ գտնել միջոցներ նրանց վերացնելու համար, թուում էր, թէ մտածող բանականութեան գործն է: Պահանջվում էր, կարծում էին նրանք, հնարել մարդկային յարաբերութիւնների նոր ամենակատարելագործված սխտէմ (եղանակ) եւ պատրաստել նրան՝ գոյութիւն ունեցող հասարակութեանը պրօպագանդա անելով, իսկ եթէ կարելի է՝ նաեւ նոր սխտէմի համեմատ կազմված հաստատութիւնների օրինակով (ինչպէս Օուէնը): Այդ նոր սօցիալական սխտէմները կանխապէս դատապարտված էին մնալու ուսուցիաներ (մտացածին, երազական) եւ որքան ջանքով էին զարգացնում նրանց մանրամասնութիւններն, այնքան աւելի անցնում էին այդ ուսուցիաները կատարեալ ֆանտազիայի (երեւակայութեան) աշխարհը»:

Այդպէս, Ֆուրիէն, Սէն-Սիմոնը, Ռօբէրտ Օուէնը եւ այն մի շարք տաղանդաւոր անձերը, որ յետագայում երեւան եկան Ֆրանսիայում, Գերմանիայում ու Անգլիայում, հանդիսացան հետեւողներ այդ երեքի ուսմունքների, յայտնվեցան ուսուցիտ, երազական սօցիալիստներ: Նրանք ոչ թէ արդիւնաբերութեան ու նիւթական պայմանների պատմական զարգացման ընդհանուր ընթացքից էին եզրակացնում իրանց ուսմունքներն, այլ իրանց բանականութեան ծնունդ, մտացածին հասարակական կազմակերպութիւն էին «հնարում», որը համապատասխան լինէր «արդարութեան ու մարդասիրութեան պահանջներին», իրանց կազմած անհատական հասկացողութեամբ: Ապօրինատական արդիւնաբերութեան դեռ տկար զարգացման ժամանակ դրանից հեռու չէր կարող գնալ նշյն իսկ ամենահանճարեղ միտքը, որպիսին էր նրանցը: «Սօցիալիզմը», — ասում է Ֆրիդրիխ Էնգելը, — «նրանց հասկացողութեամբ, բացարձակ (adsolu) ճշմար-

տութեան, բանականութեան ու արդարութեան արտայայտութիւնն է, եւ բաւական է միայն նրան գտնել, որոշել, որպէսզի նա իր սեփական զօրութեամբ նուաճէր ամբողջ աշխարհը, բայց որովհետեւ բացարձակ ճշմարտութիւնը կախված չէ ժամանակից, տարածութիւնից ու մարդկութեան պատմական զարգացումից, ուրեմն արդէն մի պարզ պատահուելի գործ է, թէ երբ եւ ուր նրան գտնեն: Ըստ որում բացարձակ ճշմարտութիւնը, բանականութիւնն ու արդարութիւնը տարբեր են այս կամ այն դպրոցի իւրաքանչիւր հիմնադրի համար եւ պայմանաւորվում են նրա խելքի անհատական կազմութիւնից, նրա կենսական պայմաններից, նրա գիտական պաշարի քանակութիւնից ու նրա մտածողութեան ընդունակութիւնից: Այդ պատճառով այդ զանազան տեսակի բացարձակ ճշմարտութիւնների միմեանց ընդհարման միջոցին՝ հաշտութիւնը կարելի է միայն նրանց հակասութիւնների փոխադարձ հարթութեան միջոցով: Գրանից ուրիշ ոչինչ չէր կարող կազմվել, բացի մէկ առանձին տեսակ է կլէտական (électique, ընտրական), միջակ սօցիալիզմի, որն իրապէս մինչեւ հիմա էլ տիրապետում է Անգլիայի ու Ֆրանսիայի բազմաթիւ բանւորների գլխում»:

Այդ երեք մեծ ուսուցիտներն իրանց այդ երազական սօցիալիզմով հրաւեր էին կարդում ոչ թէ պրօլետարիատ դասակարգին, որը նրանք դեռ կարողութիւն չունէին զատելու առհասարակ չունեւոր ընդհանրութիւնից, այլ դիմում էին ամբողջ մարդկութեան, ամենքի բանականութեան: Ի հարկէ, այդպիսով այդ սօցիալիզմը չէր կարող ոչ մի պատմական գեր խաղալ, բացի նրանից, որ նա յայտնվեցաւ միայն առաջին տեսական քայլերն այն պատմական նոր հոսանքի, որ վերջը պէտք է գրտնէր իր թէօրիական հանճարեղ արտայայտիչները եւ սօցիալիզմը վերջնականապէս դնէր իրական, գիտական

Տողի վրա: Այդ հանձարեղ արտայայտիչները հանդիսա-  
ցան գիտական սօցիալիզմի հայր աշխարհահռչակ գիտ-  
նական և արլ Մ արք ս ը, որի անունով էլ ստեպ ան-  
ւանում են գիտական սօցիալիզմը — մ արք ս ի զ մ եւ  
ապա նրա՝ նոյնքան հռչակաւոր գիտնական՝ աշխատակիցը՝  
Ֆ ր ի դ ը ի խ է ն գ ե լ ս:

## V

Ներկայ դարուս երեսունական ու քառասունական  
թւականներն ուսուպիստ (երազական) սօցիալիզմի ամե-  
նատար ժամանակներն էին: Այդ թւականներում ուսու-  
պիստ սօցիալիստների մէջ երեւան եկան անձեր, որոնք  
թէեւ իրանց ուսմունքներով էապէս չը տարբերվելով  
իրանց մեծ նախորդների ուսմունքներից, այդ ուսմունք-  
ներում սակայն արին կարեւոր փոփոխութիւններ, մըտ-  
ցըրին հանձարեղ նորութիւններ: Ղինելով ուսուպիստներ,  
իրանց ուսմունքները նրանք հիմնում էին մարդկային  
զգացումների, բարոյական դրութիւնների ու մարդկային  
պահանջների վրա, այդ պահանջները նկատելով իբրեւ  
բնածին, մշտական, անփոփոխ: Եւ այդ հիման վրա կազ-  
մում էին ապագայ հասարակութեան նախագծեր նոյն-  
քան Փանտաստիկական (երեւակայական), որքան իրանց  
երեք մեծ նախորդները, եւ այդ տեսակէտից էլ միւս  
կողմից քննադատում էին իրանց ժամանակակից հասա-  
րակական կազմակերպութիւնը: Բայց այդ թւականներին  
ուսուպիստ սօցիալիստներից ումանց մէջ նկատվում է ար-  
դէն աւելի որոշ ուղղութիւն: Նկատվում է, որ նրանք  
հասկանում են, թէ իրանք պէտք է պատերազմ մը-  
ղեն բարձր, ունեւոր դասակարգի դէմ, թէեւ պատե-  
րազմը պէտք է անել յանուն առհասարակ չունեւոր ու աշ-  
խատաւոր ընդհանրութեան եւ ոչ թէ պրօլէտարիատ դա-

սակարգի շահերի: Բանւոր դասակարգի պատմական նը-  
շանակութիւնը նրանց համար մութ էր: Բայց եւ այն-  
պէս այդ տեսակէտն էլ նրանց համար արդէն բաւա-  
կան էր, որպէսզի նրանք դիմէին այլ եւս ոչ թէ ընդ-  
հանուր մարդկութեան, այլ աշխատաւոր դասակարգի  
շարքերից որոնէին իրանց կողմնակիցներ: Բաւական չէ  
այդ, հէնց իրանց այդ թէօրիան պէտք է նրանց դնէր  
նաեւ պրակտիկական (գործնական) գործունէութեան  
շաւղի վրա: Այդտեղ էլ առաջացան գործող մարմիններ,  
բայց չիմանալով գեռ զատել բանւոր դասակարգը ժո-  
ղովորի չունեւոր ընդհանրութիւնից առհասարակ, չի-  
մանալով հասարակութեան պատմական վարդացման ընդ-  
հանուր ընթացքի իմաստը, այդ մարմինները կարծում  
էին, որ բաւական է միայն ձեռքը գցեն երկրի իշխա-  
նութիւնը, որպէսզի իրանց մտքի ու կամքի թելադրու-  
թեամբ աշխարհում իրականացնեն դրախտային մի կեանք:  
Այդ տեսակ կոմիւնիզմի (հասարակորդութիւն) գլխա-  
ւոր քարոզիչն էր Ա. ի Նէլմ Ա. է յօլինգ, այնուհետեւ —  
բանւոր Իօզէֆ Մօլ, Էվէրբէկ եւ ուրիշներ — գերմանա-  
ցիների մէջ եւ Բլանկի, Բարբէս եւ ուրիշներ Փրան-  
սիացիների մէջ: Գրանց կազմակերպութիւնները կապ-  
ված էին իրար հետ գաշնակցական կապով: Երե-  
սունական ու քառասունական հանրեւրոպական ժողո-  
վորային խլորտումների միջոցին Գերմանիայից շատ յե-  
ղափոխական ազգասէր-չօվինիստներ (chauviniste) փա-  
խան դէպի Ֆրանսիա, Շվէյցարիա ու Անգլիա եւ այդ-  
տեղերը հանդիպելով կոմիւնիստներին, շփվելով դրանց  
հետ, կամաց-կամաց մոռացան իրանց նեղ ազգասի-  
րական «թմու» գաղափարներն ու գործունէութիւնը  
եւ ընդունեցին միջազգային գաղափարներ, յարեցան  
կոմիւնիզմին: Այդպիսով այդ կոմիւնիստներն իրանց  
քաղաքական դաւանանքով ներկայացնում էին այն ժա-

մանտիւայ ամենարմատական ու ռամկավարական հոսանքը եւ մաքառում ժողովուրդային չունենոր ընդհանրութեան համար: Այդ ամբողջ շարժումն էլ ստեղծող եղաւ Փրանսիական ու գերմանական կոմիւնիզմի, որպէս եւ անգլիական կոմիւնիզմի, որ կոչվեցաւ չարտիզմ: 1836 թ. Մայիսին Պարիզի ապստամբութիւնից յետոյ այդ յեղափոխականներից մեծամասնութիւնը հալածվելով անցաւ Լօնդօն, որտեղ էլ նրանց կազմակերպութիւններից շատերը՝ այսինքն միեւնոյն լեզուն խօսող գերմաներէն — զանազան ազգերը միացան իրար հետ եւ ընդունեցին միջազգային բնաւորութիւն: Գրանց նշանաբանն էր — «ամեն մարդիկ եղբայր են», խաղաղ մի նշանաբան, բայց շատ բնատուր նոյն ժամանակայ կոմիւնիստական թէօրիաների իմաստի նկատմամբ:

Այդ կոմիւնիզմի հետ միաժամանակ ծագեցան կոմիւնիստական ուրիշ հոսանքներ եւս, բայց սրանց դերը արդէն երկրորդական եղաւ, եւ ոմանք ոչ մի հետք չունեցան:

Այդ վիճակումն էր ահա սօցիալիզմն իբրեւ թէօրիա եւ իբրեւ գործունէութիւն, երբ բառասունական թւականների սկիզբները երեւան եկան երկու մեծ հանձարներ, երկուսն էլ Գերմանիայից հալածված յեղափոխական ռամկավարականներ — Կարլ Մարքս եւ Ֆրիդրիխ Էնգելս: Սրանք գիտականօրէն հիմնեցին սօցիալիզմը եւ միանգամից ընդ միշտ, անդառնալի կերպով հարուածեցին ու յետ միջին ուսուպիստական սօցիալիզմը, գծագրեցին պրօլետարիատ դասակարգի պատմական ձգտումների թէօրիական, գիտական արտայայտութիւնը, այդ նոր ուսմունքը եւ նոյն դասակարգի պատմական կոչումն ու գործունէութիւնը: Տեսնենք այժմ, թէ ինչպէս ծագեցաւ գիտական սօցիալիզմը — մարքսիզմը:

Ահա թէ ինչ է պատմում դրա մասին գիտական

սօցիալիզմի հիմնադիրներից մէկը՝ Ֆրիդրիխ Էնգելս: «Ապրելով Մանչեստերում (Անգլիայում), ես փորձով տեսայ, որ տնտեսական յարաբերութիւնները, — որոնց մինչեւ այդ ժամանակ պատմական գիտութիւնը բոլորովին ոչ մի նշանակութիւն չէր տալիս եւ վերագրում էր նրանց ամենաչնչին մի դեր, — որ այդ յարաբերութիւնները, գէթ ժամանակակից հասարակութեան մէջ, ներկայանում են իբրեւ պատմական գլխաւոր ոյժը: Ես համոզվեցայ, որ նրանք կազմում են հիմքը ժամանակակից դասակարգային անտագօնիզմի (թշնամութիւն), որ այն երկրներում, որտեղ, ինչպէս Անգլիայում, խոշոր արդիւնաբերութեան զարգացումը հասցրել է այդ անտագօնիզմը զարգացման բարձր աստիճանի, նա, այդ անտագօնիզմն, իր կողմից պայման է յայտնվում քաղաքական կուսակցութիւնների կազմութեան, նրանց կուռի, եւ դրա հետ միասին նաեւ ամբողջ քաղաքական պատմութեան: Մարքսը ոչ միայն հասաւ միեւնոյն հայեացքներին, այլ արդէն «Deutsch-französischen Jahrbüchern» թերթում (1844 թ.) նա այդ հայեացքներն ընդարձակել էր այն իմաստով, թէ առհասարակ տէրութիւնը չէ, որ պայման է յայտնվում քաղաքացիական (civil) հասարակութեան կազմակերպութեան, այլ ընդհակառակը, քաղաքացիական հասարակութիւնն է պայմանաւորում տէրութեան կազմակերպութիւնը, եւ թէ հետեւաբար քաղաքական յարաբերութիւնների բացատրութիւնը ու նրանց պատմութիւնը պէտք է որոնել տնտեսական կազմակերպութեան ու դրա զարգացման մէջ: Երբ որ 1844 թ. ամառը ես պատահեցայ Մարքսին Պարիզում, մեր մէջ կայացաւ համաձայնութիւն բոլոր թէօրիական հարցերում եւ այդ ժամանակից սկսվում է մեր ընդհանուր աշխատութիւնը: Երբ 1845 թ. գարնան մենք կրկին իրար պատահեցանք Բրիւսսէլում, Մարքսը

վերջիչած գրութիւններից գլխաւոր գծերում արդէն կազմել էր իր՝ պատմութեան մատերիալիստական (նիւթապաշտական) փիլիսոփայութիւնը, եւ մենք սկսանք մեր նոր աշխարհաստեղծութեան մասնաւոր աշխատութիւններն ամեն տեսակ այլ եւ այլ ուղղութիւնների մէջ: Բայց այդ գիւտը, որ յեղաշրջում գործեց պատմական գիտութեան մէջ, որը գլխաւորապէս պատկանում է Մարքսին եւ որի մէջ ես կարող եմ ինձ վերագրել մասնակցութեան միայն մի փոքր բաժին, — ունեցաւ անմիջական կարեւորութիւն այն ժամանակեայ բանւորական շարժումների գլխաւոր մասնաւոր համար: Գերմանական ու Ֆրանսիական կոմունիստները (հասարակօրգութիւնը), որպէս եւ անգլիական չարտիզմն այժմ չէին թուում պատահական երեւոյթներ: Այդ շարժումներն այժմ ներկայացվում էին ժամանակակից հասարակութեան ճնշված դասակարգի, այն է պրօլետարիատի, շարժումներ, առաւել կամ պակաս զարգացած կերպը նրա պատմականապէս անհրաժեշտ կուրսի տիրող դասակարգի, բուրժուազիայի դէմ: Գասակարգային կուրսի այդ նոր տեսակը, նախորդ շրջանների (période) կուրսի բաղադրութեամբ, ունի մէկ առանձնաշատ կութիւն. — ժամանակակից ճնշված դասակարգը, պրօլետարիատը, չէ կարող ձեռք բերել իր ազատումը, միաժամանակ չազատելով ամբողջ հասարակութիւնը դասակարգերի բաժանումից եւ, ուրեմն, նաեւ դասակարգային կուրսից: Կոմունիստները էլ նոյնպէս ստացաւ նոր բնաւորութիւն: Նրա անելիքն այժմ կայանում էր ոչ թէ հասարակական որքան կարելի է կատարեալ իդէալի ֆանտաստիկական (երեւակայական) կառուցման մէջ, այլ ուսումնասիրութեան մէջ բնութեան, պայմանների եւ դրանցից. ծագող ընդհանուր նպատակների այն կուրս, որ նախաձեռնել է պրօլետարիատը:

«Նոր փաստերն» — ասում է Էնգելսը, — «ստիպե-

ցին նախկին ամբողջ պատմութիւնը ենթարկել նոր հետազոտութեան, եւ այն ժամանակ պարզվեց, որ ամբողջ պատմութիւնը, բացի նախնական գրութիւնից, դասակարգերի կուրսի պատմութիւն էր, որ այդ հասարակական կուրսը դասակարգերը յայտնվում են, իւրաքանչիւրը յայտնի ըստէում, արդիւնք արդիւնաբերութեան ու փոխանակութեան պայմանների, կարճ — իր ժամանակի տնտեսական յարաբերութիւնների: Հասարակութեան իւրաքանչիւր յայտնի էպօխայի տնտեսական կազմակերպութիւնը ներկայացնում է իրանից այն իրական հողը, որի յատկութիւններով բացատրվում է, վերջին հաշուով նրա վրայի կառուցվածքը, որ կազմված է իրական ու քաղաքական հաստատութիւններից, որպէս եւ պատմական իւրաքանչիւր յայտնի շրջանի կրօնական, փիլիսոփայական եւ այլ հայեացքներից»:

Մարքսի արած այդ մեծ գիւտը — այսինքն պատմութեան այդ պիւսի մատերիալիստական հասկացողութիւնը եւ դարձեալ միւս մեծ գիւտը տնտեսագիտութեան մէջ — այսինքն «յաւելեալ արժէքի» գոյութիւնը ներկայ կապիտալիստական կազմակերպութեան մէջ եւ այդ արժէքի շնորհով կապիտալիստական արդիւնաբերութեան գաղտնիքի բանալը, այն, որ կապիտալը գոյանում է յաւելեալ արժէքից, — այդ երկու գիւտերը սօցիալիզմը միանգամից ազատեցին ամեն տեսակ ուտօպիստական երազներից, ֆանտազիաներից եւ դարձրին նրան մէկ ամբողջ գիտութիւն:

Այդ տեսակէտից յայտնվում էր, որ առհասարակ դասակարգերի կուրսը պատմութեան մէջ եւ մասնաւորապէս ժամանակակից կապիտալիստական հասարակական կազմակերպութեան միջոցին պրօլետարիատի կուրսի իշխող դասակարգի, բուրժուազիայի, դէմ՝ պատմական զարգացման ընդհանուր ընթացքի անհրաժեշտ, ան-

խուսափելի արդիւնքն է, և ոչ երբէք այս կամ այն անհատի մտքի, բանականութեան ու կամքի մէկ արգասիք, եւ ոչ երբէք պատահական: Այդ հիման վրա էլ կ'օմիւնիստական, սօցիալիստական յեղափոխութիւնը մէկ ամբողջ դասակարգի—պրօլէտարիատի, բանւոր դասակարգի—գործ է եւ այդ դասակարգի ազատվելը «կախված չէ անհատների ճարպիկութիւնից, այլ տնտեսական յարաբերութիւնների զարգացման ընթացքի անխուսափելի ու անշեղելի» արգասիք է: «Այդ պատճառով»,—ասում է մարքսիզմի ժողովրդականացնողներից մէկը,— «կոմիւնիստները հանդիսանում են պրօլէտարիատի կազմակերպողներ ու ղեկավարներ: Այն երկրներում, որտեղ բուրժուազիան արդէն ձեռք է բերել կատարելաբար իշխանութիւն, պրօլէտարիատի կուրի մօտակայ նպատակը յայտնվում է՝ ոչնչացնել այդ իշխանութիւնը եւ իր ձեռքը գցել քաղաքական ղեկը: Իսկ այնտեղ, ուր, ինչպէս Գերմանիայում, բուրժուազիան միայն պատրաստվում էր տիրապետող դասակարգ դառնալու, կոմիւնիստները պէտք է նրա հետ միասին գործեն, բայց «այնչափ (խօսքեր Մարքսի եւ Էնգելսի), որչափ բուրժուազիան յեղափոխական յայտնվէր իր կուրի մէջ բացարձակ միապետութեան ու աւատական հողային սեփականատիրութեան դէմ: Բայց զա չէ նշանակում, թէ կոմիւնիստները կարող էին առժամանակ գոհանալ լիբերալ (ազատամիտ) ծրագրով: Ընդհակառակը, նրանք պէտք է ջանային պրօլէտարիատին կազմակերպել իբրեւ «ապագայի զիմազրական կուսակցութիւն (խօսքեր կրկին Մարքսի ու Էնգելսի) եւ մի րոպէ անգամ չը դադարէին բանւորների գլխում որոշել ու ամրացնել կարելիին չափ պարզ հասկացողութիւն բուրժուազիայի ու պրօլէտարիատի շահերի հակառակութեան մասին»: Մի խօսքով, նոր կ'օմիւնիստական ուսմունքի հիմնադիրները

ընն ուղում էին, «որ հասարակական ու քաղաքական պայմանները, որոնք իրանց հետ կը բերեն բուրժուազիայի գերիշխանութիւնը, գերմանական բանւորների համար կարողանային ծառայել իբրեւ գործիք հէնց նոյն բուրժուազիայի դէմ, որպէս զի այդ վերջինի դէմ կուր սկսվէ Գերմանիայի յետադիմական դասակարգերի անկումից ան մի ջ ա պ է ս յ ե տ ո յ:»

Այդ նոր ուսմունքը սակայն դժուար էին ըմբռնում այն ժամանակեայ կոմիւնիստները: Իւր դա հասկանալի էր, աչքի առջև ունենալով, որ նոր ուսմունքը բոլորովին հիմնայատակ էր անում նախկին բոլոր կոմիւնիստական ուսմունքներն ու հայեացքները, նախկին կոմիւնիստների ամբողջ աշխարհահայեացքը: Բայց Մարքսըն ու Էնգելսը համոզված էին, որ իրանց ուսմունքը վերջիվերջը պէտք է յաղթող լինի եւ այդ պատճառով ինքնավստահ կերպով շարունակում էին իրանց պրօպագանդան, մի րոպէ իսկ չը վերջովվելով իրանց հակառակորդների յարձակումներից: Ապագան ապացուցեց, որ նրանք չէին սխալվում: Գեռ 1847 թ. գարնանը նախկին կոմիւնիստական ուսմունքը դաւանողները, որոնք ապաստանել էին Լօնդօնում եւ այնտեղ հիմնել իրանց կազմակերպութիւնը, հրաւիրեցին Մարքսին ու Էնգելսին ընկերանալ իրանց հետ եւ կազմակերպութիւնը հաստատել նոր հիմունքների վրա: Երկարատեւ ու բուռն վիճաբանութիւններից յետոյ վերջապէս միաձայնութեամբ ընդունվեցաւ կոմիւնիստական նոր, գիտական ուսմունքը, բոլոր տարածայնութիւնները վերացան և նոյն տարին ընկերութեան պատուէրով Մարքսն ու Էնգելսը գրեցին իրանց հանձարեղ ու կլասիկական մի գրուածքը— «կոմիւնիստական կուսակցութեան Մանիֆէստը»: Այդ ծրագրի ձեւատիւն, փոխարէն նախկին նշանաբանի՝ «ամեն մարդիկ եղբայր են», զրվեցաւ մարտական մի ձիւ. Պ ր օ-

է ւ ա ր ի ն ե ր ք ո լ ո ր ե ր կ ր ն ե ր ի, մ ի ա ց է ք ո՛ւ  
— որ ճշգրտէն արտայայտում էր պրօլէտարիատի մի-  
ջազգային գործունէութեան բնաւորութիւնը»: «Տասնե-  
կօթ տարի յետոյ», — ասում է Էնգելսը, — «այդ նոր  
ճիշն անցաւ ամբողջ աշխարհը Մարքսի հիմնած Բանւոր-  
ների Մշակչաբան ընկերութեան հետ միատեղ, եւ այսօր  
բոլոր երկրների պրօլէտարիատը գրում է այն իր դրօ-  
շակի վրա»:

1849 թ.-ի անաղղ յեղափոխութիւնից յետոյ, որ  
վերջացաւ յետադիմականների, րէակցիայի (réaction) յաղ-  
թութեամբ, գերմանական կոմմունիստները նորից սկսան  
ապաստան գտնել օտար երկրներում, յեղափոխութեան  
միջոցին իրանը գտնված լինելով Գերմանիայում: Բայց  
լօնդօնում, գաղտնի ընկերութիւններ հիմնելիս, որոնք պետք  
է հայրենիքում տարածէին կոմմունիստական գաղափար-  
ներ, նկատվեցաւ, որ շատերը «կոմմունիստական Մանի-  
ֆէստ», իրանց ծրագիրը համարելով հանդերձ, լաւ չէ-  
ին ըմբռնել նրա իմաստը: Այդ հանգամանքը տեղի տը-  
վեց վիճաբանութիւնների, որոնց միջոցին յայտնվեցան  
տարբերութիւններ գործունէութեան եղանակների նկատ-  
մամբ եւ թէօրիական մի բանի կէտերում: Թէեւ մեծա-  
ծամասնութիւնը Մարքսի կողմն էր, բայց այնուամենայ-  
նիւ ընկերութեան մէջ տեղի ունեցաւ խզում, եւ այն  
ժամանակայ քաղաքական հայածանքների միջոցին ան-  
խուսափելի դարձաւ նրա վերջնական քայքայումը: Բայց  
այդ քայքայումը մահուան դատապարտեց միայն նախ-  
կին կոմմունիստական խմբերին, մինչդեռ մարքսիզմն  
այդ ժամանակներից յետոյ արաւ ահագին, հսկայական  
առաջադիմութիւն, եւ այսօր բոլոր քաղաքակրթված եր-  
կրներում գոյութիւն ունեն գորաւոր բանւորական կաղ-  
մակերպութիւններ, որ կոչվում են սօցիալ-դեմօկրատա-  
կան կամ մարքսիստ: Ներկայումս ամբողջ աշխարհի բո-

լոր քաղաքակրթված ազգերի բանւորական գլխաւոր  
ու գիտական շարժումը հիմնված է Մարքսի ու Էն-  
գելսի ուսմունքների վրա, ուսմունքների, որ՝ գնալով՝  
շարունակ յաղթութիւններ են անում եւ որոնցն էլ ա-  
պագան: 1849 թ. մեռաւ եւ պատմութեան մէջ ան-  
ցաւ ուսուցիչստական սօցիալիզմը, իսկ մարքսիզմը՝ եւ  
բանւորական շարժումը մնացին թմրած մինչեւ վաթ-  
սունական թւականները, երբ յայտնվեցաւ մի հանճար,  
օժտված անընկճելի էսէրգիայով, եւ անդով մտաւոր ու  
հոգեկան հարուստ յատկութիւններով, գիտական մեծ  
պաշարով եւ մարքսիզմի ուսմունքների հիմունքների  
վրա վերակենդանացրեց միանգամից ընդ միշտ բանւո-  
րական շարժումը Գերմանիայում, որտեղից էլ այդ շար-  
ժումն ուրիշ մեծ տաղանդների ջանքով տարածվեցաւ  
ուրիշ երկրներում եւս, եւ այսօր ընդունել է իր ներ-  
կայի յաղթական, հսկայական, համաշխարհային կերպա-  
րանքը, նշանակութիւնը, դերը: Այդ հանճարի անունն  
է — Ֆէրդինանդ Լասսալ:

## VI

Ֆերդինանդ Լասսալը ծնվել է 1825 թ. ապրիլի  
11-ին Գերմանիայի Բրէսլաւ քաղաքում: Նրա հայրը,  
հարուստ հրէայ վաճառական, ցանկանում էր, որ որ-  
դին էլ իր արհեստով պարապէէ, թէեւ նրա բնական  
հակումներն ու արտասովոր ընդունակութիւնները բոլո-  
րովին ուրիշ եւ ընդարձակ ասպարէզ էին պահանջում:  
Տասն եւ վեց տարեկան հասակում նա սկսեց սովորել  
Լէյպցիգ քաղաքի առեւտրական դպրոցում, բայց շու-  
տով ձանձրանալով այդ անսակ ուսումից, որ բոլորովին  
չէր համապատասխանում հարուստ ու փայլուն յատկու-  
թիւններով օժտված իր բնութեան, նա մտաւ համալ-

սարան եւ այնտեղ գլխաւորապէս սկսաւ պարապվել լեզուագիտութեամբ, փիլիսոփայութեամբ ու իրաւագիտութեամբ: Համալսարանում ամենից շատ նա դրաւ վեց գերմանական երկու մեծ փիլիսոփաներով՝ Գիլտե եւ Հէգել: այս վերջինս եղաւ նրա ուսուցիչը փիլիսոփայութեան մէջ: Քաղաքականութեան մէջ նա հարեցաւ դէմօկրատների (ռամկաւարական) ամենաարմատական մասին, որ դեռ այն ժամանակ կոչվում էին «յեղափոխական»: Գեռ ուսանողական նստարանից նա սկսել էր մի գիտական աշխատութիւն իօնեան փիլիսոփայութեան մասին, և նրա ուսումնասիրութիւնը Մուլթն Հէրակլիտի փիլիսոփայութեան մասին աւելի վերջը ներառանունը հոչակեց գիտական աշխարհում: Գեղեցիկ կերպով աւարտելով իր համալսարանական շրջանը, իր վերոյիշած աշխատութիւնների համար 1845 թ. նա գնաց Պարիզ, ուր ծանօթացաւ գերմանացի մեծ բանաստեղծ Հէյնրիխ Հէյնէի հետ, որն իր երիտասարդ նոր բարեկամի, նրա ընդունակութիւնների ու գիտութեան մասին խօսում է անսահման հիացումով ու զարմացումով: Վերագաձնալով Բերլին, Վասսալն ուղեց ընդունվել պրիվատ դոցէնտ (privat docent) եւ այդ առիթով մեծ կապեր ունեցաւ գրական ու գիտական շրջանների հետ, որտեղ նա գտաւ սիրելի ընդունելութիւն: Մանաւանդ նշանաւոր լեզուագէտ Հուլբրախը շատ բարեկամանում է նրա հետ եւ նրան ուրիշ կերպ չէ անուանում, եթէ ոչ «պատանի-Տրաշք» (das Wunderkind): Վասսալը շարունակում էր պատրաստել իր աշխատասիրութիւնը Հէրակլիտի մասին, որ լոյս տեսաւ միայն ինն տարի յետոյ:

Նոյն այդ 1845 թ. Բերլինում նա ծանօթացաւ մէկ անձի հետ, որ մեծ ազդեցութիւն ունեցաւ նրա կեանքի վրա: Այդ անձն է կոմսուհի Սօֆի դը Հաց-

Ֆէլդ, որ այն ժամանակներում դրամական դատ ունէր իր ամուսնու դէմ, որից ուղում էր բաժանվել: Շատ խելացի, ճարտարախօս ու անկախ բնաւորութեան տէր՝ կոմսուհին ուշադրութեամբ զբաղվում էր ժամանակակից քաղաքական ու սօցիալական մեծ հարցերով եւ խոյս չէր տալիս ամենաճարայեղ ու ամենահամարձակ գաղափարներից անգամ: Հասկանալի է, որ այդ անձն ու Վասսալը միմեանց հետ պէտք է կապվէին շատ սերտ ու բարեկամական կերպով, եւ այդ ժամանակից երիտասարդ գիտնականն իրան խօսք է տալիս անպատճառ գոհացում տալ իր բարեկամուհու արդարացի պահանջին նրա ամուսնու վերաբերութեամբ: Այդ ժամանակներում մի դէպք է պատահում, որ Վասսալին բերում զնում է դատարանում ամբաստանվածների նստարանի վրա: Գէպըը հետեւեալն է: Իմացվեցաւ որ բարոնուհի (la baronne) դը Մէյէնդորֆ, որը սերտ յարաբերութիւններ ունէր կոմսուհու ամուսնու հետ, այս վերջինից պէտք է ընդունէր մի շատ հարուստ պարզեւ եւ այդ պատճառով կոմսուհու ու կոմսի միակ զաւակը պէտք է զրկվէր ամեն ժառանգութիւնից: Վասսալի բարեկամներից մէկը զայրացած դրանից, յղանում է մի «վայրենի միտք» եւ ուղում է իր ձեռքը գցել Սօֆի դը Հացֆէլդի մէկ արկղիկը, որ գտնվում էր բարոնուհու մօտ և որի մէջ, թուում էր նրան, թէ կային կարեւոր թղթեր դատի համար: Բայց ոստիկանութիւնը ձերբակալում է նրան, նրա հետ նաեւ Վասսալին, որին դատախազը մեղադրում է իբրեւ նախաձեռնող այդ գործի: Վասսալն այդտեղ ինքն իրան պաշտպանելով, վեց ժամուայ ընթացքում մի ճառ է խօսում, որ պքանչելի է իր ճարտասանութեամբ, խորը, ոգեւորված ու հարուստ, մտքերով եւ ազդու ու յարձակողական իր շեշտերում կոմս դը Հացֆէլդի դէմ, որի մէջ նա մարմնացնում էր ա-

րիստոհրատիայի (ագնեականութեան) բոլոր արատներն ու ազականութիւնը, եւ առիթ է գտնուում խօսելու պրօ-լէտարիատի ու սօցիալիզմի մասին: Աւելի վերջն արդէն բողոքովին պարզ եղաւ, որ դատարանական քննութիւն-ների գլխաւոր նպատակն էր պատժել ու ամկա վա-րականին եւ այդ դատը դատախազի կողմից խեղա-պէս մի պատրուակ էր: Այդու ամենայնիւ երգվեալ դատաւորներն արդարացնում են Վասսալին: Այդ վճի-ւրը հասարակութեան կողմից ընդունուում է աննկարա-գըրելի խնդութեամբ: Բաղմութիւնը ձեռքերի վրա դուրս է հանում դատարանական սրահից Վասսալին եւ երբ այս վերջինս գալիս է Գիւստէլզօրֆ քաղաքը, բնակիչ-ներն իրանց խնդարից ձիչերով «խլացնում են նրա ա-կանջն», ինչպէս արտայայտուում է ինքը: Թողովրդի ա-պագայ տրիբունի առաջին հասարակական մեծ յաղթա-նակն էր դա:

Մոմտուհի դը Հացֆէլզի նշանաւոր դատն աւարտ ստացաւ ինն տարի վերջ՝ 1854 նոյն իրան կոմսու-հու եւ իր անընկճելի պաշտպանի կատարեալ աջողու-թեամբ: 1848 թ. Վասսալն արդէն ամբողջովին մէջ մտաւ քաղաքական բուռն շարժումներում, աշխատակ-ցելով նաև Կարլ Մարքսի «Neue Rheinische Zei- tung» սօցիալիստական թերթին, որտեղ զետեղվում է-ին արդէն Ֆր. Էնգելսի, Ֆրէյլիգերաթի, Շապպէրի, Վօլ-ֆի եւ ուրիշ յայտնի սօցիալիստների գրութիւնները:

1849 թ. նոյեմբերին պրուսսական կառավարութիւ-նը սկսաւ վճռական կերպով գործել Ազգային Թողովի դէմ: Համբերութիւնը հատած՝ Թողովը հակառակ բւե-տից հարկերի (Steuerverweigerung) նկատմամբ կառա-վարութիւնը ստիպված էր ուժով հաւաքել հարկերը: Այդ ժամանակ յեղափոխականները ջանք էին անում զինել Թողովրդին ընդդիմադրութեան համար: Այդ իմաստով

յայտարարուած թիւնն էր ուղղեց Թողովրդին Կեօլն քաղաքում Մարքսը՝ Շապպէրի եւ Շնէյդէրի հետ, եւ հէնց այդ իմաստով էլ սկսաւ գործել Վասսալը Գիւս-տէլզօրֆում ու սրա շրջականներում: Այդտեղից ծագե-ցան կառավարութեան մի շարք հալածանքները բէյ-նեան ազիտատօրներին (գրգռիչների) դէմ: Գիւս-տէլզօրֆում ձերբակալվեց Վասսալը: Կա ամբաստան-վում էր «քաղաքացիներին թագաւորական իշխանութեան զէնքով ընդդիմադրելու գրգռման» մէջ: 1849 թ. մա-յիսին Վասսալը կանգնած էր Գիւստէլզօրֆի երգվեալ դատաւորների առջեւ: Այս անգամ էլ նա ինքն էր ի-րան պաշտպանում: Այդտեղ նրա ասած ճառը XIX-րդ դարու քաղաքական ամենանշանաւոր ճառերից մէկն է, որի մէջ համոզմունքի անյաղթ զօրութիւնը, խորին ա-տելութիւնը դէպի յետագիմութիւնն ու անսահման սէ-րը դէպի ազատութիւնը, երկաթէ տրամաբանութիւնն ու գաղափարների բարձրութիւնը միախառնված էին մի հազազիւտ, անկեղծ, փայլուն, զօրաւոր ճարտասանա-կան ձեւի հետ: Այդ ճառի ազդեցութիւնը դատարանի ու հասարակութեան վրա շատ մեծ էր: «Էս պէտք է անպարտ հռչակվեմ այստեղ միայն այն դէպքում, երբ ընդունվե, թէ զէնքի կոչելը Թողովրդի իրաւունքն է ու պարտականութիւնը»: Անողքը հեզնութեամբ նա հար-ուածում էր «խաղաղ դիմադրականներին», նրանց ըն-թացքն անուանելով «ստորաքարը», եւ յանցապարտ էր ներկայացնում թագաւորական գահը, որ ջախջախում է ազգի ազատութիւնները: Այդ ճառում նա արդէն եր-կարօրէն եւ զարմանալի փայլով ներկայացրեց իր պաշտ-պանած գաղափարներն ու սկզբունքները: Գատաստանը թէեւ նրան արձանագրեց իբրեւ «պատկանող սօցիալ-դեմօկրատական հանրապետութեան ամենավճռական կող-մընակիցների թւին», բայց եւ այնպէս արդարացրեց:

Սակայն պատժական ատենանք նրան մեղադրեց ոստիկանութեանը դիմադրելու մէջ եւ դատապարտեց վեցամսեայ բանտարկութեան:

Բանտում նա վերսկսեց իր գիտական աշխատութիւնները, որ շարունակեց բանտից դուրս գալուց յետոյ մինչեւ վաթսուներեակն թուականները: Այդ ժամանակամիջոցում նա հրատարակեց մի շարք գիտնական աշխատութիւններ, ի միջի այլոց, Հէրակլիտի մասին, որ նրան գիտնականի հռչակ տվեց, «Քրանց-Փոն-Չակինգէն» դրաման, որ նշանաւոր է իր քաղաքական թէօրիաներով, թէեւ տկար իբրեւ դրամա, «Իտալիայի պատերազմը եւ Պրուսիայի հոչումը», որ նուիրված է Իտալիայի ազատման խնդրին և որի մէջ նա ջերմ պաշտպան հանդիսանալով Իտալիայի գաւառների միացման եւ կազմութեան իբրեւ մի տէրութիւն, այդ միացումը համարում էր անհրաժեշտ նաեւ Գերմանիայի մանր իշխանութիւնների իրար հետ միութեան հասնելու համար, ինչ նա նկատում էր անհրաժեշտ գերմանական ժողովրդի առաջադիմութեան համար: Ապա լոյս ընծայեց մի բանի ուրիշ փիլիսոփայական, իրաւագիտական ու տնտեսագիտական աշխատութիւններ, որոնց մէջ միշտ արտափայլում են հեղինակի խորը գիտնականութիւնը եւ սօցիալիստական գաղափարները: Գրանց մէջ ամենանշանաւորներն են «Բանւորների պրոգրամմը» (Arbeiterprogramm), «Գիտութիւնը եւ բանւորները», «Կապիտալ եւ Աշխատանք» (Herr Bastiat-Schulze von Delitzsch oder Kapital und Arbeit), այս վերջինը լինելով նրա ամենագեղեցիկ աշխատութիւնը, որի մէջ նա գիտնական դրութիւններով քննադատում ու իսպառ ջախջախում է բուրժուազական տնտեսագիտական թէօրիաները եւ արտասովոր ուժեղ տրամաբանութեամբ հաստատում սօցիալիստական տնտեսագիտական թէօրիաների

գիտականութիւնը:

Այդ ժամանակամիջոցում սակայն Վասսալը չէր կարող բաւականանալ միմիայն իր գրասեղանի առջեւ նստած աշխատելով եւ առիթներ էին յայտնվում, երբ նա հրատարակային ճառեր էր խօսում հասարակական ու քաղաքական նիւթերի մասին եւ յարձակվում էր բուրժուազիայի վրա, իբրեւ մի դասակարգի, որ քաղաքականապէս ու տնտեսապէս շահագործում է բանւորներին: Հէնց այն ժամանակը, երբ պրուսսական Ազգային Ժողովի ու կառավարութեան մէջ միջադէպք է տեղի ունենում զօրքի նոր կազմակերպութեան մասին, Վասսալը հրատարակ է դուրս գալիս իր մի ճառով, որի մէջ յարձակվելով բուրժուազիայի վրա եւ ցոյց տալով նրա սխալներն ու վախկոտութիւնը, անց է կացնում մի գիտական թէօրիա սահմանադրական յարաբերութիւնների մասին: Այդ նշանաւոր ճառում, որ ստորև թարգմանօրէն ներկայացնում է նրա հայ հասարակութեան — «Սահմանադրութեան էութեան մասին», — Վասսալն ապացուցանում է, որ իւրաքանչիւր երկրի քաղաքական կազմակերպութիւնը գոյանում է, պայմանաւորվում է նոյն երկրի ազգաբնակչութեան այլ եւ այլ դասակարգերի ու խաւերի ոյժի միմեանց հետ ունեցած յարաբերութիւններով: Գրված սահմանադրութիւնն այդ է ներկայացրելով: «Երբ որ փոխվում են զանազան դասակարգերի ունեցած ոյժի իրական յարաբերութիւնները, դրա հետ անպատճառ պէտք է փոխվէ նաեւ քաղաքական կազմութիւնը, եւ ոյժի նոր յարաբերութիւնների հիման վրա էլ կազմվելով քաղաքական նոր կազմութիւն, պէտք է գրվէ եւս մի նոր՝ դրանց համապատասխան՝ սահմանադրութիւն, հինը լինելով արդէն անպէտք փախա: Բայց ո՞րն է այն հիմնապատճառը, այն պայմանը, որ այդ ոյժի յարաբերութիւնների մէջ փոփոխութիւն է ա-

ուղացնում: Լաստալը պատասխանում է, թէ դա ժողովրդներին կենսքում կատարվող տնտեսական կերպարանափոխութիւնն է: Օրինակ, միջին դարերում ազգային հարստութեան ամենագլխաւոր աղբիւրը հողն էր, եւ այդ պատճառով հողատէր աղւաւանութիւնը բնական կերպով հանդիսանում էր տիրապետող դաս: Յարաբերութիւնների մէջ իրական ոյժը նրա կողմն էր: Երբ որ մեծացան ու զարգացան բաղաբները՝ ոյժի յարաբերութիւնները փոխվեցան, որովհետեւ քաղաքները նախ սկսան նեցուկ լինել միապետութեան, որ զսպում էր աւատական իշխանների կռիւները: Բայց որքան աւելի է զարգանում արդիւնաբերութիւնը, նոյնքան աւելի են մեծանում, առատանում ու աճում միջին դասի ոյժը ու կրթութիւնը, և այդ դասը վերջապէս գալիս է այն կէտին, որ խիստ կերպով ընդհարվում է միապետութեան հետ. «հասարակութեան մէջ ծագում է 1848 թ. Մարտ 18-ը» ընկնում է միահեծան, բացարձակ միապետութիւնը, առաջանում են ոյժի նոր յարաբերութիւններ, գրվում է նոր սահմանադրութիւն եւ այլն: Այսպէս, գրված սահմանադրութիւնը երկրում գոյութիւն ունեցող ոյժի իրական յարաբերութիւնների, իրական սահմանադրութեան արտայայտութիւնն է: Ուրեմն, որպէսզի գրված սահմանադրութիւնը լինի լաւ ու հաստատուն, պէտք է համապատասխան լինի երկրում գոյութիւն ունեցող ոյժի իրական յարաբերութիւններին, այդ իրական սահմանադրութեան: Եթէ չլինի այդ համակշռութիւնը գրվածի և իրականի մէջ, ոչ մի միջոցով ոչ մի խօսքով այլ եւս չէ կարելի պահպանել գրված սահմանադրութիւնը: Կրեթի վիճակի, ոյժի իրական յարաբերութիւնների որոշ փոփոխութիւնն անպատճառ պահանջում է իր իմաստի համապատասխան սահմանադրութիւն. իսկ ոյժի իրական յարաբերութիւններն

ի հարկէ, կարող են փոփոխվել միմիայն իրանց ներքին բնական տրամաբանութեան, իրանց ընդհանուր զարգացման պատմական ընթացքի համեմատ եւ ոչ այլ կերպ:

Ահա «Սահմանադրութեան էութեան մասին» խօսված ճառի գիտական հիմքը եւ գլխաւոր իմաստը:

1848 թ. Լաստալը հիմնեց «Բանւորների ընդհանուր գերմանական ընկերութիւնը», որի նպատակն էր ձրգտել զէպի սօցիալիզմի յաղթութիւնը: Այդ ընկերութեան նախագահն ինքը լինելով, 1864 թ., մեկնելով զէպի Շվեյցարիա, նախագահ հաստատեց իր բարեկամ Օտտօ Գամերին եւ նոյն թւի յունիս ամսում Ֆրանկֆուրտ քաղաքում մի ժողովոյցային միտինգում (ժողովում) մի մեծ ու նշանաւոր ճառ խօսեց, ու մէկ ամբողջ յաղթանակ էր սօցիալիզմի համար: Գատապարտված մի տարի բանտարկութեան իր մի բրօշուրի համար, որ հրատարակել էր 1863 թ., նա միջամտեց և մի կերպ կարողացաւ դատապարտութեան միջոցն իջեցնել մինչեւ վեց ամիս, և ապա մտածեց բանտ մտնել ձմեռը, իսկ ամառն անցաւ զէպի Աիլդբադ քաղաքը: Այդտեղ նա հանդիպեց մէկ անգլիացի կնոջ՝ մի երիտասարդ աղջկայ հետ՝ Հէլէն դը Գեօնիգէս, դուստր բավարական մի դիպլոմատի (գիւանագէտի): Լաստալն այդ ժամանակ 38 տարեկան էր: «Բարձրահասակ, նուրբ, գունատ, նիհար», — պատմում է նրա կենսագրողներից մէկը. — «նրա սեւ աչքերը հրալի էին, նուրբ ու հըպարտ պրօֆիլով վառվռուն խօսակից եւ երբ նա ոգեւորվում էր, ունէր մի յափշտակող ճարտասանութիւն: Աինքը նրան հաւանում էին, ինքն էլ նրանց ոչ պահաս: Օրիորդ դը Գեօնիգէսը շէկ, երազող, զգայուն, մեղամարդիկ էր, յատկութիւններ, որ Լաստալը շատ սիրում էր: Քիչ վերջը նրանք միմեանց սիրեցին եւ երգ-

վեցան անպատճառ ամուսնանալ: Յետագայ օգոստոս ամսին Վասսալը գնաց Շվեյցարիայի Ժընեվ քաղաքը, ուր գտնվում էր սիրած օրիորդն իր ծնողների հետ միասին: Վասսալն ուզեց գնալ այցելութեամբ օր. Գեօննիգէսի հօր մօտ եւ խնդրել նրա ազնկայ ձեռքը: Գիպլոմատը նրան չընդունեց, անիծեց աղջկան եւ երգվեց, որ երբէք չը պիտի համաձայնէ այդ ամուսնութեան: Հէլէնը յուսահատված խոյս տվեց տանից եւ գնաց Վասսալի մօտ, խնդրեց նրանից փախցնել իրան: Բայց նա ուզում էր բացարձակ կերպով ներս մտնել Գեօննիգէսի ընտանիքում, եւ Հէլէնին տարաւ ու յանձնեց նրա մօրը: Փօքը-ինչ պաղած Վասսալի այդ քայլից՝ երիտասարդ աղջիկը թոյլ տվեց, որ իրան տանեն Ժընեվից՝ «յուսահատված, բայց հպատակված»: Այդ անպատելի լուրը Վասսալին մինչեւ խելագարութիւն կատարեցրեց: Նա չէր հաւատում, թէ Հէլէնն իրանից պաղել եւ հպատակվել է ծնողին եւ պնդում էր, թէ նրան հայրն է փախցրել հակառակ նոյն իրան Հէլէնին: Նա ուզեց աղղել դիպլոմատի վրա, ստացաւ այդ նպատակով մի յատուկ թուղթ Միւնխէնի արտաքին գործերի մինիստրից (նախարարից): Կոմսուհի Հացֆելդն էլ իր կողմից գնաց Մոյէնս քաղաքի արքեպիսկոպոսի մօտ միջամտութիւն խնդրելու: Արքեպիսկոպոսը մեծ գովեստներով վերաբերվեցաւ դէպի Վասսալի տաղանդը, նրա գիտական աշխատութիւններն ու սօցիալիստական պրօպագանդան, թէեւ անհամաձայն նրա թէօրիաների հետ: Բայց ինչպէս ամուսնացնել մի քրիստոնեայ աղջիկ մի հրէայի հետ, եւ նա առաջարկեց, որ Վասսալը փոխէ իր կրօնը, ասելով, թէ այդ դէպքում գուցէ աջողութիւն լինի: Բայց արդէն ուշ էր: Հէլէնը շտապով վճռել էր ամուսնանալ մի վախի երիտասարդ բօյարի, բարօն Եանկօ զը Ռակօվիցայի հետ եւ զրա մասին նոյն

ինքը հաղորդեց Վասսալին: Ամեն ջանք, կրակոտ, անհամբեր, համոզող նամակներ, հեռագիրներ՝ Վասսալի կողմից ուղարկված աղջկան— ոչինչ չօգնեց: Նա շտապեց Ժընեվ, որտեղ այդ ժամանակները գտնվում էր Հէլէնը եւ ուզեց այս վերջինի հետ տեսակցութիւն ունենալ: Հէլէնը մերժեց: Խիստ խայթված՝ Վասսալը վերաւորիչ ոճով բաւարարութիւն պահանջեց Հէլէնի հօրից: Գիպլոմատին փոխարինեց զը Ռակօվիցա, որի երկու վկաները պահանջեցին Վասսալից վերադարձնել Հէլէնից իր ստացած նամակները: Վասսալի վկաները վճռական կերպով մերժեցին: Այդ ժամանակ որոշվեցաւ մենամարտել: 1864 թ. ապրիլի 28-ին տեղի ունեցաւ մենամարտութիւնը Ժընեվի մօտ Կարուժ կոչված փոքրիկ քաղաքի մօտերքը: Առաջին փոխադարձ կրակից Վասսալն ընկաւ մահամերձ վիրաւոր: Երեք օրից յետոյ նա վախճանվեց: Խրսերտ բարեկամուհի տիկին զը Հացֆելդը նրա մարմինը տարաւ Գերմանիա: Մարմին այդ գնացքը մի յաղթական թափօր էր ամբողջ ճանապարհին: Երբ որ անցնում էին Մայէնսով կազմվեց մի մեծ ու շքեղ ծիսակատարութիւն: Վախենալով այն մեծ իրարանցումից, որ այդ ցոյցերն առաջացել էին սօցիալիստական կուսակցութեան մէջ Կօլօն քաղաքում, յանուն Վասսալի ընտանիքի, ոստիկանութիւնը դրաւեց հանձարեղ ագիտատօրի դագաղը եւ տարաւ նրան Բրէսլաու, ուր թաղվեցաւ նա հրէական գերեզմանոցում:

«Պալեստոր քաղաքներում բանւորական ընկերութիւնները ցանկացին պատել նրա իշատակը թաղման ծիսակատարութիւններով, որոնց մէջ մեծ տրիբունը ներկայացվեց իբրեւ սօցիալիզմի նա հատակն ու սուրբը: Տպաւորութիւնն այնքան խոր էր, որ ժողովրդի մէջ շատ-շատերը կարծեցին եւ կարծում են այժմ էլ, թէ նա մեռած չէր եւ թէ նա կը վերագառնայ իր

փառքի մէջ իբրեւ Մեսսիա՝ նախագահելու մեծ յեղափոխութեան եւ մարդկային հասարակութեան վերակազմակերպութեան:»

## VII

Աւարտելով մեր ընդհանուր համառօտ տեսութիւնը սօցիալիզմի պատմականի վրա, որպէս և Ֆէրդինանդ Լասսալի գործունէութեան, կեանքի ու նրա ներկայ «Ճառի» իմաստի մասին, անցնենք այժմ խօսելու ընդհանուր հայութեան արդի պատմական վիճակի ու դատի մասին: Գժբազդաբար, տեղի սղութեան պատճառով մեր այս տեսութիւնը կը լինի դարձեալ համառօտ:

Մոյն առաջաբանում մեր յայտնած գաղափարներից եկանք, ի միջի այլոց, նաեւ այն եղրակացութեան, թէ մի ժողովոգի մէջ կեանքի հասարակական-քաղաքական պայմանների փոփոխութեան պահանջ ծագում է միայն այն ժամանակ, երբ նրա կեանքի անտեսական պայմաններում սկսում է առաջանալ օրգանական, ներքին փոխոխութիւն: Տնտեսական, նիւթական պայմանները միշտ պահանջում են իրանց իմաստի համապատասխան քաղաքական-հասարակական պայմաններ, կառուցվածք: Կրթ այս վերջիններն այլ եւս յայտնվում են արգելք, խոչընդոտ անտեսական նոր, ծագող պայմանների բնական ընթացքի, բնական զարգացման համար, անխուսափելի կերպով նրանք պէտք է ընկնեն, պէտք է վերանան:

Տնտեսական այդպիսի մի ներքին կերպարանափոխութիւն կատարվում է այժմ ընդհանուր հայութեան մէջ: Ամբողջ հայութիւնն իր անտեսական պայմաններով ներկայումս գտնվում է այդպիսի պատմական բողոքով, երբ այդ պայմաններն աւելի ու աւելի քայքայվում են եւ տեղի տալիս նոր պայմանների: Գիւղական մանր

սեփականատիրութիւնն ու անտեսութիւնը՝ գնալով աւելի ու աւելի կորցնում են իրանց նախկին մեծ ծաւալից: Խրված անվճարելի պարտքերի մէջ, ծանրաբեռնված հարկերով, որոնց սիստեմը (եղանակը) միանգամայն աւերիչ է եւ հարուած հարուածի վրա է հասցնում գիւղական արդիւնաբերութեան, աւելի ու աւելի սահմանափակելով գիւղացու ձեռքով մշակված հողի ծաւալն ու նուազեցնելով օր. թիւրքաց Հայաստանում, արդիւնաբերութեան քանակութիւնը, հարկերի հատուցումը լինելով դրամապէս, միևնույն դրամի խիստ պակասութիւն միւս կողմից, — այդ պայմաններում հողն իրապէս դարձել է գիւղացու համար ոչ միայն ծանր բեռ, որ չէ տալիս ոչ մի շահ, այլ եւ մի չարաբաստիկ գործիք, որ ծառայում է միայն շահագործողներին — կառավարութեան, կալուածատէրերին, վաշխառուներին, պաշտօնեաներին: Եւ այդ հողն աւելի ու աւելի ընկնում է գիւղացու ձեռքից, անցնելով կամ վաշխառու, վաճառական, ունեւոր, կալուածատէր գասակարգի ձեռքը եւ կամ ընկած անմշակ: Գիւղացիներն էլ շարունակ թողնում են իրանց հօրենական արհեստը, թողնում հողը եւ պանդխտում դէպի արդիւնաբերական քաղաքները, որտեղ նրանք ուրիշ գործ չեն կարող անել, եթէ ոչ միայն գտնել գործ օրավարձով: Նրանք դառնում են այդպիսով վարձու բանւորներ: Ճիշդ է, որ այդպիսիներից շատերը տակաւին բոլորովին չեն կորցրած իրանց հողը, որ ժամանակի ընթացքում է միայն կամաց-կամաց ընկնում վաշխառուի, կալուածատէրի, վաճառականի ձեռքը պարտքերի փոխարէն, բայց դա միայն ժամանակի խնդիր է: Բացի այդ, ճիշդ է, սակայն, որ կան, ընդհակառակն, ամբողջ գաւառներ էլ ուր գիւղացիների մէջ զգացվում է հողի խիստ պակասութիւն եւ կամ ուր գիւղացին սեփական հող չունի իսկապէս,

այլ աշխատաւ որ է կալուածատէրերի մօտ: Կրողութիւնըն այն է, որ գիւղացիներից շատերն արդէն կորցրել են իրանց հողը, ուրիշները կորցնելու վրա են, մինչդեռ դրանց հաշին վաստակում են գիւղացի դասի բարեկեց փոքրամասնութիւնը եւ ունեւոր դասակարգը: Այդ ամբողջ պրօցէսը պատմականօրէն անխուսափելի է իբրեւ հետեւանք մի կողմից հայութեան մէջ մուտք գործող արգիւնաբերական աւելի կատարելագործված միջոցների, որ գտնվում են ունեւոր դասակարգի ձեռքը եւ միւս կողմից կառավարութեան այն հարկային ու ֆինանսական սիստէմի, որ տիրապետում է նրա մէջ: Այդպիսով գիւղացի դասի մի մասը, միշտ աւելի ու աւելի աճող քանակութեամբ, ստիպված է լինում իր ապրուստը հայթայթելու համար, իր պարտքերը վճարելու յուսով, պանդխտել արգիւնաբերական քաղաքներ եւ շարունակ բազմացնել վարձու բանւորների, պրօլէտարիատի թիւը, որ արդէն ուղղակի կերպով գտնվում են գործարանատէրերի, կալուածատէրերի եւ առհասարակ ունեւոր դասակարգի անմիջական ու խիստ շահագործութեան տակ: Այդպիսով հայութեան մէջ առաջանում է մի նոր դասակարգ, որ այսօր գտնվելով իր սկզբնաւորութեան մէջ, ժամանակի ընթացքում, առեւտրականութեան ու արգիւնաբերութեան աւելի զարգացման շնորհով մեր մէջ, երեւան կը գայ իբրեւ արդէն լիովին կազմված մի դասակարգ, բանւոր, պրօլէտարիատ դասակարգ, որ իր տրեստեսական շահերով կատարելապէս հակառակ է ունեւոր դասակարգին: Միւս կողմից նոյն շաղկի վրա է նաեւ արհեստաւոր դասը, որ եւրոպական ու ներքին արգիւնաբերութեան մեքենայական սիստէմի դէմ մրցել անկարող լինելով այժմ արդէն քայքայվում է եւ շարունակ աւելի քայքայվելով, դարձեալ անցնում է պրօլէ-

տարիատի շարքը: Արգիւնաբերական քաղաքներում արդէն հիմա էլ տասնեակ հազարների են համնում հայ վարձու բանւորների թիւը:

Պողոթնի ստորին խաւերի անտեսական պայմանները պատճառ լինելով նոյն այդ խաւերի շարունակ քայքայման եւ կամաց-կամաց նրանցից կազմելով մի նոր դասակարգ՝ մի կողմից, միւս կողմից, ընդհակառակն, նպաստում են մէկ ուրիշ դասակարգի կազմութեան եւս, դասակարգ խոշոր վաճառականների, կալուածատէրերի, գործարանատէրերի, բանկատէրերի, մի խօսքով, ունեւորների, բուրժուազիայի: Եւ մինչդեռ գիւղացի դասը շարունակ քայքայվում ու աւերում է, բուրժուա, ունեւոր դասակարգն, ընդհակառակը, անդադար զօրանում է նոյն այն առաջին դասի հաշին, եւ, թէեւ համեստ շրջանակում, որքան այդ թոյլ են տալիս տիրապետող աւելութիւնների միապետական կարգերը, աւելի ու աւելի է ձեռք բերում յայտնի առանձնաշնորհումներ, արօնութիւններ, լինի դա թիւրքաց շայաստանում, լինի Ռուսաստանում-Աովկասում: Այդ նոր զօրացող դասակարգն անդադար աւելի ու աւելի է գտնվում ժողովրդի ստորին խաւերից, ընդունում է աւելի որոշ կերպարանք, ներկայանում է հասարակութեան մէկ ինքնուրոյն մասը, որ իր անտեսական շահերով ուղղակի հակառակ է ժողովրդային ընդհանրութեան առհասարակ եւ բանւոր դասակարգին մասնաւորապէս: Շահագործել շահագործել աւելի ու աւելի խիստ կերպով ժողովրդային աշխատաւոր ընդհանրութեանը — ներքի: Իմաստը, ձգտումն ու տէնդէնցիան է բուրժուա, ունեւոր դասակարգի: Արգիւնաբերութեան միջոցները, որ աւելի ու աւելի են անցնում նրա ձեռքը, աշխատաւոր ընդհանրութեանը ենթարկում են այդ շահագործութեան եւ տեղի տալիս խիստ հակառա-

կուլթեան այդ երկու դասակարգերի մէջ: Որքան աւելի զարգանայ մեր մէջ արդիւնաբերութիւնը, որքան նա ընդունէ խօշոր կերպարանք — գործարանական ու կալուածատիրական, — նոյնքան աւելի կը վերանայ գիւղական մանր սեփականատիրութիւնը, աւելի ու աւելի տեղ տալով խոշոր սեփականատիրութեան, նոյնքան աւելի կը քայքայվէ արհեստաւոր դասն իր փոքրիկ արհեստանոցով, ուր ինքն աշխատաւոր է, աւելի ու աւելի տեղ տալով գործարաններին: Գործարան ու խոշոր սեփականատիրութիւն, մի խօսքով, խոշոր արդիւնաբերութիւն ասելը նշանակում է ասել մեքենայագործ արդիւնաբերութիւն: Իսկ արդիւնաբերութեան այդ գործիքները — մեքենայ, ընդարձակ հող, գործարան — ունենալու համար պահանջվում է նիւթական մեծ յոյժ, կապիտալ, որ գտնվում է միայն ունեւոր դասակարգի ձեռքը: Ռ'րեմն, խոշոր արդիւնաբերութեան զարգացումն առաջացնում է ունեւոր դասակարգի աւելի զօրացում ու զարգացում, իսկ այս վերջինի աւելի զարգացումը, հետեւաբար, պէտք է զարգացնէ պրոլետարիատի թիւը, գիւղացի ու արհեստաւոր դասերին ջախջախելով իր նիւթական աւելի մեծ զօրութեամբ, շահագործելով նրանց եւ միւս կողմից իր գործարանների մէջ, իր հողերի վրա վարձու բանւորների աշխատանքի պէտք ունենալու պատճառով:

Պա է այն պատմական բնական պրօցէսը, որ ըսկսել է տեղի ունենալ հայութեան մէջ եւ որի առաջադիմական ընթացքն անխուսափելի է եւ միեւնոյն ժամանակ ինքն էլ պայման հայութեան ընդհանուր առաջադիմութեան: Հայութեան մէջ ծագող անտեսական այդ նոր յարաբերութիւններն իրանց շարունակ զարգացումով ազդին աւելի ու աւելի կը զատեն երկու մասի, երկու դասակարգի վրա, բուրժուա եւ պրոլետա-

րիատ, որոնք հէնց այժմ, իրանց կազմութեան ներկայ սկզբնաւորութեան մէջ, ունեն միմեանց հակառակ տրնտեսական շահեր, որ՝ դնալով՝ աւելի ու աւելի կորոշվեն եւ վերջը կառնեն արդէն սուր կերպարանք:

Այդ սակայն մի քաղաքական պահանջ, որ ընդհանուր է հայ ունեւոր դասակարգին եւ ժողովրդային ընդհանրութեան շահերի համար: Այդ պահանջն է միապետական կարգերի ոչնչացումը, որոնք իրանց կառավարչական, հարկային ու ֆինանսական սխտէմներով (ձեւերով) վերոյիշած երկու դասերի զարգացման ու շահերի համար էլ արդելք են, աւերիչ են, ֆնասակար են եւ իրանց էութեամբ անհամապատասխան են հայութեան մէջ ծագող անտեսական նոր յարաբերութիւններին: Սրանք այլ եւս պահանջում են հասարակական-քաղաքական նոր, բոլորովին տարբեր կարգեր՝ համաձայն այդ նոր յարաբերութիւնների էութեան, ներքին տրամաբանութեան: Ահա հէնց այդ նոր յարաբերութիւններն են, որ պատմական բեմի վրան են հանել մի հայկական դատ, որը հայութեան անտեսական եւ դրա զօրութեամբ, ուրեմն, նաեւ քաղաքական-հասարակական ընդհանուր առաջադիմութեան ու զարգացման դատ է: Այդ դատն այսօր լուծման մի միակ ճանապարհ ունի — հայութիւնը պէտք է ձեռք բերէ քաղաքական ազատութիւններ, կառավարչական սահմանադրական կարգեր, իբրեւ անհրաժեշտ միջոց, որ անտեսական ծագող կերպերն են պահանջում իրանց զարգացման համար: Հայկական դատն այսօր յեղափոխական գործ է առաջացրել հայութեան մէջ եւ այդ յեղափոխութիւնը քաղաքական է, այսինքն նրա անմիջական նպատակն ու հետեւանքն է՝ յեղափոխել հայութեան վրա տիրապետող քաղաքական կարգերը:

Հայութեան ներկայ տնտեսական իրականութեան միջոցին եւ պատմական այդպիսի բուսական, ինչո՞ւմ է կայանում այն հայերի, այսինքն սօցիալիստների, մարքսիստների, գործունէութիւնն ու դերը, որ առաջնորդ-վում են միմիայն ժողովրդային աշխատաւոր ընդհանրութեան շահերով, որոնք պաշտպան են այդ ընդհանրութեան տնտեսական, քաղաքական ու սօցիալական պատմական ձգտումներին: Հայ սօցիալիստները պէտք է ձգտեն ձեռք բերել ընդարձակ քաղաքական ազատութիւններ, սահմանադրական ազատութիւններ, որոնք են միայն համաձայն ժողովրդային ընդհանրութեան ներկայ շահերին, ինտերէսներին եւ սչ թէ այնպիսի սահմանադրական դրութիւն, որ ի վերջոյ դառնայ միմիայն այլ եւ այլ քաղաքական, տնտեսական առանձնաշնորհումների ու արտօնութիւնների կարգեր յօդուտ հայութեան միայն ունեւոր ու վարիչ դասակարգերի: Ժողովրդային ընդհանրութիւնը պէտք է ձգտէ ձեռք բերել իրան համար քաղաքական ընդարձակ իրաւունքներ, որոնք ամեն-մի հայ չափահաս քաղաքացուն միջոց տան ուղղակի կերպով լինելու ընտրող ու ընտրելի կառավարչական մարմիններում եւ Օրէնսդիր Ժողովում (Վրդային ընդհանուր ժողովում), որպէս զի ժողովրդային աշխատաւոր ընդհանրութիւնը կարողանայ ուղարկել իր ներկայացուցիչներին: Արեւմտ, Օրէնսդիր ժողովը պէտք է լինի հանրաժողովրդային: Ընդհանուր և ուղղակի ընտրութեան իրաւունք, որից էլ կախված են մամուլի, խղճի, խօսքի, գումարման, ընկերութիւնների եւ այլ քաղաքական ազատութիւններ—ասա թէ որոնք պէտք է լինեն այսօր մեր քաղաքական ամենագլխաւոր պահանջները՝ համաձայն ժողովրդային ընդհանրութեան քաղաքական շահերին:

Ունենալով այդպիսի քաղաքական անմիջական պահանջներ, որ պահանջներն են ժողովրդային ընդհանրութեան շահերի, ի՞նչ աշխատութիւններով պէտք է ձգտէ հայ սօցիալիստը նրանց իրագործման: Մենք գիտենք ազգերի պատմութիւնից, որ ամեն-մի յեղափոխական պատմական բուսական ժողովրդային ընդհանրութիւնն է, ժողովուրդն է յեղափոխութեան անհրաժեշտ ու ամենաառաջնակարգ ոյժը, ժողովուրդն է, որ թափել է իր արիւնը, մոռացել է իր անձը, նահատակվել է պատերազմներում եւ իր հզօր բազուկով ազգերի համար բացել ճանապարհ դէպի առաջագիմութիւն, դէպի զարգացում, դէպի ազատութիւն: Բայց սակայն իրան բաժին միշտ հասել է թշուառութիւն. տիրապետել է նրան օտարը, տիրապետել է նրան իր «հարազատ» թագաւորը, իր ազգի ազնւականութիւնը, տիրապետել են նրան ունեւոր ու վարիչ դասակարգերը — միշտ նա ինքը եղել է այդ ամենի կաթնատու կովը եւ այն զէնքը, որ այդ տիրապետող դասակարգերը գործածել են իրար դէմ մղած կռիւններում: Երբեք չէ եղել օրինակ, որ յեղափոխութիւնն անողն ու յաղթանակողը չը լինի ժողովուրդը, բայց նրա այդ ընթացքից օգտվող գրեթէ միշտ եղել են ուրիշ դասակարգեր: Ներկայ պատմական բուսական ժողովուրդն ընդհանուր առմամբ կարող է պէտք է գիտակ լինի իր շահերին, իր օգտին, իր պատմական դերին: Ի՞նչ կարող ենք եզրակացնել դրանից: Հետեւեալը.— որքան ներում են հանգամանքները տալ ժողովրդի ձեռքն այնպիսի զէնք, որ նպաստաւոր է նրա շահերին: Ներկայումս այդ զէնքն է, որ հայ սօցիալիստը պէտք է տայ հայ ժողովրդային աշխատաւոր ընդհանրութեան: Բացատրել աշխատաւոր ընդհանրութեան իր պատմական դերը, իր սօցիալական-քաղաքական խնդիրներն ու շահերը, զարգացնել նրա դասա-

կարգային գիտակցութիւնը, լուսաբանել ու որոշել նը-  
րան իր բաղաբաղան իւրաքանչիւր պահանջը եւ այդ-  
պիսով դարձնել կողմնակից նրան իր շահերի համա-  
պատասխան յեղափոխութեան, պատրաստել նրա այդ  
անելիք յեղափոխութիւնը, եւ պրօպագանդայի ու ա-  
գիտացիայի հետ միաժամանակ համախմբել ու կազմա-  
կերպել նրա օյժերը մէկ ընդհանուր կազմակերպու-  
թեան մէջ ընդհանուր ապստամբութեան համար—ահա  
հայ սօցիալիստի, հայ յեղափոխականի բռնելիք ընթաց-  
քըն ու աշխատութիւնները:

Այդ ընթացքով ժողովրդային աշխատաւոր ընդ-  
հանրութեան ճշմարիտ պաշտպանները, հայ սօցիալիստ-  
ները, մի կողմից պատրաստելով նրան ընդհանուր ա-  
պրստամբութեան համար յանուն բաղաբաղան ուսմա-  
վարական սահմանադրութեան, միւս կողմից կը կատա-  
րեն մի բուն սօցիալիստական գործ. հայ բանւորներից,  
այդպիսով, նրանք պատրաստում են, կազմակերպում են  
“ապագայի դիմադրական կուսակցութիւնը”, որին ձեռք  
բերած ուսմավարական սահմանադրական պայմանները  
“կը ծառայեն իբրեւ գործիք” մղելու համար՝ միապե-  
տական կարգերի անկումից անմիջապէս յետոյ՝  
իր դասակարգային կռիւր շահերով իրան հակառակ իշ-  
խող դասակարգերի դէմ եւ ձգտելու այլ եւս իր  
անմիջական նպատակ դարձած սօցիալիս-  
տական կազմակերպութեան հաստատութեան:

Ահա այդպիսի գործունէութիւն ու ընթացք ու-  
նենալով, հայ յեղափոխականները կարող են ասել բար-  
ձրօրայն — Մենք ժողովրդի համար ենք, ժողո-  
վուրդն էլ մեզ հետ է եւ ժողովրդի արած յե-  
ղափոխութիւնը կը լինի նրա յաղթանակը:

Ս Ա Հ Մ Ա Ն Ա Գ Բ Ո Ւ Թ Ե Ա Ն  
ԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

ՃԱՌ՝ ԽՕՍՎԱԾ ԲԵՐԼԻՆՈՒՄ՝  
ԲԱՂԱԲԱՅԻՆԵՐԻ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ  
1862 Թ.

Պարոններ.

Ջրաւիրված լինելով սոյն յարգելի ժողովում ճառ  
խօսելու, ես ընտրեցի մի նիւթ, որն իբրեւ լիովին ժա-  
մանակակից, արդէն ինքն ըստ ինքեան պէտք է արժա-  
նանայ ձեր ուշադրութեան: Ես կը խօսեմ սահմա-  
նադրութեան էութեան մասին:

Նախ պէտք է նկատեմ պարոններ, որ իմ ճառը պէտք  
է լինի կատարելապէս գիտական: Այդուամե-  
նայնիւ, կամ աւելի ճիշդ՝ հէնց այդ պատճա-  
ռով ձեզնից իւրաքանչիւրը կը կարողանայ սկզբից մին-  
չեւ վերջ հետեւել ու լիովին հասկանալ նրան:

Որովհետեւ, պարոններ, ճշմարիտ գիտական-  
նութիւնը — արժէ յիշեցնել այդ — կայանում է ոչ  
այլ ինչում, եթէ ոչ մտքի այն պարզութեան

մէջ, որը՝ առանց նախապէս ենթադրութիւններ անելու՝ քայլ առ քայլ ամեն բան դուրս է բերում ինքն իրանից եւ այդ պատճառով էլ անյաղթելի կերպով տիրանում է ամեն-մէկ ուշադիր ունկնդրի խելքին:

Մտքի այդ պարզութիւնը պէտք չունի ոչ մի կ ա ն խ ա կ ա լ համոզումների ունկնդիրների կողմից: Ընդհակառակն, ինչպէս ասացի, կայանալով ոչ այլ ինչու՞մ, եթէ ոչ ամեն կանխակալ ենթադրութիւնների կատարեալ բացակայութեան մէջ եւ ամեն բան էլ դուրս բերելով ինքն իրանից, նա չէ կ ա Ր Ո Ղ տ ա ն ե լ կանխակալ համոզումներ: Նրա պահանջն էլ հէնց այն է, որ ունկընդիրներն իրանց հետ չը բերեն արդէն նախապէս կազմված՝ հաստատ կարծիքներ. որ նրանք որքան էլ յաճախ մտածած ու դատած լինէին նիւթի մասին, այդուհանդերձ այժմ ն ո Ր ի ց սկսէին ուսումնասիրել նրան, իբրեւ թէ դեռ եւս ոչինչ որոշ ու հաստատ բան չգիտեն նրա մասին. որ նրանք գոնէ ուսումնասիրելու միջոցին մի կողմ թողնեն այն բոլորն, ինչ սովորել են մտածել այդ նիւթի վրա:

Այսպէս, այժմ ես սկսում եմ ճառս այս հարցով. ինչ է սահմանադրութիւնը. ինչու՞մ է կայանում սահմանադրութեան էութիւնը:

Ներկայումս ամեն մարդ առաւօտից մինչեւ ուշ երեկոյ խօսում է սահմանադրութեան վրա: Բոլոր լրագիրներում, բոլոր շրջաններում, բոլոր պանդոկներում խօսքը հէնց միմիայն սահմանադրութեան մասին է:

Սակայն եթէ ես լըջօրէն հարցնելու լինեմ, թէ ինչու՞մ է կայանում սահմանադրութեան էութիւնը, իմաստը, խիստ երկիւղ եմ կրում, որ այդ բաղձաթիւ դատողներից շատ բիչերը միայն ընդունակ կը լինեն բաւարար պատասխան տալու:

Եւ ատերն այդ հարցը տրված միջոցին պէտք կը գան

ընկնելու պրուսական օրէնքների 1850 թ-ի ժողովածուի վրա եւ նրանից տեղեկանալու պրուսական սահմանադրութեան մասին:

Բայց դուք տեսնում էք, որ դա պատասխան չէ իմ հարցիս: Այդ ժողովածուի մէջ չէ որ ամփոփված է միայն առանձին պարունակութիւնը ը յայտանի, այն է պրուսական սահմանադրութեան, եւ ուրեմն նա չէ կարող տալ պատասխան այն հարցին թէ՛ ի՞նչու՞մ է կայանում սահմանադրութեան էութիւնը, հասկացողութիւնն առհասարակ:

Եթէ այս հարցն առաջարկելու լինեմ մէկ իրաւաբանի, նա ինձ կը պատասխանէ այսպէս. «Սահմանադրութիւնն անուանվում է այն պայմանագիրը, որ երգումով կապվում է թագաւորի ու ժողովրդի մէջ եւ որով որոշվում է երկրի օրէնսդրութեան ու կառավարութեան հիմնական սկզբունքները:» Կամ որովհետեւ կան եւ հանրապետական սահմանադրութիւններ, նա կը պատասխանէ՝ աւելի ընդհանուր որոշում տալով. «Սահմանադրութիւնը երկրում յայտարարված հիմնական օրէնքն է, որով այդ ազգի մէջ հաստատվում է հասարակաց իրաւունքի կազմակերպութիւնը:»

Բայց բոլոր այս եւ սոյնանման ձեւական, իրաւաբանական բացատրութիւնները նոյնքան հեռի են իմ հարցի իսկական պատասխանից, որքան եւ նախորդ պատասխանը: Գրանք բոլորը տալիս են միայն արտաքին նկարագրութիւնն այն բանի, թէ ինչպէս է կ ա զ մ Վ ու մ սահմանադրութիւնը եւ ի՞նչ է ա ն ու մ ն ա, առանց բացատրելու, թէ ի՞նչ է սահմանադրութիւնը: Նրանք տալիս են միայն կրիտիկական, յատկանիշներ, նշաններ, որոնցով կարելի է արտաքուստ ու իրաւաբանական կերպով ճ ա ն ա չ ե լ սահմանադրութիւնը: Բայց նրանք չեն ասում մեզ, թէ ի՞նչու՞մ է կայանում սահմանադրութեան

է ու թիւիւնը, հասկացողութիւնը: Այդ պատճառով  
 էլ նրանք մեզ թողնում են կատարեալ անդիտութեան մէջ  
 այն բանի մասին, թէ մի յայտնի սահմանադրութիւն չաւ  
 է, թէ վատ, հնարաւոր է, թէ անհնարին, հաստատ է, թէ ան-  
 հաստատ: Այդ բոլորի մասին մենք կարող կը լինեինք զա-  
 տեւ միայն այն ժամանակ, երբ իմանայինք՝ թէ ինչու մէ  
 կայանում ընդհանրապէս սահմանադրութեան էութիւնը.  
 այն ժամանակ մենք կը կարողանայինք վճռել թէ հա-  
 մապատասխանում է արդեօք այսօրին յայտնի  
 սահմանադրութիւնն այդ էութեանը եւ կամ որպիսի վե-  
 րաբերութիւն ունի դէպի նա: Մինչ այդ տեսակ իրա-  
 ւաբանական արտաքին մեկնութիւնները երբէք մեզ չեն  
 որոշում սահմանադրութեան էութիւնը, մեկնութիւններ,  
 որոնք միատեսակ կերպով վերագրելի են ամեն մի թըրդ-  
 թի կտորին, որ կրում է ազգի, կամ ազգի ու թագա-  
 ւորի ստորադրութիւնը եւ յայտարարում իբրեւ սահմա-  
 նադրութիւն, ինչ որ էլ լինէր նրա՝ այդ թղթի կտորի՝ բո-  
 վանդակութիւնը: Սահմանադրութեան միայն հասկա-  
 ցողութիւնն է ծառայում իբրեւ աղբիւր ամ-  
 բողջ սահմանադրական արձեւտի եւ ամբողջ սահ-  
 մանադրական իմաստութեան, որոնք բղխում են  
 նրանից, կարծես, կատակով ինքն ըստ ինքեան, ինչ-  
 պէս դուք այժմ կը համոզվէք զրանում, երբ մենք կը  
 գտնենք այդ հասկացողութիւնը:

Այսպէս, կրկնում եմ. ինչ բան է սահմանադրու-  
 թիւնը. ինչու մէ կայանում սահմանադրութեան էու-  
 թիւնը, հասկացողութիւնը:

Մենք դեռ չք գիտենք այդ, որովհետեւ այդ պա-  
 տասխանը դեռ պէտք է գտնենք, փնտռելով նրան ամեն-  
 քրս միատեղ: Արպէս զի գտնենք՝ դիմենք այն մեթօդին,  
 որին հարկաւոր է դիմել ամեն անգամ, երբ ցանկանում  
 ես որոշ գաղափար կազմել որ եւ է առարկայի մասին:

Դա մի շատ հասարակ մեթօդ է, պարոններ: Դա կայա-  
 նում է նրանում, որ մենք համեմատում ենք այն առար-  
 կան, որի հասկացողութիւնն ենք փնտռում, մէկ ուրիշ  
 համասեռ առարկայի հետ եւ աշխատում ենք, չը նայած  
 զրանց համասեռութեանը, որքան կարելի է պարզ ու  
 որոշ կերպով ըմբռնել նրանց մէջ գոյութիւն ունեցող  
 տարբերութիւնը:

Վիմելով այդ մեթօդին, ես այս տեսակ հարց եմ  
 դնում. ինչ տարբերութիւն կայ սահմանադրութե-  
 թեան եւ օրէնքի մէջ:

Սահմանադրութիւնը եւ օրէնքն էապէս, ակնյայտ-  
 նի է, համասեռ են: Սահմանադրութիւնը պէտք է օրէն-  
 քի ոյժ ունենայ. հետեւաբար, նա պէտք է լինի մի եւ  
 նոյն ժամանակ եւ մէկ օրէնք: Սակայն նա պէտք է  
 լինի ոչ միայն օրէնք, այլ աւելի, քան օրէնք.  
 ուրեմն, այստեղ տարբերութիւն էլ կայ: Հաղարաւոր  
 փաստեր հաստատում են, որ տարբերութիւն չիրաւի գո-  
 յութիւն ունի, որ սահմանադրութիւնը պէտք է լինի ոչ  
 միայն պարզապէս օրէնք, այլ աւելի՝ քան օրէնք:  
 Օրինակի համար. երբ նոր-նոր օրէնքներ են հրատարակ-  
 վում, դուք այդտեղ ոչ մի վատ բան չէք տեսնում: Ընդ-  
 հակառակն, դուք զիտէք, որ ամեն տարի շատ թէքիչ  
 նոր օրէնքներ անհրաժեշտ են: Մինչդեռ չէ կարելի ոչ  
 մի նոր օրէնք հրատարակել առանց զրանով փոփոխե-  
 լու արդէն գոյութիւն ունեցող օրինական յարաբերութիւն-  
 ները: Մի նոր օրէնք, որ ոչ մի փոփոխութիւն չէ մտցնում  
 արդէն եղած օրինական յարաբերութիւնների մէջ, ա-  
 ւելորդ է կը լինէր, նրա հրատարակվելը ոչ մի միտք էլ  
 չէր ունենալ ու չէր հրատարակվել:

Այսպէս, դուք ոչ մի վատ բան չէք տեսնում, երբ  
 փոփոխում են օրէնքները, եւ ընդհակառակն, դուք զըտ-  
 նում էք, առհասարակ, որ զա կառավարչական հաս-

տատուութիւնների իսկական դերն է: Բայց Հէնց որ ձեռք են տալիս սահմանադրութեան, դուք կատարում ու պո-  
 սում էք. «Չեոք մի տաք սահմադրութեան:» Արտեղից է ծագում այդ զանազանութիւնը: Եւ այդ զանազանու-  
 թիւնը մինչ այն աստիճան անհերքելի է, որ մի քանի սահմանադրութիւնների մէջ ուղղակի օրէնքով սահման-  
 ված է. «սահմանադրութիւնս փոփոխութեան ենթարկել չէ կարելի» միւսներում ասվում է, փոփոխել կա-  
 րող է օրէնսդիր ժողովի միայն ձայների երկու-երրորդ մասը եւ ոչ պարզ մեծամասնութիւնը: Այն եւ այնպիսի-  
 ները, որոնց մէջ արամադրված է, որ օրէնսդիր ժողովը՝ մինչեւ իսկ միացած միւս բոլոր կառավարչական իշխա-  
 նութիւնների հետ՝ իրաւունք չունի փոփոխութիւններ ա-  
 նելու սահմանադրութեան մէջ, այլ կարող է միայն ա-  
 ռաջարկել այդ փոփոխութիւնները, իսկ այդ կատարելու համար՝ արդէն պէտք է յատկապէս ad hoc դրա համար ժողովուրդից ընտրվէ ներկայացուցիչների նոր ժողով:

Այս փաստերը ցոյց են տալիս, որ ժողովուրդների ընդ-  
 հանուր զգացման համաձայն՝ սահմանադրութիւնը պէտք է լինի ինչ-որ աւելի սուրբ, աւելի հաստատուն ու ան-  
 փոփոխելի, քան սովորական օրէնքը:

Հարցնում եմ, ուրեմն, կրկին. ինչով է տարբերվում սահմանադրութիւնը սովորական օրէնքից:

Այդ հարցին սովորաբար պատասխանում են. «սահ-  
 մանադրութիւնը մի պարզ օրէնք չէ, միւսների նման, այլ նա երկրի հիմնական օրէնքն է»: Շատ կարելի է, պարոններ, որ այդ պատասխանի մէջ անու-  
 րող ձեւի տակ ծածկված կայ ճշմարտութիւնը: Բայց այդ ձեւն այնքան մութ է, որ նրանում այդ պատասխա-  
 նը ոչ մի բանի չէ ծառայում: Անմիջապէս ծագում է մի ուրիշ հարց. իսկ ինչ տարբերութիւն կայ օրէնքի եւ հիմնական օրէնքի մէջ: Ուրեմն, դուրս է գա-

լիս, որ մենք մի քայլ անգամ առաջ չենք գնացել: Այ-  
 ժըմ մեղ մօտ երեւան եկաւ միայն մի նոր անուն՝ հիմ-  
 նական օրէնք: Բայց նա ոչ մի կերպ մեզ չէ օգ-  
 նում, բանի որ չը գիտենք, թէ ինչ տարբերութիւն կայ հիմնական օրէնքի եւ միւս օրէնքի մէջ:

Փորձենք, թէ արդեօք աւելի չենք մօտենում գործին, եթէ բնենք թէ ինչ մտքեր են պարունակվում «հիմնա-  
 կան օրէնք» անունն մէջ. ուրիշ խօսքով. — հիմնա-  
 կան օրէնքն ինչով պէտք է տարբերվէ միւս օ-  
 րէնքից, որպէս զի արգարացնէ իր հիմնական օրէնք կոչումը:

Հիմնական օրէնքը պէտք է, հետեւապէս,

1) լինի մէկ օրէնք աւելի խոլ, քան միւս սովորական օրէնքը. դա ցոյց է տալիս նոյն իսկ նրա «հիմնա-  
 կան» անունը: Բայց նա պէտք է նոյնպէս,

2) իբրեւ հիմնական օրէնք, լինի միւս օրէնքների հիմքը, այսինքն՝ հիմնական օրէնքից պէտք է ծագեն միւս օրէնքները, որպէս զինա նրանց հիմքը կազմէ: Ու-  
 րեմն, հիմնական օրէնքը պէտք է գործող լի-  
 նի նաեւ բոլոր միւս սովորական օրէնքներում:

3) Բայց այն բանը, ինչ ունի հիմք, չէ կարող ա-  
 զատօրէն լինել կամ այսպէս, կամ այնպէս. նա պէտք է լինի ճիշդ այնպէս, ինչպէս որ կայ նրա հիմքը չէ թոյլ տալիս նրան լինել ուրիշ կերպ: Միայն այն, ինչ հիմքի վրա չէ դրված եւ ուրեմն պատահական է, կարող է լինել այնպէս, ինչպէս որ է եւ կամ, թերեւս, նոյն իսկ ուրիշ կերպ: Բայց այն ամենն, ինչ ունի հիմք, անհրաժեշտաբար այն է, ինչ որ է: Օր. մոլորակներն ունեն յայտնի ըն-  
 թացք. այդ ընթացքը կամ ունի մի որոշող հիմք կամ չունի: Եթէ այդ հիմքը չը կայ, ուրեմն ընթացքը պատա-  
 հական է եւ ամեն-մի բոպէ կարող է լինել ուրիշ տե-

ոակ: Բայց եթէ այդ հիմքը կ'այ, եւ ինչպէս բնագէտներն ասում են, այդ հիմքը արեգակի ձգողական զօրութիւնն է, դրանով արդէն հաստատված է, որ մոլորակների ընթացքը որոշված ու կանոնաւորված է հիմքով, արեգակի ձգողական զօրութեամբ, այն պէս որ նա չէ կ'արող այլ կերպ լինել, եթէ ոչ այն պէս, ինչպէս կ'այ: Հետեւաբար, հիմք խօսքի իմաստի մէջ կայ գործող անհրաժեշտ ու թեան միտքը, մէկ այն տեսակ գործող ոյժի միտք, որի շնորհով հիմք ունեցող բանը պէտք է լինի ճիշդ այն պէս, ինչպէս որ կ'այ:

Այսպէս, եթէ սահմանադրութիւնը երկրի հիմնական օրէնքն է, ուրեմն նա այնպիսի բան է, որ մենք պէտք է որոշենք աւելի մանրամասնօրէն, կամ ինչպէս առայժմ գտանք, նա մի գործօն ոյժ է, որը երկրի միւս բոլոր օրէնքներն ու իրաւական հաստատութիւններն անհրաժեշտաբար դարձնում է այն, ինչ որ նրանք են — սա մեզ համար լոյսի առաջին ճառագայթն է, պարօններ, — այնպէս որ այդ ժամանակից երկրում չէ կ'արող հրատարակվել ոչ մէկ օրէնք, բացի հէնց այդ օրէնքներից:

Սակայն, կայ արդեօք երկրում մի բան, պարօններ, — այս հարցը տալուց լոյսը սկսում է աւելի ու աւելի տարածվել, — կայ արդեօք երկրում որ եւ է որոշող գործօն ոյժ, որն այն պէս ազդէր երկրում հրատարակվող բոլոր օրէնքների վրա, որ նրանք մինչեւ մի յայտնի աստիճան լինէին անհրաժեշտաբար ոչ այլ տեսակ, եթէ ոչ այն, ինչ են:

( ), ի հարկէ, պարօններ, այդպիսի մի բան կ'այ, եւ այդ բանը ոչ այլ ինչ է, եթէ ոչ յայտնի հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող ոյժ իրական յարաբերութիւնները:

Ոյժ իրական յարաբերութիւնները, որ գոյութիւն ունեն իւրաքանչիւր հասարակութեան մէջ, կազմում են այն ազդեցիկ գործօն զօրութիւնը, որ որոշում է նոյն հասարակութեան բոլոր օրէնքներն ու իրական հաստատութիւններն, այնպէս, որ նրանք իրանց գլխաւոր գծերում չեն կ'արող լինել ուրիշ կերպ. քան այն պէս, ինչպէս կ'ան:

Ետապում եմ բացատրել այդ հասկանալի օրինակով: Ի հարկէ, այն ձեւով, ինչպէս ես եմ ներկայացնում նրան, այդ օրինակը, ճիշդ է, կատարելապէս անիրագործելի է: Բայց չը խօսելով արդէն նրա մասին, ինչ աւելի ներքեւ մենք, գուցէ, կը տեսնենք, թէ ինչպէս նոյն օրինակը կատարելապէս իրագործելի է մէկ ուրիշ ձեւով, առայժմ այսքանը կասեմ, որ բանը նրանում չէ, թէ արդեօք կարող է պատահել այդպիսի մի բան, այլ միայն նրանում, որ այդ օրինակով ուսումնասիրենք իրերի բնութիւնը, որը կարող է երեւան գալ, եթէ նա՝ այդ օրինակը՝ պատահէր:

Չեղ յայտնի է, պարօններ, որ Պրուսիայում օրէնքի ոյժ ունի միայն այն, ինչ հրատարակված է օրէնքների ժողովածուի մէջ: Այդ ժողովածուն տպագրվում է Գեկերի արքունական գլխաւոր տպարանում: Օրէնքների բնագրերը պահվում են տէրունական յայտնի արխիւներում. իսկ օրէնքների տպագրված ժողովածուներն ուրիշ արխիւներում, գրադարաններում ու գրավաճառանոցներում:

Ինթադրենք ուրեմն, որ պատահում է մէկ հազիւ հրդեհ, Համբուրգի հրդեհի նման, եւ որ այդ ժամանակ այրվում են բոլոր արխիւները, գրադարանները, գրավաճառանոցները եւ Գեկերի արքունական գլխաւոր տպարանը: Ինթադրենք, որ հանգամանքների տարօրինակ զուգորդութեամբ մի եւ նոյնն է պատահում նաեւ միւս քա-

ղաքներում, որ այրվում են եւ այն մասնաւոր գրադարանները, որտեղ կային այդ ժողովածուի օրինակներից, այնպէս որ ամբողջ Պրուսիայում մի հաստ օրէնք չէ մնում իր իսկական ձեւով:

Այդպիսով երկիրը կը զօկվէր իր օրէնքներից եւ նրան ուրիշ բան չէր մնալ անելու, եթէ ոչ ձեռնարկելու նոր օրէնքների կազմութեան:

Այժմ ինչպէս էք կարծում, պարոններ, կարելի՞ կը լինէր այս դէպքում վարվել կամայաբար, շինել կամայաբար նոր-նոր օրէնքներ, ու՞մ գլխին ինչպէս որ փչէր: Տեսնենք:

Գիցուք թէ դուք կասէիք. օրէնքները ոչնչացած են, եկէք նոր օրէնքներ շինենք եւ արդէն այլ եւ չը տանք միապետութեանն այն դիրքը, որը նա ունէր մինչեւ հիմա. կամ թէ մինչեւ իսկ էլ չը տանք նրան ոչ մի դիրք:»

Թագաւորն ամենահանգիստ կերպով կը պատասխանէ դրան. — «օրէնքները ոչնչացան, բայց ինչ փոխ: Ի՞ր ապէս զօրքն էլի ինձ է հպատակում, գնում է, ուր որ ես եմ հրամայում. ի՞ր ապէս ի՞մ մի հրամանով զինարանների ու զօրանոցների հրամանատարները կը տան թնդանօթներ, ու թնդանօթաձիգ գնդերը նրանցով դուրս կը գան փողոց, եւ յենվելով այդ ի՞ր ապէս յո՞ժի վրա՝ ես չեմ ուզում, որ դուք ինձ տաք ուրիշ դիրք, եթէ ոչ այն, ինչ ցանկանում եմ ինքս:»

Տեսնում էք, պարոններ, — թագաւորը, որին հպատակվում են զօրքերն ու թնդանօթները, կազմում է սահմանադրութեան մի մասը:

Այժմ դիցուք թէ դուք կասէիք. «մենք, բոլոր պրուսացիներս, թւով 18 միլիօն ենք: Այդ 18 միլիօնի մէջ կայ խոշոր կայրւածատէր-ազնւականների մէկ աննշմարելի ասի: Մենք չենք հասկանում, թէ ինչո՞ւ խոշոր հողատէրերի այդ շնչին ասիը նոյն ազդեցութեան տէրը պէտք է լինի, որքան մենք 18 միլիօնս միասին, եւ կազմէ

ազնւականների ժողովը, որն իրաւունք ունենայ քննելու ամբողջ ազգի կողմից ընտրված ներկայացուցիչների վեճիւնները եւ մեր ժեւը ապր վճիռները՝ հէնց որ նրանք ունեն որ եւ է արժէք: Գիցուք թէ դուք այդպէս խօսէիք եւ ասէիք, մենք բոլորս էլ «պարոններ» ենք եւ չենք ուզում ազնւականների առանձին ժողով:»

Տարակոյս չը կայ, պարոններ, որ խոշոր կայրւածատէր-ազնւականները չէին կարող ձեր դէմ դուրս բերել իրանց գիւղացիներին: Ընդհակառակն, նրանց, երեւի, գլխաւոր հոգսը կը լինէր ամենից առաջ փախել իրանց գիւղացիների ձեռքից:

Ի՞այց խոշոր հողատէր-ազնւականները միշտ մեծ ազդեցութիւն են ունեցել թագաւորի ու արքունիքի վրա եւ՝ այդ ազդեցութեան շնորհով՝ նրանք այնպիսի հեշտութեամբ իրանց պաշտպանութեան համար կարող կը լինէին ձեր դեմ ուղարկել զօրքերն ու թնդանօթները, որ ասես իբր այդ յո՞ժի ա ն մ ի ջ ա կ ա ն կախում ունենար նրանցից:

Տեսնում էք, պարոններ, որ ազնւականութիւնն էլ, որը թագաւորի ու արքունիքի վրա ունի ազդեցութիւն, կազմում է սահմանադրութեան մի մասը:

Այժմ ենթադրենք հակառակ դէպքը, թէ թագաւորն ու ազնւականութիւնը միացած՝ ցանկանում են վերահաստատել միջնադարեան էսնաֆական դրութիւնը եւ այն էլ ոչ միայն մանր արհեստներում, ինչպէս մի քանի տարի սրանից առաջ մասամբ իսկապէս ճգնում էին, այլ այնպիսի ծաւալով, որպիսի ծաւալով գոյութիւն ունէին միջին դարերում, այսինքն հասարակութեան բոլոր արդիւնաբերութեան մէջ, ուրեմն եւ խոշոր արդիւնաբերութեան, մեքենական արդիւնաբերութեան մէջ: Չեղ յայտնի է որ միջնադարեան էսնաֆական սիստէմի ժամանակ խոշոր կապիտալը չէր կարող արդիւնաբերել, գործարանական, մեքենական արդիւնաբերութիւնը գոյութիւն ու-

ներսալ չէին կարող: Արովհետեւ այդ սխտէմի մէջ ամեն տեղ օրինակ, որոշված է աշխատանքի ճիւղերի օրինաւոր սահմանաւորութիւն, թէկուզ իրար շատ մօտ ու հարազատ ճիւղերի, եւ ոչ մէկ արդիւնաբերող չէր կարող երկու այդ տեսակ ճիւղեր միացնել: Ծեփողն իրաւունք չունէր ձեռքեր ձեփելու, երկաթագործները՝ անվերջանալի դատեր ունէին փականագործների հետ, սենեակի պատերի վրա թղթեր կպցնողը չէր կարող իր գործի մէջ զնել ներկարարին: Բացի դրանից, էսնաֆական (համբարական) կարգերում օրէնքով ճշգորէն որոշված էր իւրաքանչիւր արդիւնագործողի արդիւնաբերութեան չափը, եւ ամենմի բաղաբույս, ամենմէկ արհեստում իւրաքանչիւր վարպետ կարող էր բանեցընել բանւորների օրէնքով սահմանված յայտնի հաւասար թիւ միայն:

Ինչպէս տեսնում էք, միայն այս երկու պատճառները բաւական են, որ խոշոր արդիւնաբերութիւնը, մեքենական արդիւնաբերութիւնը չը կարողանայ մէկ օր անգամ գոյութիւն ունենալ էսնաֆական սխտէմի մէջ: Խոշոր արդիւնաբերութեան համար անհրաժեշտ են —

- 1) աշխատանքի զանազան ճիւղերի միացումն խոշոր կապիտալի ձեռքի տակ.
- 2) ընդարձակ, մասսային արդիւնաբերութիւն ու ազատ մրցութիւն, ուրեմն եւ անսահման թուով բանող ձեռքեր:

Ինչ դուրս կը գար, եթէ այդուամենայնիւ ցանկանային այսօր ներմուծել էսնաֆական կարգերը:

Պար. Բօրդիզ, Էգեւը եւ միւս բամբակի, մետաքսի եւ այլ խոշոր գործարանատէրերը կը փակէին իրանց գործարանները եւ կարձակէին իրանց բանւորներին. մինչեւ անգամ երկաթուղու վարչութիւնները ստիպված կը լինէին նոյնն անելու վաճառականութիւնն ու արդիւ-

նաբերութիւնը կանգ կառնէին. արհեստների շատ վարպետներ մասամբ ստիպված, մասամբ բարի կամքով կարձակէին իրանց աշխատանքին. ժողովրդային այդ ամբողջ ահագին մասսան, ընդհանրութիւնը դուրս կը թափվէր փողոցները, պահանջելով հաց ու աշխատանք. նրա ետեւից կանգնած կը լինէր խոշոր բուրժուազիան, հրահրելով նրան իր ազդեցութեամբ, ոյժ տալով նրան իր նշանակութեամբ, պահպանելով նրան իր գրամներով, եւ կը պայմէր կռիւր, որի մէջ յաղթանակը չէր կարող զօրքի կողմը լինել:

Ուրեմն, ինչպէս տեսնում էք, պարոններ, Բօրդիզն ու Էգեւը, առհասարակ խոշոր արդիւնաբերողները նոյնպէս կազմում են սահմանագրութեան մի մասը:

Պահ, ենթադրենք, որ կառավարութիւնը ցանկանար այն տեսակ մի միջոցի գիւմել որ կատարելապէս վերաւորիչ է խոշոր բանկատէրերի շահերին, — ենթադրենք, որ կառավարութիւնն ասէր օրինակ. «Թագաւորական բանին այլ եւս չը պիտի ծառայէ, ինչպէս մինչեւ հիմա էր անում», խոշոր բանկատէրերին ու կապիտալիստներին, որոնց ձեռքին է առանց այն էլ բոլոր փողն ու բոլոր վարկը եւ որոնք այժմ իրանք մենակ կարող են իրանց ստորագրութեամբ բանկից վարկ ստանալ, այսինքն միայն իրանք են ստանում վարկը. Թագաւորական բանկը չը պիտի աւելի եւս թեթեւացնէ վարկը դրանց համար, այլ պետք է ծառայէ այն բանին, որ վարկը մատչելի դարձնէ ազբատ ու միջակ կարողութեան տէր մարդկանց. այդ պատճառով էլ հարկաւոր է վարկին այնպիսի կազմակերպութիւն տալ, որ ունենայ այդ հետեւանքը: Կաջողվէր այդ, պարոններ:

Ի հարկէ, դա ապստամբութեան շարժառիթ չէր լինիլ: Բայց եւ այնպէս ներկայ կառավարութեան համար դա անկարելի կը լինէր:

Պառավարութիւնը, պարոններ, երբեմն կարիք է ունենում ա յ ն պ ի ս ի դրամական միջոցների մէջ, այնպիսի ա հ ա գ ի ն դրամական միջոցների մէջ, որպիսին նա չէ յանդգնում ժողովել հարկերով: Այդպիսի դէպքերում նա սկսում է ուտել իր ապագայ միջոցները, այսինքն փոխառութիւններ է անում եւ դրանց տեղը տէրունական թղթեր է տալիս: Գրա համար նրան հարկաւոր են բանկատէրեր: Ճիշդ է, ժամանակի ընթացքում այդ տէրունական թղթերի մեծ մասը կրկին անցնում է ազգի ունեւոր դասակարգի ու մանր կապիտալիստների ձեռքը: Բայց դրա համար ժամանակ է հարկաւոր, շատ անգամ երկար ժամանակ: Մինչդեռ կառավարութեանը փող պէտք է նոյն րոպէին եւ միանգամից կամ շատ կարճ ժամանակամիջոցում: դրա համար նրան պէտք են միջնորդներ, որոնք տային նրան ամբողջ հարկաւոր գումարը եւ յանձն առնէին տէրունական թղթերի տակաւ առ տակաւ վաճառումը հասարակութեան, ըստ որում յայտնի շահ են վերցնում իրանց համար՝ արուեստաբար բարձրացնելով թղթերի գինը բ ու ը ս ա ն եր ու մ: Այդ միջնորդների գերը կատարում են բանկատէրերը եւ այդ պատճառով կառավարութիւնը նրանց քէֆին չի դպչի:

Ուրեմն, տեսնում էք, պարոններ, որ բանկատէրեր Մենդելսոն, Շիկլէռ, առհասարակ բուրսան սահմանադրութեան մասն են կազմում:

Պա՛մ, ենթադրենք, որ կառավարութիւնը ցանկանար քրէական մէկ օրէնք հրատարակել, որով — ինչպէս Չինաստանում — որդու գործած գողութեան համար պատրժվում է հայրը: Այդ հնարքը հնարք էլ կը մնար, որովհետեւ եթէ իրագործվէր, խիստ կը զայրացնէր հասարակական զարգացումը, հասարակական գիտակցութիւնը: Բոլոր պաշտօնեաների, մինչեւ անգամ գաղանի խորհրդականների բերանները բաց կը մնային, եւ նոյն

իրանք աղնականների ժողովի անդամներն իսկ այդ օրէնքը դատապարտելի կը դռնէին: Գուրբ տեսնում էք, պարոններ, որ յ ա յ տ ն ի ս ա հ մ ա ն ն եր ու մ հասարակական գիտակցութիւնը, հասարակական զարգացումը նաեւ իր մասն ունի սահմանադրութեան մէջ:

Պա՛մ, դիցուք թէ կառավարութիւնը վճռում է բաւականութիւն տալ աղնականութեան, բանկատէրերին, խոշոր արդիւնաբերողներին ու խոշոր կապիտալիստներին, բայց դրա փոխարէն ցանկանում է բուրժուազիային ու բանւորներին զօրկել ք ա ղ ա ք ա կ ա ն ա ղ ա տ ու թ իւ լ ն ի ց: Օ, ի հարկէ, պարոններ, ժամանակաւորապէս դա կաջողվէր. մենք արդէն տեսել ենք, որ այդ աջողվում է եւ աւելի յետոյ առիթ կունենանք մէկ ակնարկ ձգելու դրա վրա:

Բայց ենթադրենք այսպիսի մի դէպք. յանկարծ ուղեցին մանր բուրժուազիային ու բանւորներին զօրկել ոչ միայն ք ա ղ ա ք ա կ ա ն, այլ եւ ա ն ձ ն ա կ ա ն ա զատութիւնից, այսինքն ուղեցին յայտարարել նրանց անձնապէս ոչ ազատ, ճորտեր կամ հպատակներ կալուածատէրերի ձեռքի տակ, ինչպէս եղել է շատ երկրներում հեռաւոր միջին դարերի ընթացքում: Աջողվէր այդ, պարոններ: Ո՛չ այդ չէր աջողվիլ, եթէ այդ նպատակով միանային ամենքն իսկ, եւ թագաւորը, եւ աղնականները, եւ ամբողջ խոշոր բուրժուազիան: Տեսնելով այդ՝ դուք կասէիք. «ոչ աւելի լաւ է մեզ կոտորեն, բայց այդ տանել անկարող ենք»: Աշխատաւորները դուրս կը գան փողոցները՝ չընայած որ Բօրզիգն ու Էգեւսը չեն փակիլ իրանց գործարանները, ամբողջ մանր բուրժուազիան կերթայ նրանց օգնութեան, եւ որովհետեւ յաղթութեամբ գիւմադրել նրանց միացմանը կը լինէր շատ դժուար, ուրեմն դուք տեսնում էք, պարոններ, որ ա մ ե ն ա ծ ա յ-

ը այլ եղ ղ գէպքերում դուք ամենքդ էլ սահմանադրու-  
թեան մի մասն էք:

Այսպէս, մենք տեսանք, պարոններ, թէ ինչ բան է  
երկրի սահմանադրութիւնը. դա երկրում եղած՝ ոյ ժ ի  
ի ր ա կ ա ն յ ա ր ա բ ե ր ու թ ի շ ն ն ե ր ն են:

Իսկ ինչ է այն, որ սովորաբար «սահմանադրու-  
թիւն» է կոչվում: Ինչ բան է ի ր աւ ա կ ա ն սահ-  
մանադրութիւն: Այժմ ինքներդ տեսնում էք, պարոն-  
ներ, թէ ինչ է այդ:

Այժմ այդ ի ր ա կ ա ն յարաբերութիւններն արձանա-  
գըրվում են թղթի վրա, արտայայտվում են գ ր աւ ո թ  
կերպով, եւ միանգամ որ գրվեցան թղթի վրա՝ նրանք արդէն  
ոչ թէ պարզապէս ոյ ժ ի ի ր ա կ ա ն յարաբերութիւններ  
են, այլ ի ր աւ ու ն ք ն ե ր, ի ր աւ ա կ ա ն հաստատու-  
թիւններ, եւ ով որ համարձակվում է նրանց դէմ գոր-  
ծելու — պատժվում է:

Այժմ ձեզ պարոններ, յայտնի է նոյնպէս, թէ ինչ-  
պէս են թղթի վրա անցնում ոյ ժ ի ի ր ա կ ա ն յարաբե-  
րութիւնները, ինչպէս են ն ր ա ն ք փոխվում եւ դառ-  
նում ի ր աւ ա կ ա ն յարաբերութիւններ:

Ի հարկէ, չեն գրում — պ. Բօրգիդը սահմանադրու-  
թեան մասն է, պ. Մենդելսոնը սահմանադրութեան մա-  
սըն է եւ այն. այդ բոլորն արտայայտվում է շ ա տ ա-  
ւ ե լ ի ք ա ղ ա ք ա կ ի թ կերպով:

(Օրինակ, եթէ ուզում են տնօրինել, որ մէկ ամի խո-  
շոր արդիւնաբերողներն ու խոշոր կապիտալիստները տէ-  
րութեան մէջ պէտք է ունենան նոյնքան եւ դեռ ա-  
ւելի ոյ ժ, քան բոլոր քաղաքացիները, բանւորներն ու գիւ-  
ղացիները միասին վերցրած, այդ բանը սակայն չեն գրել  
ուզողակի ու բաց կերպով: Այդ նպատակով կը հրատա-  
րակեն մէկ օրէնք, նման 1849 թ.-ին շնորհած երեքդաս-  
եան ընտրողական օրէնքի, որով ամբողջ երկիրը կը բա-

ժանեն ընտրողների 3 դասի վրա, իրանց վճարած տուր-  
քերի քանակութեան համեմատ, որն իր կողմից որոշվում  
է, ի հարկէ, նրանց կայքերի չափով:

Պաշտօնական ցուցակներին նայելով պարոններ, 1849  
թ. կառավարութեան ձեռքով կազմված այդ երեքդաս-  
եան տուրքի հրատարակելուց յետոյ ամբողջ Պրուսիա-  
յում այն ժամանակ կային. —

3, 255, 600 համայնական (communal) ընտրողներ,  
որոնք բաժանվում էին երեք դասի վրա հետեւեալ կեր-  
պով:

Վաւորը Պրուսիայում ընտրողական առաջին դա- սին պատկանում էին . . . . .	153, 808 ընտրողներ
Երկրորդին . . . . .	409, 945    »
Երրորդին . . . . .	2, 691, 950    »

Սրկնում եւ՛ պարոններ, որ այս թւերը առնված են  
պաշտօնական ցուցակներից:

Պարանցից դուք տեսնում էք, որ Պրուսիայում 153,  
808 հ. խոշոր հարուստները նոյնքան քաղաքական իշխա-  
նութիւն ունեն, որքան 2, 691, 950 քաղաքացի, գիւղացի  
ու բանւոր միասին. յետոյ, որ այդ 153, 808 խոշոր  
հարուստները եւ 409, 945 երկրորդ դասը կազմող չա-  
փաւոր հարուստներն ունեն ուղի շ եր կ ու ա ն-  
գ ա մ աւելի քաղաքական իրաւունքներ, քան ամբողջ մը-  
նացած աղքատ, այնպէս՝ որ 153, 808 խոշոր հարուստ-  
ները եւ 409, 945 չափաւոր հարուստների կէսը միասին  
վերցրած արդէն ունեն աւելի մեծ քաղաքական իրա-  
ւունքներ, քան չափաւոր հարուստների միւս կէսը՝ երրորդ  
դասին պատկանող 2, 691, 950 հոգու հետ միասին:

Պարանցից դուք տեսնում էք, պարոններ, որ այսպի-  
սով վերջ ի վերջոյ դուրս է գալիս այն, ինչ եթէ ուղ-  
ղակի գրել սահմանադրութեան մէջ անբաղաքավարի խօս-  
քերով կը լինի. — հարուստը 17 անգամ աւելի քաղա-

29594-63



քական իրաւունքներ (իշխանութիւն) պէտք է ունենայ, քան միւս քաղաքացին, կամ թէ՛ մի հարուստը նոյնքան իշխանութիւն պէտք է ունենայ, որքան 17 հոգի միւս քաղաքացիներէն:»

Մինչեւ այդ երեքդասեան ընտրողական օրէնքի հըրատարակվելը մեզ մօտ գոյութիւն ունէր 1848 թ. ապրիլ 8-ի օրէնքով սահմանված ընտրողական ընդհանուր իրաւունքը, որի զօրութեամբ ամեն-մի քաղաքացի, հարուստ թէ աղքատ՝ անխտիր, ունէր հաւասար ընտրողական իրաւունք, հաւասար քաղաքական իշխանութիւն, հաւասար իրաւունք մասնակցելու տէրութեան նպատակի ու կամքի որոշման մէջ: Գրանուած դուք տեսնում էք, պարոններ, մի քիչ առաջ իմ ասած խօսքերիս հաստատութիւնը, այսինքն այն՝ թէ, դժբաղդաբար, շատ հեշտ է ձեզնից—քաղաքացիներէից ու բանւորներէից—խլել ձեր քաղաքական ազատութիւնը, եթէ դեռ ուղղակի ու արմատական կերպով ձեռք չը տան ձեր անձնական բարեկեցութեանը, սեփականութեանն ու անձին: Գուք առանց դժուարութեան թոյլ տվցիք խլել ձեզնից ընտրողական իրաւունքը, եւ մինչեւ այսօր՝ այդ իրաւունքը վերադարձնելու համար՝ դեռ ոչ մէկ ագիտացիայի խօսք չէ եղել:

Յետոյ, եթէ ուզում են սահմանադրութեան մէջ պայման դնել թէ ազնւական-հողատէրերի մէկ անընդան թիւը նոյնքան իրաւունքների տէր լինի, որքան ունեն բոլոր հարուստ, չափաւոր ու չունեւոր դատակարգերը միասին, որքան ունեն բոլոր երեք դասերի ընտրողները միասին, այսինքն որքան ունի ամբողջ ազգը—այդ էլ դարձեալ չեն արտայայտիլ երբէք ուղղակի անքաղաքակիրթ կերպով—որովհետեւ, մէկ անգամից ընդ միշտ աչքի առջեւ ունեցէք, պ.պ., բոլորն, ինչ որ պարզ ու ուղղակի է՝ կոպիտ ու անքաղաքակիրթ է:—Սահմանադրու-

թեան մէջ կը գրեն այսպէս. — Տին ու հաստատված հողատիրութեան ներկայացուցիչներից՝ մի քանի ոչ էական յաւելվածով՝ հիմնվում է ազնւականների ժողովը, որի համաձայնութիւնն անհրաժեշտ է իրական, վաւերական դարձնելու համար այն բոլոր վճիռները, որ կայանում են պատգամաւորների (երեսփոխանական) ժողովում, որն ամբողջ ազգի ներկայացուցիչն է: Այդպիսով մէկ ամի Տին հողատէրերին այնպիսի քաղաքական իշխանութիւն է տրվում, որ գերակշռում է ամբողջ ազգի եւ նրա բոլոր դատակարգերի միասնաբար կամբը:

Մի եւ նոյն կերպով երբ ուզում են, որ թագաւորը մենակ նոյնքան, կամ մինչեւ իսկ շատ աւելի մեծ քաղաքական իշխանութիւն ունենայ, քան թէ ընտրողների Յ դասերը, քան թէ ամբողջ ազգը՝ մինչեւ անգամ ազնւական հողատէրերի հետ միասին վերցրած, այն ժամանակ այսպէս են անում.

Սահմանադրութեան 47-դ յօդուածում գրվում է. «Թագաւորն է նշանակում զինւորական բոլոր պաշտօնեաներին», իսկ 108-դ յօդուածում ասված է. «Չորքը՝ սահմանադրութեան հաւատարմութեան երդում չէ տալիս»: Սոյն յօդուածի կից կառուցվում է մի թէօրիա, որը սկզբունքով իսկապէս էլ դուրս է գալիս այդ յօդուածի մտքից,— թէօրիա, թէ թագաւորի ունեցած դիրքը զօրքի վերաբերութեամբ բոլորովին այն չէ, ինչ որ է նրա դիրքը տէրութեան միւս հաստատութիւնների վերաբերութեամբ, եւ թէ զօրքի վերաբերութեամբ թագաւորը ոչ միայն թագաւոր է, այլ եւ ինչ որ ուրիշ բոլորովին տարբեր, խորհրդաւոր, անյայտ մի բան, որը նշանացոյց անելու համար յօրինում են «զինւորական թագաւոր», Kriegsherr անունը: Այդ խորհրդաւորութիւններից դուրս է գալիս, որ պատգամաւորների ժողովը կամ ազգը ոչ մի գործ չունի զօրքի հետ, որ զօրքի գոր-

ծերում ու կաղմակերպութեան մէջ նա չը պիտի խառնըվէ, այլ միայն նրան պահելու համար դրամ պիտի տայ: Էւ պէտք է խոստովանվել—Ճշմարտութիւնն ամենից բարձր է—որ այդ թէօրիան, յիրաւի, յայտնի չափաւոր հիմք ունի սահմանադրութեան 108-դ յօդուածում: Հաստատելով թէ զօրքը չը պիտի տայ հաւատարմութեան երզում սահմանադրութեան, ինչպէս այդ ստիպված են անել բոլոր տէրունական ծառայողներն ու ինքն թագաւորը, սահմանադրութիւնը դրանով ընդունում է ըսկը զբուռնքով որ զօրքը սահմանադրութիւնից դուրս է կանգնած եւ նրա հետ ոչինչ ընդհանուր կապ չունի, որ նա վերաբերում է միմիայն ու բացառապէս թագաւորի անձնաւորութեանը եւ ոչ թէ երկրին:

Միանգամ հաստատված է, որ թագաւորն է նշանակում զօրքի բոլոր պաշտօնեաներին եւ որ զօրքը վերաբերվում է դէպի նա մէկ առանձին կերպով: Հէնց միակ դրանով արդէն թագաւորին տրվում է ոչ միայն նոյնքան, այլ տասն անգամ աւելի քաղաքական իշխանութիւն, քան ունի երկիրն իր ամբողջութեամբ, մինչեւ անգամ այն դէպքում, երբ իրապէս երկրի իսկական օրժ տասն, քսան, յիսուն անգամ աւելի մեծ լինէր զօրքի ոյժից: Այդ առերեւոյթս նկատվող հակասութեան պատճառը շատ պարզ է:

Թագաւորի իշխանութեան քաղաքական միջոցը—զօրքը—կազմակերպված է, միշտ ժողովված պատրաստ, հիանալի կերպով վարժված կարգապահութեան, ամենմի բոպէ պատրաստ գործելու: մինչ ընդհակառակն, ալբի մէջ ամիոթիված ոյժը, թէև իրապէս անհամեմատ աւելի մեծ, բայց կազմակերպված չէ, պարոններ. ալբի կամքը և մանաւանդ վճռովանութեան այն աստիճանը, որին հասել է այդ կամքը միշտ

գիւրութեամբ չէ կարող իմացվել իր անդամներին կողմից: Այդ պատճառով ոչ որ ճշգորէն չը գիտէ, թէ որքան մարդ կը գնայ իր ետեւից: Բայց այդ՝ ալբը չունի կաղմակերպված ոյժի գործիքները, սահմանադրութեան այդ այնչափ կարեւոր հիմքերը, որոնց մասին ես արդէն յիշեցրի վերեւ, այսինքն թնդանօթները: Ճշմարիտ է, նրանք ձեռք են բերվում քաղաքացիների գրամով: Ճշմարիտ է, նրանք պատրաստվում ու կատարելագործվում են շնորհով հասարակութեան մէջ զարգացում ստացող գիտութիւնների, ֆիզիկայի, տեխնիկայի եւ այլն: Ուրեմն, հէնց միակ նրանց գոյութիւնն արդէն ցոյց է տալիս, թէ որքան մեծ է քաղաքացիական հասարակութեան ոյժը, թէ որքան մեծ առաջադիմութիւններ են արել գիտութիւնները, տեխնիկական արուեստները, գործարանական եղանակների ու ամեն տեսակ աշխատանքի ճիւղերը: Բայց հէնց այստեղ էլ ակամայից յիշում ես վիրգիլիոսի մի ոտանաւորի յայտնի տողը.—*Sic vos non vobis*, “Դու ես շինում այդ, բայց ոչ քեզ համար:” Թնդանօթները պատրաստվում են միայն կազմակերպված ոյժի համար. այդ պատճառով երկիրը գիտէ, որ ընդհարման դէպքում իր այդ “մանուկներին”, իր ոյժի այդ վկաներին կը տեսնէ իր գէմ: Ահա թէ ինչու աւելի փոքրիկ, բայց կազմակերպված ոյժը շատ անգամ աջողում է յաղթահարել ազգի աւելի մեծ, բայց ոչ կազմակերպված ոյժին, մինչեւ որ վերջապէս տեսնելով որ արդէն չափից դուրս երկարում է ազգային գործերի կառավարութիւնն ի վընաս ազգին, վերջինս վճռում է գիմադրել կազմակերպված փոքրիկ ոյժին իր ոչ կաղմակերպված գերազանցութիւնը:

Այսպէս, պարոններ, այժմ մենք երկրի երկու սահմանադրութիւնների էութիւնն էլ գիտենք. նրա իրական սահմանադրութեան, որ երկրում գոյութիւն ունե-

ցող ոյժի իրական յարաբերութիւններն են եւ նրա գը-  
ր աւոր սահմանադրութեան, որին առաջինից զանազա-  
նելու համար, եթէ կուզէք, կարող ենք թէկուզ թըղ-  
թի կտոր անուանել:

Իրական պայմանադրութիւնն, իրական սահ-  
մանադրութիւնն ունեցել է ամեն-մի երկիր ամեն ժա-  
մանակ, ինչպէս ինքներդ անմիջապէս կը հասկանաք: Չը  
կայ մի կանխակալ համոզում աւելի սխալ, աւելի ան-  
միտ եզրակացութիւնների տանող, քան այն հանրացած,  
տիրող կարծիքը, թէ իբր սահմանադրութիւնը միայն  
նորագոյն ժամանակների բացառիկ առանձնայատկութիւ-  
նն է: Իւրաքանչիւր երկիր նոյնքան անհրաժեշտօրէն ու-  
նի որ եւ է իրական պայմանադրութիւն կամ սահ-  
մանադրութիւն, որքան իւրաքանչիւր մարմին, իւրա-  
քանչիւր օրգանիզմ, որ անպատճառ կազմված է այսպէս  
կամ այնպէս, ունի որ եւ է, լաւ թէ վատ, կազմու-  
թիւն: Արդհետեւ չէ որ իւրաքանչիւր երկրում, վեր-  
ջապէս, անպատճառ գոյութիւն ունեն ոյժի որ եւ է ի-  
րական յարաբերութիւններ:

Այրք Քրանսիայում, անցեալ դարու Քրանսիական յե-  
ղափոխութիւնից դեռ շատ առաջ, անսահման լէգիտիմա-  
կան միապետութեան օրերում, Ղուգովիկոս XVI թագա-  
ւորը 1776 թ. փետ. 3-ի հրովարտակով վերացրեց ճանա-  
պարհային յայտնի տուրքը, որով գիւղացիները պարտաւոր-  
վում էին առանց վարձատրութեան աշխատելու ճանա-  
պարհների վրա, նրանց շինելու ու նորոգելու, եւ դրա փո-  
խարէն ճանապարհները շինելու ծախքերը ծածկելու հա-  
մար անօրինեց նոր տուրք, որ ընկնում էր ազնւա-  
կան ու թեան հողերի վրա եւս, — Քրանսիական աղ-  
նւականներն խորհրդարանը ընդգիմացաւ այդ կարգադը-  
րութեան՝ ստելով. «Le peuple de France est taillable  
et corvéable à volonté; c'est une partie de la cons-

titution, que le roi ne peut pas changer etc. (Քրան-  
սիական ժողովուրդին — հասարակ ժողովուրդին — կարելի է  
կամայաբար նորանոր տուրքերի ու ձրի աշխատութեան  
ենթարկել. դասահմանադրութեան մի մասն է  
որ թագաւորը չէ կարող փոխել):

Տեսնում էք, պարոններ, որ դեռ այն ժամանակնե-  
րում էլ, ինչպէս այժմ, խօսում էին սահմանադրութեան  
մասին, այն էլ այնպիսի մի սահմանադրութեան, որ ին-  
քը թագաւորը փոփոխել չէ կարող: Ճիշդ է, այն  
բանը, որին այստեղ սահմանադրութեան նշանակու-  
թիւն է տրվում — հասարակ դասը կամայաբար հարկատու դար-  
ձնելու եւ այլ տուրքերի ենթարկելու կարելիութիւ-  
նը — այն ժամանակը չէր գրված առանձին թղթի վը-  
րա, որտեղ արձանագրված լինէին երկրի իրաւունք-  
ներն ու կառավարչական բոլոր գլխաւոր սկզբունքնե-  
րը. դա պարզապէս միջնադարեան Քրանսիայում եղած  
ոյժի իրական յարաբերութիւնների արտայայտու-  
թիւնն էր: Միջին դարերում հասարակ ժողովուրդն այն-  
քան անզօր էր իրապէս, որ նրան կարելի էր հար-  
կերով ու տուրքերով կամայաբար ծանրաբեռնել. ոյժի  
այդ իրական յարաբերութիւնների հետ միշտ էլ յար-  
մարվում էին, ժողովուրդին էլ միշտ ծան-  
րաբեռնում էին: Գործերի այդ իրա-  
կան ընթացքը տալիս էր՝ այսպէս կոչված՝ pré-  
cédent-ներ (նախկին օրինակներ), որոնք այնքան մեծ դեր  
են խաղում սահմանադրական հարցերում միջին դարե-  
րում, իսկ Անգլիայում դեռ մինչեւ հիմա էլ: Երբ իրա-  
պէս ժողովուրդն այդպէս ծանրաբեռնված էր, այն ժա-  
մանակ սակայ արտայայտվում էր այն իրողու-  
թիւնը, թէ ժողովուրդին կարելի է այդպէս ծանրաբեռ-  
նել. ուրիշ կերպ սակայն չէր էլ կարող լինել: Այդ իրո-  
ղութիւնն էլ դառնում է կառավարչական-իրա-

ւ ա կ ա ն ս կ զ ք ու ն ք ր յ որի վրա էլ մատնանիշ էին անում յետոյ ուրիշ համանման դէպքերուով: Այլ եւ այլ առանձին հանգամանքներ, որ արմատ ունէին ոյժի իրական յարաբերութիւնների մէջ, ոչ սակաւ անգամ ստանում էին առանձին արտայայտութիւն եւ արձանագրուում: Այդպիսով ծագում էին զանազան franchises ազատութիւններ (հարկերից ազատելը), իրաւունքներ, արտօնութիւններ, դասերի, արհեստների, քաղաքային կանոնադրութիւններ եւ այլն:

Բոլոր այս իրողութիւնները, précédent-ները, կառավարչական-իրաւական սկզբունքները, հարկերից ազատելը [franchises], արտօնութիւններն ու կանոնադրութիւնները միասին կազմում էին երկրի սահմանադրութիւնը, եւ այս բոլորն իսկապէս ոչ այլ ինչ էր, եթէ ոչ երկրում գոյութիւն ունեցող ոյժի իրական յարաբերութիւնների պարզ միասնի արտայայտութիւնը:

Նետեալաբար, իսկական սահմանադրութիւն ունեցել են բոլոր երկիրներն ու ամեն ժամանակ: Ուրեմն նորագոյն ժամանակին յատուկ է ոչ թէ իսկական, այլ գրաւոր սահմանադրութիւնները կամ թղթի կտորների շատ կարեւոր է, որ այդ ձեր աչքից չը թողնէք:

Յիրաւի, նորագոյն ժամանակներում գրեթէ բոլոր տէրութիւններում մենք տեսնում ենք մի ձգտում՝ ձեռք բերել գրաւոր սահմանադրութիւն, որը մէկ առանձին մագաղաթի վրա պէտք է բովանդակէ ու հաստատէ երկրի բոլոր վարչութիւններն ու կառավարչական սկզբունքները:

Ինչո՞ւմն է կայանում նորագոյն ժամանակների այդ բացառիկ ձգտման պատճառը:

Այս հարցն էլ շատ կարեւոր հարց է, եւ միայն

պատասխանելով նրան, կարելի է իմանալ թէ ինչպէս պէտք է ձեռնարկել սահմանադրութեան կազմելուն, թէ ինչ պէտք է մտածել արդէն կազմված սահմանադրութիւնների մասին եւ ինչպէս վերաբերվել դէպի նրանց: Մի խօսքով այդ պատասխանը միայն կարող է սովորեցնել ամբողջ սահմանադրութեան արուեստն ու իմաստու թիւնը:

Այսպէս, հարցնում եմ — Բնչումն է կայանում նորագոյն ժամանակներումն գրաւոր սահմանադրութիւն կազմելու բացառիկ ձգտման պատճառը:

Պէ՛հ, պարոններ, ինչո՞ւմ կարող է կայանալ դրա պատճառը:

Ահնայտնի է, միայն նրանում, որ այն երկիրներում, որտեղ գրաւված են այդ ձգտումով, ոյժի իրական յարաբերութիւնն էր անբարեկարգ: Թէ որ տեղի չունենար այդ փոփոխութիւնը հասարակութեան ոյժի իրական յարաբերութիւնների մէջ, թէ որ յարաբերութիւնները մնային մի եւ՛նչըն, անհնարին ու աներեւակայելի կը լինէր, որ այդ հասարակութիւնը պէտք զգար ձգտելու դէպի նոր պայմանադրութիւն: Նա կը մնար իր հին պայմանադրութեամբ. առ առաւելն, ինչ նա կարողանար անել — դա կը լինէր այն, որ նա մի թղթի վրա կը հաւաքէր ու կարձանագրէր իր ունեցած սահմանադրութեան բոլոր ցրված մասերը:

Ի՛այց ինչպէս է տեղի ունենում փոփոխութիւն ոյժի իրական յարաբերութիւնների մէջ:

Արեւակայեցէք միջնադարեան մի տէրութիւն իր ցանցառ ազդարնակութեամբ, ինչպէս այն ժամանակայ բոլոր տէրութիւնները, իր թագաւորով ու իր ազնւականութեամբ, որին պատկանում են հողերի մեծ մասը: Ազգաբնակչութեան թիւը քիչ լինելով, նրա մէկ ամենաաննշան մասը միայն կարող է պարապվել ար-

դիւնաշահութեամբ ու առեւտրով մեծամասնութիւնը դեռ պէտք է պարապլէ հողագործութեամբ ու հողագործական անհրաժեշտ պէտքերի արդիւնաբերութեամբ: Արովհետեւ հողերի մեծ մասն ազնւականութեան ձեռքն են, բնակիչներէ այդ մեծամասնութիւնն աշխատութիւն է ունենում աղնւականների մօտ, դէպի որոնց գանվում է զանազան յարաբերութիւնների մէջ՝ իբրեւ վաստալ (Տպատակ), օրտ, ժառանգաւոր Ֆէրմեր եւ այլն: Այդ բոլոր յարաբերութիւններն իսկապէս մի եւ նոյն դրութեան զանազան աստիճաններն են, այն է՝ ազնւականութիւնից կախված լինելը: այդ կախումը ստիպում է ժողովրդին ծառայել ազնւականութեանը վաստալ (Տպատակ) ծառայութեամբ եւ պատերազմել նրա համար նոյն նրա պատերազմներում: Իր հողից ստացած հողագործական արդիւնքների աւելորդով ազնւականութիւնը պահում է իր ամրոցում՝ թիկնապահներ, ձիաւորներ, առհասարակ զանազան զինւորներ: Ազնւականութեան այդ ոյժի դէմ թագաւորն իսկապէս ոչինչ իրական ոյժ չունի, բացի այն ազնւականների օգնութիւնից, որոնք յօժարակամ— հաթկադրել նրանց դժուար է— արձագանք կը տան նրա կոչման եւ մէկ էլ թերեւս մի բանի սակաւաբնակ քաղաքների դեռ չնչին ու յիշատակելու անարժան օգնութիւնից:

Ի՞նչպէս կը լինի, ձեր կարծիքով, այդպիսի ազնւականութեան սահմանադրութիւնը: — Նա անհրաժեշտաբար կը լինի երկրի ոյժի իրական յարաբերութիւնների համաձայն: Սահմանադրութիւնը կը լինի դասակարգային ազնւականութիւնը կը լինի առաջին ու ամեն կերպ իշխող դասակարգը: Առանց նրա համաձայնութեան թագաւորն անկարող կը լինի մի կօպէկ տուրք անգամ նշանակել նրա դիրքը դէպ ազնւականութիւնը կը լինի ոչ այլ ինչ, եթէ ոչ primus inter pares — առաջինը՝ հաւասարների մէջ:

Աւ իսկապէս, պարոններ, այդպէս է եղել Պրուսիայի եւ միւս շատ տէրութիւնների սահմանադրութիւնը միջին դարերում:

Իայց այժմ ենթադրենք, որ բնակիչների թիւն աւելի ու աւելի բազմապատկւում է, արդիւնաբերութիւնն ու արուեստները սկսում են ծաղկել եւ դրանով տալիս են ապրելու անհրաժեշտ միջոցներն ու նպաստում բնակիչների նորանոր բազմանալուն, որ սկսում են լցնել քաղաքն եւ րը: Ապստալն ու դրամական հարստութիւնը սկսում են զարգանալ բուրժուազիայի եւ քաղաքային գիւղերի ներքին ձեռքում: — Ի՞նչ կը լինի այժմ:

Վաղաքային բնակիչների աճումը, որոնք կախում չունեն ազնւականութիւնից՝ սրա շահերը մինչեւ անգամ հակառակ լինելով առաջինների շահերին, շատ ձեռնտու է թագաւորին: Բնակիչների թիւի աճումով աւելանում է նաեւ զէնք կրելու ընդունակների թիւը, որոնք կը լինեն թագաւորի տրամադրութեան տակ. քաղաքացիներն ու արդիւնաշահութիւնը, որ խիստ կերպով վնասվում են ազնւականների իրար դէմ ունեցած անվերջ միջադէպերից, պէտք է ցանկանան քաղաքացիական հանգստութիւն, ապահովութիւն ու կանոնաւոր արգարադատութիւն՝ յանուն առեւտրի ու արդիւնաբերութեան շահերի. այդ պատճառով նրանք ամենայն հաճութեամբ պահպանում են թագաւորին թէ դրամով եւ թէ մարդկանցով. նրանց արած դրամական օգնութեամբ թագաւորը, հէնց որ պէտք ունենայ, կարող է այնպիսի զինւորական ոյժ հաւաքել, որ շատ աւելի գերազանց կը լինի ազնւականութեան ոյժից: Այդ ժամանակներից թագաւորներն արդէն կրօնքն աւելի ու աւելի սահմանափակել ազնւականութեան իշխանութիւնը, խլել նրանից պատերազմ մղելու իրաւունքը. նրանք կը կործանել նրա ամրոցները՝ եթէ նա երկրի օրէնքներին հաւատարիմ չէ. վեր-

ջապէս ժամանակի ընթացքում արդիւնաշահութիւնն այնքան կը զարգացնէ հարստութիւնն ու երկրի բնակիչներին թիւը, որ միջոց կը տայ թագաւորին կազմել մը ըտ ա կ ա ն զ օ ր ք. թագաւորն առաջ կը տանէ իր զօրագընդերն աղնւահանների ժողովի դէմ, ինչպէս մեծ կայսրը, եւ ֆրիգրիս Վելչէլմ I-ի հետեւեալ խօսքերով՝ je stabilirai die Souveranetat wie einen rocher de bronze (կէս Փրանսերէն, կէս գերմաներէն, որ նշանակում է՝ «ես կը հաստատեմ ինքնակալութիւնն իբրեւ ժայռ բրոնզից»), — կը զօրէ աղնւահանութիւնը հարկ չը վճարելու առանձնաշնորհումից եւ վերջ կը դնէ հարկեր նշանակելու նրա իրաւունքին:

Պոլսը տեսնում էք, որ այստեղ ոյ ժ ի ի ր ա կ ա ն յ ա ր ա բ Ե ր ու թ ի ւ ն ն ե ր ի փոփոխութեամբ տեղի է ունենում նաեւ սահմանադրութեան փոփոխութիւն. ծագում է ինքնակալ ա ն ս ա հ մ ա ն միապետութիւնը:

Թագաւորը նոր սահմանադրութիւն գրելու կարիք չունի. միապետութիւնը չափազանց գործնական է այդ պի ս ի բաներով զբաղվելու համար: Իշխելու իրական միջոցը — մշտական զօրքը, — որ կազմում է այդ հասարակութեան ի ս կ ա կ ա ն ս ա հ մ ա ն ա դ ր ու թ ի ւ ն ը, թագաւորի ձեռքումն է. ժամանակի ընթացքում թագաւորն ու նրա կողմնակիցներն իրանք իսկ յայտնում են այդ կոչելով երկրին «ը ի ն է ո ր ա կ ա ն տ Ե ր ու թ ի ւ ն »:

Աղնւահանութիւնն այլ եւս միջոց չունի թագաւորի հետ մրցելու եւ վաղուց արդէն ստիպված է հրաժարվել ինքնուրոյն զինւորական ոյժից: Նա մոռացել է իր նախկին ընդդիմադրութիւնը թագաւորին, մոռացել է, որ հաւասար էր նրան, մեծ մասամբ տեղափոխվել է իր ամբոցներից թագաւորանիստ քաղաքը, ոռձիկ ու թոշակ է ստացել այնտեղ եւ ծառայել է միապետութեան փայլի ու նշանակութեան աւելի զօրացման:

Բայց արդիւնաշահութիւնն ու արուեստները շարունակում են աւելի ու աւելի զարգանալ սրանց ծաղկելովը բնակիչներն աւելի ու աւելի են բազմանում:

Թւում է, թէ իբր այդ առաջադիմութիւնը կատարվում է, ինչպէս առաջ յօգուտ թագաւորի, որը դրա շնորհով կարող է անդադար մեծացնել իր զօրքը եւ այդպիսով հասնում է վերջապէս հ ա մ ա շ ի ս ա ր հ ա յ ի ն ն ը շ ա ն ա կ ու թ ե ա ն:

Բայց քաղաքացիական հասարակութեան զարգացումը հասնում է այնքան ահագին, հսկայական ծաւալի, որ թագաւորը զօրքի միջոցով անգամ չէ կարողանում քաղաքացիների ոյժի այդ աճման հետ հ ա լ ա ս ա ր ա պ է ս ա ո ա ջ ա դ ի մ Է:

Ասածս պարզելու համար, պարոններ, ահա ձեզ մի քանի թւեր:

1657 թ. Բերլինն ունէր 20, 000 բնակիչ. համարեա մի եւ նոյն ժամանակ, մեծ կայսրի մահւան ժամանակներում, զօրքի թիւը հասնում էր 24 — 30, 000 հոգու:

1803 թ. Բերլինում կար արդէն 153, 070 բնակիչ:

1819 թ., 16 տարի վերջ, Բերլինն ունէր 192, 646 բնակիչ:

Նոյն թւին զօրքի քանակութիւնը հասնում էր 137, 639 հ.: Այն ժամանակ, ինչպէս յայտնի է ձեզ, 1814 թ. — ի սեպտեմբերի օրէնքի ուժով, օրէնք, որ այժմ ուղում են խլել մեզից, լանդվերը (ժողովրդային զօրք, միլիցիա) զօրքի մէջ չէր հաշվում:

Պոլսը տեսնում էք, որ այդ ժամանակ զօրքի թիւը 4 անգամ աւելի մեծ էր, քան մեծ կայսրի ժամանակ:

Բայց մի եւ նոյն ժամանակամիջոցում Բերլինի բնակիչների թիւն աւելացել էր. 9 անգամ:

Սակայն այդ տեղից սկսում է աւելի արտասովոր զարգացում:

1846 թ. Բերլինի բնակիչների թիւը — այս թւերը քաղել եւ ես պաշտօնական աղբիւրներից — հասաւ 389, 308, համարեա մինչեւ 400, 000-ի, ուրեմն 1819 թ. մինչեւ 1846 թ.-ը կրկնապատկւում է: 26 տարւայ ընթացքում աւելի քան կրկնապատկւում է, իսկ այժմ, ինչպէս գիտէք, հասնում է 550, 000 հոգու:

Իսկ զօրաբանակի թիւը 1846 թ.-ին հասնում էր միայն 138, 810 հ.: Հետեւաբար, սկսած 1819 թ. նա համարեա չէ առաջացել եւ մի քայլ իսկ մասնակից չէ եղել քաղաքացիութեան ահագին զարգացման:

Այդպիսի հսկայական առաջադիմութիւն անելով, քաղաքացիները սկսում են հասկանալ որ իրանք քաղաքական ինքնուրոյն ոյժ են ներկայացնում: Ազգաբնակութեան զարգացման հետ ձեռք ձեռքի տված զարգանում է առաւել եւս հասարակական հարստութիւնը. նոյնպէս խիստ զարգանում են գիտութիւններն ու հասարակական գիտակցութեան ընդհ. կրթութիւնը, գիտակցութիւն, որ, ինչպէս տեսանք, նոյնպէս սահմանադրութեան մասն է կազմում: Քաղաքացիները սկսում են այսպէս խօսել. — «մենք չենք ուզում այլ եւս՝ սեփական կամքից դուրի՝ ուրիշի կամքով կառավարվող մի հասարակ ամբոխ լինել. մենք ուզում ենք ինքներս իշխել եւ թագաւորը պէտք է կառավարէ մեզ եւ հսկէ մեր գործերին միայն այնպէս, ինչպէս մենք ենք ուզում:»

Մարձ ասելով, պարոններ, երկրում գոյութիւն ունեցող ոյժի իրական յարաբերութիւններն էլի փոփոխվել են: Ուրիշ խօսքերով՝ հասարակութեան մեջ հասել է 1848-ի մարտի 18-ը (յեղափոխութիւնը):

Այդպիսով այստեղ իրագործվեց այն բանը, որ մեր հետազօտութեան սկզբում մենք ընդունել էինք իբրեւ անիրագործելի մէկ օրինակ: Մենք ենթադրել էինք, թէ հրդեհի պատճառով ժողովուրդը զրկվում է իր բոլոր օ-

րէնքները: Իսկպէս նրանք ոչնչացան ոչ թէ հրդեհեց, այլ մրկեց:

“Das Volk stand auf,  
Der Sturm brach los.”

«Երբ ժողովուրդը բարձրացաւ, մրրկը պայթեց:»

Յաղթական յեղափոխութիւնից յետոյ անհատական իրաւունքը հասարակութեան մեջ մի եւ նոյնն է մնում, բայց հասարակաց իրաւունքի բոլոր օրէնքները կամ վերացվեցան կամ պահպանում են միայն ժամանակաւոր նշանակութիւն. հարկաւոր է նորերը կազմել:

Այդպիսով առաջանում է նոր գրաւոր սահմանագրութիւն շինելու անհրաժեշտութիւնը, եւ հասարակութեան ինքն Բերլինում ազգային ժողով է հրաւիրում, որպէս զի տնօրինվէ ինչպէս առաջ ասում էին՝ նոր գրաւոր սահմանադրութիւն, կամ թէ, ինչպէս ասում էին յետոյ, որպէս զի նրա հետ համաձայնութիւն կայանայ զրա նկատմամբ:

Այժմ հարց է ծագում. ինչ պայմաններ են հարկաւոր, որպէս զի գրաւոր սահմանադրութիւնը լինի լաւ ու հաստատուն:

Մեր ամբողջ հետազօտութիւնից պարզ երեւում է, պարոններ, որ զրա համար անհրաժեշտ է մի պայման, այն է՝ որ գրաւոր սահմանադրութիւնը համապատասխանէ իսկակաւնին, այսինքն երկրում գոյութիւն ունեցող ոյժի իրական յարաբերութիւններին: Հէնց որ գրաւոր սահմանադրութիւնը չէ համապատասխանում իսկակաւնին, նրանց մեջ առաջանում է ընդհարում, որ ոչնչով չէ կարելի նախազգուշացնել, եւ այդ ընդհարման միջոցին գրաւոր սահմանադրութիւնն, այդ թղթի կտորը, անխուսափելի կերպով յաղթվում է իրական սահմանադրութեամբ, երկրում գոյութիւն ունեցող ոյժի իրական յարաբերութիւններով:

Արեմն ինչ էր հարկաւոր անել:

Ամենից առաջ հարկաւոր էր կազմել ո՛չ թէ գ ու ա ո ը , այլ ի ս կ ա կ ա ն սահմանադրութիւն, այսինքն փոփոխել երկրում գոյութիւն ունեցող յոժի իրական յարաբերութիւնները յօգուտ քաղաքացիներին:

ՂՂ մարտի 18-ը ցոյց տվեց, որ ժողովուրդի յոժն այժմ էլ արդէն բարձր է զօրքի յոժից: Երկար, արիւնահեղ կռիւց յետոյ զօրքը ստիպված էր նահանջել:

Բայց ես արդէն ցոյց տվի ձեզ այն ահագին զանազանութիւնը, որ կայ ազգի ու զօրքի յոժերի մէջ. այն զանազանութիւնը, որի շնորհով զօրքի յոժը, թէեւ աւելի փոքրիկ, ժամանակի ընթացքում հանդիսանում է իբրեւ աւելի իրական, քան թէ ժողովուրդի համեմատաբար աւելի մեծ յոժը:

Այդ զանազանութիւնը, դուք յիշում էք, կայանում է նրանում, որ ազգի յոժը կազմակերպված չէ, իսկ զօրքինը կազմակերպված է, ամեն օր պատրաստ վերսկսել կոխը, եւ այդ պատճառով էլ ժամանակի ընթացքում պէտք է հանդիսանայ իբրեւ աւելի իրական, պէտք է տանէ յաղթութիւնն ազգի աւելի մեծ, բայց չը կազմակերպված յոժի դէմ, մէկ ոյժ, որ համերաշխ կերպով ընդհուպ խմբվում է միայն չափազանց յուզման հաղուագիւտ ընդհանրում:

Նետեաբար, որպէս զի մարտի 18-ին տարած յաղթութիւնը ժողովուրդի համար անպատճառ անպտուղ չը մնար, հարկաւոր էր օգտվել այդ ընդհանուր զօրքի յոժն այնպէս վերակազմակերպելու համար, որ նա այլ եւս չը կարողանար ծառայել թագաւորին իբրեւ միջոց ազգի դէմ:

Հարկաւոր էր, օր, զինւորական ծառայութեան ժամանակամիջոցը սահմանափակել մինչեւ 6 ամիս: Այդ ժամանակամիջոցը զինւորական մեծ հեղինակութիւն ունե-

ցող անձերի կարծիքով համարվում է լիովին բաւական զինւորին կատարեալ զինւորական կրթութիւն տալու համար, իսկ միւս կողմից չափազանց կարճ է նրա ընթացքում զինւորի մէջ առանձին դասակարգային ոգի մտցնելու համար. նա այնքան կարճ է, որ պահանջում է զօրքի շարունակ նորոգում ժողովուրդից վերցրած նորանոր ոյժերով եւ այդպիսով թագաւորի զօրքից նրան դարձնում է ժողովուրդային զօրք:

Յետոյ, հարկաւոր էր տնօրինել որ բոլոր ստորաստիճան սպաները, գոնէ մինչեւ համարակալը (մայոր, major), ո՛չ թէ վերեւից նշանակվէին, այլ ընտրվէին նոյն իրանց՝ զօրքերի կողմից, որ սպաների պաշտօնները ժողովուրդին հակառակ ոգով չը նշանակվէին, մի բան, որն այնքան նպաստում է զօրքը թագաւորի ձեռքին կայր գործիք դարձնելու:

Հարկաւոր էր նոյնպէս տնօրինել որ զինւորական ծառայողների գործած բոլոր յանցանքները, — բացի այն յանցանքներից, որոնք զուտ զինւորական են, — ենթարկվէին սովորական քաղաքային դատաստանին. դա զօրքին կը սովորեցնէր իրան համարել ժողովուրդի դասին պատկանող եւ ո՛չ թէ մէկ առանձին դասակարգ: Յետոյ, հարկաւոր էր բոլոր թնդանութները, որոնք չէ որ պէտք է ծառայեն միայն երկրի պաշտպանութեան, — բացի մի քանի հատերից, որ հարկաւոր են զինւորական վարժութիւնների համար, — տալ ժողովուրդի կողմից ընտրված քաղաքային իշխանութիւնների ձեռքը: Թնդանութների մի մասը հարկաւոր էր սահմանել քաղաքացիական բանակից մի քանի ազգային թնդանութնաձիգ գնդեր կազմելու համար, որպէս զի այդպիսով ժողովուրդին տրվէր թնդանութներ եւս, սահմանադրութեան այդ այնքան կարեւոր մասը:

Այս բոլորից ո՛չ մէկը չարվեցաւ 1848-ի գարնան ու ամառը, եւ զրանից յետոյ արդեօք կարելի է

զարմանալ պարոններ, որ նոյեմբերում՝ մարտի յեղափոխութիւնն արդէն բնեցրած ու անպտուղ էր մնացել: Ի հարկէ, չէ կարելի, եւ ը է ա կ ց ի ա ն (յետադիմութիւնը) եղաւ անհրաժեշտ հետեւանքն այն բանի, որ ոյժի իրական յարաբերութիւններում չէր արված ոչ մի փոփոխութիւն:

Թագաւորներին, պարոններ, անհամեմատ աւելի լաւ են ծառայում, քան ձեզ: Թագաւորների ծառաները հասարակ պոռոտախօսներ չեն, ինչպէս շատ անգամ լինում են ժողովրդի ծառաները: Նրանք գործնական մարդիկ են, որ բնագղումով հասկանում են, թէ բ ա ն ն ի ն չ ու մ ն է: Պ. Ֆոն-Մոնտէֆէլը վատ հուստոր էր, բայց նա գործնական մարդ էր: 1848 թ. նոյեմբերին ցրվելով ազգային ժողովը եւ թնդանօթները փողոց հանելով, ամենից առաջ ինչ արաւ նա: Սկսեց արդեօք յետադիմական մի սահմանադրութիւն մտաւել: Օ, ինչպէ՛ս չէ: Նա շատ լաւ գիտէր, որ միշտ ժամանակ կունենայ այդ անելու: 1848 թ.-ի դեկտեմբերին մինչեւ անդամ նա ինքն ավեց ձեզ մի գրաւոր սահմանադրութիւն՝ բաւական ազատամիտ: Բայց նոյեմբերում ինչով սկսեց նա: Ի՞նչ եղաւ նրա ամենաառաջին գործը: Օ, դուք, ի հարկէ, յիշում էք. նա սկսեց նրանով, որ քաղաքացիներին խըլեց դէնքերը: Տեսնում էք, պարոններ, որ յաղթողի առաջին գործը պէտք է լինի խըլ յաղթվածի զէնքերը, եթէ նա չէ ուզում՝ որ կոխն ամեն-մի բոպէ վերսկսվէ:

Մեր հետադատութիւնը, պարոններ, սկզբներում խիստ դանդաղ էր, որովհետեւ ամենից առաջ մենք որոնում էինք դեռ սահմանադրութեան հասկացողութիւնը: Շատ կարելի է, որ շատերին նա չ ա փ ա զ ա ն ց դանդաղ լուաց: Բայց դրա տեղ, ինչպէս տեսաք, հէնց որ գրտանք այդ հասկացողութիւնը, մեր առջեւ մեկը միւսի ե-

տեւից բացվեցան շացուցիչ հետեւողութիւններ. և հիմա մենք այդ առարկան շատ աւելի լաւ, պարզորոշ ու խոր կերպով դիտենք, քան ուրիշները. բաւական չէ այդ մենք այնպիսի եզրակացութիւնների եկանք, որոնք մեծ մասամբ հակառակ են այն հասկացողութիւններին, որ միեւնոյն առարկայի մասին տիրում են հասարակութեան կարծիքում:

Համառօտ կերպով քննենք այդ տեսակ մի բանի եզրակացութիւններ եւս:

Եւ ցոյց տվել, թէ ինչպէս 1848-ին ոչ մէկ անհրաժեշտ միջոց ձեռքի չառնվեցաւ երկրում գոյութիւն ունեցող ոյժի իրական յարաբերութիւնները փոփոխելու և զօրքը թագաւորի կողմնակից լինելուց ժողովրդային զօրք դարձնելու համար:

Արվեցաւ, սակայն, մէկ առաջարկութիւն, որ թերվում էր դէպի այդ նպատակը եւ յայտնվում էր առաջին բայն այդ ուղիի վրա: Դա Շտէյնի արած առաջարկութիւնն էր՝ ստիպել մինիստրութեան (նախարարութեան) զօրքի նկատմամբ հրատարակել հրահանգ, որի նպատակը լինէր հարկադրել՝ հեռացնել նրա միջոց բոլոր յետադիմական սպաներին:

Բայց յիշում էք, պարոններ, որ հազիւ Բերլինի ազգային ժողովն ընդունել էր այդ առաջարկութիւնը, երբ բուրժուազիան ու երկրի կէտը սկսան պոռալ. «ազգային ժողովը պէտք է սահմանադրութիւնը կազմէ եւ ոչ թէ մինիստրութեան վերաբերութեամբ կեղտոտութիւններ քննելու ետեւից ընկնէ. պէտք չէ ժամանակ կորցնել այլ եւ այլ «դէ, հա դէ» անելու. պէտք չէ խառնել գործադիր իշխանութեան գործերում. սահմանադրութիւն կազմեցէք, այդ է միայն ձեր անելիքը» գոռում էին նրանք խըլը կորցրածի պէս:

Ինչպէս տեսնում էք, պարոններ, այդպէս խօսող ամ-

բողջ բուրժուազեան, երկրի ամբողջ կէսը ոչ մի գաղափար չէ ունեցել սահմանադրութեան էութեան մասին:

Գրաւոր սահմանադրութեան յօրինելն ամենաանկարելորդ գործն էր. հարկը եղած ժամանակը Յ օրւայ մէջ կարելի էր անել այդ գրա վրա հարկաւոր էր մտածել միայն ամենից յետոյ. ժամանակից առաջ պատրաստված լինելով նա ամեն առանց օգուտ գործ էր:

Պերպարանափոխել ոյժի իրական յարաբերութիւնները երկրում, ժիջամտել գործագիր իշխանութեան գործերում, այնպէս միջամտել այնպէս իրական կերպով կերպարանափոխել նրան՝ այդ իշխանութեան, որ նա այլ եւս երբէք չը կարողանար ժողովրդի կամքի հակառակ վարվել — ահա թէ ինչու մի էր գործը, ահա թէ ինչ էր հարկաւոր անել որպէս զի գրաւոր սահմանադրութիւնը հաստատուն լինէր: Արդ՛հետեւ ազգային ժողովը շատ շուտ ձեռնարկեց գրաւոր սահմանադրութիւն կազմելուն, այդ պատճառով էլ նրան ժամանակ անգամ չը տվին իր գործն աւարտելու, եւ նրան վնասեցին, քչեցին գործագիր ժողովն ոյժի չը վերած գործիքների (զէնքերի) օգնութեամբ:

Արկրորդ եղբակացութիւն. ենթադրենք, թէ ազգային ժողովը չը քչէին, թէ նա աջողեցաւ կազմել ու տնօրինել սահմանադրութիւնը:

Արդեօք դա շատ թէ քիչ էական կերպով կը փոխէր գործերի ընթացքը:

Ամենեւին, պարոններ, եւ գրան հաստատութիւն ներկայացնում են նոյն իսկ իրողութիւնները: Թէեւ ազգային ժողովը քչվեց, բայց թագաւորը, նոյն իսկ նրա թողած թղթերի համեմատ, ինքն կազմեց եւ 1848 թ. -ի դեկ. 5-ին հրատարակեց մի սահմանադրութիւն, որը իր գլխաւոր կէտերում միեւնոյնն էր, ինչ մենք կարող էինք սպասել ազգային ժողովից: Ոչ ոք չը ստի-

պեց թագաւորին այդ տեսակ մի սահմանադրութիւն տալ, այլ նա ինքն իր բարի կամքով հրատարակեց այն՝ յաղթութիւնը տանելուց յետոյ:

Թւում է, թէ իբր հէնց այդ պատճառով աւելի եւս կարելի է յուսալ որ նա հաստատուն լինի:

Ոչ պարոններ, անկարելի է: Եթէ ձեւ այգում մի խնձորենի ունենաք եւ վրան գրէք. «այս ծառը թղենի է», խնձորենին թղենի կը դառնայ: Ոչ եւ թէկուզ ձեր բոլոր տնեցիներն, ամբողջ թաղի ժողովուրդը հաւաքվէին եւ բարձրաձայն ու հանդիսաւոր կերպով երգվէին, թէ դա թղենի է, — ծառը կը մնար միեւնոյնը, ինչ որ էր, եւ յաջորդ տարին դա կապացուցվէր, երբ ծառի վրա կը բուսնէին խնձորներ եւ ոչ թէ թուզ:

Նոյնը եւ սահմանադրութեան վերաբերութեամբ: Միեւնոյն է, թէ ինչ գրվէ թղթի կտորի վրա, քանի որ գրվածը հակասում է իրերի իսկական դրութեան, ոյժի իրական յարաբերութիւններին:

Թագաւորն իր բարի կամքով 1848-ի դեկ. 5-ին թղթի կտորի վրա արաւ շատ զիջողութիւններ, որոնք բոլորն էլ հակասում էին իրական սահմանադրութեան, ոյժի իրական յարաբերութիւններին, ոյժի, որ բուրովին չը թուլացած՝ թագաւորը պահած էր իր ձեռքը: Այդ պատճառով իրական սահմանադրութիւնը պէտք է քայլ առ քայլ դուրս ցայտէր գրաւոր սահմանադրութեան տակից նոյնպիսի անհրաժեշտութեամբ, ինչպէս ձգողական օրէնքի հետեւանքները:

Այսպէս, թէեւ 1848-ի դեկ. 5-ի սահմանադրութիւնն ընդունվեցաւ վերաքննիչ ժողովի կողմից, բայց թագաւորն ինքն ստիպված էր մտցնել նրա մէջ առաջին փոփոխութիւնը — շնորհել 1849 թ. -ի երեքդասեան ընտրողական օրէնքը: Այդ օրէնքի զօրութեամբ առաջացած պատգամ ժողովների օգնութեամբ արվեցան ուրիշ ա-

մենաէական փոփոխութիւններ, մինչև որ 1850 թ.-ին թագաւորն ընդունեց ու երգվեց հաւատարիմ մնալ նրան. ի սկզբնեց որ ընդունեց ու երգվեց՝ այդ բոլորէնց արդէն սկսեցին իսկական կրկնաձեւութիւններ. 1850 թ.-ից սկսած տարի չէ անցել, որ սահմանադրութիւնը փոփոխութեան չենթարկվէր: Հարիւրաւոր ճակատամարտերի բովից անցած դրօշակն աւելի քիչ է կըտրուած ու ծակծկված, քան մեր սահմանադրութիւնը:

Արորդ եղբակցութիւն. Ձեզ յայանի է, պարոններ, որ մեր քաղաքում գոյութիւն ունի մի կուսակցութիւն, որի օրդանն է «Ժողովրդային լրագիրը», մի կուսակցութիւն, որ տենդային գողով բռնել է այդ դրօշակի պատուովաճքից, այդ այլակերպոված սահմանադրութիւնից, եւ դրա համար էլ ինքն իրան անուանում է «սահմանադրութեան անփոփոխ կողմնակից» — եւ որն իբրեւ նշանաբան իրան համար՝ ընտրել է այս ձիւը. «Թողէք մնայ սահմանադրութիւնը, աստուծոյ սիրոյն. . . սահմանադրութիւն, օգնեցէք, փրկեցէք, կորաւ, կորանք»:

Ամեն անգամ, երբ պատահում էր մի կուսակցութեան, — միեւնոյն է, թէ երբ, կամ որտեղ նրան տեսնէիք, — որն իբրեւ պատերազմական աղաղակ՝ արձակում է տենդային ձիւը «պինդ բռնել սահմանադրութիւնից», ինչ եղբակցութեան էք համուում այդ երեւոյթից, պարոններ: Խօսքս ձեր ցանկութիւններ ի կամ դիտումներ ի մասին չէ, այլ ձեր մտքերի. ինչ կեղբակցներ այդ երեւոյթից:

Ձը լինելով մարդարէներ, այդ տեսներով դուք կարող էք կատարեալ համոզումով ասել — այս սահմանադրութեան վերջին բոլոր հասել է. նա արդէն ողջ մէկ է, ինչ գիտի. մի քանի տարի եւ՛ա՛ եւ նա գոյութիւն չի ունենալ:

Պատճառները պարզ են: Երբ գրաւոր սահմանադրութիւնը համապատասխանում է երկրում գոյութիւն ունեցող ոյժի իրական յարաբերութիւններին, այդ տեսակ ողբեր երբէք չեն արձակվում, այդպիսի սահմանադրութեան դէմ ոչ ոք չի համարձակվել խօսել եւ ամենքն էլ կը վախենան նրան դիպչել: Ա՛չ որի մտքով չի անցնիլ կուսի մէջ ընկնել նրա հետ, իսկ եթէ մէկի մտքով անցնէր այդ վատ կը լինէր նրա հալը: Այնտեղ ուր գրաւոր սահմանադրութիւնը համապատասխանում է ոյժի իրական յարաբերութիւններին, այնտեղ անկարելի է այդպիսի մի երեւոյթ, որ այս կամ այն կուսակցութիւնն ընտրէ իբրեւ մի պատերազմական աղաղակ. «պինդ բռնել սահմանադրութիւնից»: Արտեղ այդ ձիւն արձակվում է, այդ արդէն անտարակուսելի ու հաստատուն չէ, որ դա երկիւղի ձիւն է. ուրիշ խօսքերով՝ դա ապացուցանում է, որ գրաւոր սահմանադրութեան մէջ կայ մի բան, որը հակասում է իրական սահմանադրութեան, ոյժի իրական յարաբերութիւններին: Իսկ երբ մի տեղ այդպիսի հակասութիւն գոյութիւն ունի, այնտեղ գրաւոր սահմանադրութիւնն անխուսափելի կերպով կորած է, եւ ոչ մէկ աստուած, ոչ մի ձիւն ու ողբ նրան ազատել չէ կարող:

Նա կարող է փոխվել դէպի երկու բոլորովին միմեանց հակառակ կողմեր, դէպի՛ աջ, կամ դէպի ձախ, բայց կենդանի մնալ չէ կարող: Ամեն մի ողջամիտ մարդու համար ապացոյց են դրան արդէն նրան պահանջու համար արձակած ձիւերը: Նա կարող է փոխվել դէպի աջ երբ փոփոխութեան կը նախաձեռնէ կառավարութիւնը՝ գրաւոր սահմանադրութիւնը համապատասխան դարձնելու համար հասարակութեան կազմակերպված ոյժի իրական պայմաններին: Նա կամ առաջ կը գայ հասարակութեան անկազմակերպ-

ված ոյ ժ ը եւ նորից կը հաստատէ իր գերազանց լինելը կազմակերպված ոյժի նկատմամբ: Այդ դէպքում սահմանադրութիւնը կը փոփոխվէ ու կը ծովէ դէպի ձ ա խ, ինչպէս առաջին դէպքում— դէպի աջ: Բայց յամենայն դէպս նա կ որ ա ծ է:

Եթէ դուք ոչ միայն կը յիշէք, այլ եւ խորին մըտածութեան առարկայ կը դարձնէք այս ճառը, որ ես պատիւ ունեցայ խօսելու ձեր առջեւ, պարոններ, այն ժամանակ դուք կը հասնէք այն բոլոր եղբակացութիւններին, որոնք առաջանում են նրանից, այն ժամանակ դուք ձեռք կը բերէք սահմանադրական բոլոր արուեստն ու իմաստութիւնը: Սահմանադրական խնդիրներն ամենից առաջ ոյ ժ ի խնդիրներ են եւ ոչ իր աւուրէի: Երկրի իր ա կ ա ն սահմանադրութիւնը կայանում է միայն երկրում գոյութիւն ունեցող ոյժի իր ա կ ա ն յարաբերութիւնն երի մէջ: Գր աւ ուր սահմանադրութիւններն այն ժամանակ միայն նշանակութիւն ունենն ու հաստատուն են, երբ նրանք ներկայացնում են հասարակութեան ոյժի իրական յարաբերութիւնների ճիշդ արտայայտութիւնը— սկզբունքներ, որ ձեզ հարկաւոր է լաւ իմանալ: Այսօր ես բացատրեցի ձեզ այդ սկզբունքները, միայն զի եր ա կ ա ն ոյ ժ ի տեսակէտից, որովհետեւ նախ ժամանակի սղութիւնը թոյլ չէր տալիս միւս կողմից ել ջննել երկրորդ զօրքն է կազմակերպված ոյժերից ամենալճուականն ու ամենակարեւորը: Բայց դուք հասկանում էք, ի հարկէ, որ միեւնոյնը վերաբերում է նաեւ արդարագատութեան ծառայողներին, վարչական պաշտօնեաներին, եւ այլն . . . այդ բոլորը նոյնպէս կազմում են հասարակական ոյժի կազմակերպված միջոցները: Չը մտանաք, պարոններ, այս ճառը, որպէս զի, եթէ երբ եւ է դէպք պատահէ՝ որ կրկին ինքներդ միջոց ունենաք կազմելու ձեր սահմանա-

դրութիւնը, իմանաք՝ թէ ինչ է հարկաւոր անել իմանաք՝ որ գործը թուղթ մրտտելու մէջը չէ, այլ ոյժի իրական յարաբերութիւնները փոփոխելու մէջն է:

Իսկ առայժմ՝ ընթացիկ կեանքի համար՝ դուք ինքներդ՝ առանց իմ մատնացուցութեան էլ կը հասկանաք իմ այս ճառից, թէ ներկայումս ինչ պահանջներից է առաջանում զինուորական նոր ըէֆօրմների (բարենորոգումներ) առաջարկութիւնը, որ անում է կառավարութիւնը, պահանջելով աւելացնել զօրքի թիւը: Այժմ ինքներդ կարող էք մատով ցոյց տալ այդ ձեռնարկութիւնների գաղտնի աղբիւրը:

Պարոններ, միապետութեան ծառայողները գործնական մարդիկ են եւ ոչ թէ պոռոտախօսներ, բայց այդ տեսակ գործնական ծառայողներ պէտք է ցանկանալ որ ունենաք եւ դուք:

ՎԵՐՁ.



\*\*\*

Մամուլի տակն է «Իրաւունք ծուլանալու» — Գ օ Լ  
Լ ա Ֆ ա Ր Գ Ի :



«Նչազի» խմբագրութեան մէջ ծախվում է նա-  
եւ հետև. Լ ե ո ե ն ց ի —

- 1) «Փախտականը», պ օ է մ ա յեղափոխական  
կեանքից. . . . . Գ. 40 սանտիմ.
- 2) «Լազազը», պ օ է մ ա յեղափոխական կեան-  
քից. . . . . Գ. 25 սանտիմ.
- 3) Բանաստեղծութիւններ, Ս. Պետերբուրգ, տպա-  
րան Ի ն. Սկորիսոյովի. . . . . Գ. 60 կօպէկ.



ՀՆՉԱԿԵԸՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բրօշերի դիրքով:

- 1) Մ ր ա գ ի ր Հնչակեան Կուսակցութեան (երկ-  
րորդ տպագրութիւն) . . . . . 2րի.
- 2) Նոր Հոսանք և Բաց նամակ Հայաստանցիներին.  
(սպառված) . . . . . գ. 1 Ֆրանկ.
- 3) Տարեդարձ 1890 թ. Յուլիս Տաննահինգի: Յե-  
ղափոխական հերոսներ: Յ. Զանկիւլեանի, Կ. Մ. Նալ-  
պանտեանի և Յ. Ղուկասեանի պատկերներով. (սպառ-  
ված) . . . . . գ. 30 սանտիմ.
- 4) Յուլիս Տաննահինգի 1890 թ. արիւնահեղ Յը-  
ցը Կ. Պօլտով և օրւան հերոսները — Ֆրանսերէն: Յ.  
Զանկիւլեանի, Յ. Ղուկասեանի և Կ. Մ. Նալպանտեանի  
պատկերներով (սպառված) . . . . . գ. 30 սանտիմ.
- 5) ՈՎ ինչո՞վ է ապրում. Ս. Գ ի կ շ տ է յ ն ի:  
Թարգմանութիւն: . . . . . գ. 75 սանտիմ.
- 6) Մայիսի մէկը. Ամենամեայ համաշխարհային տօն  
բանւորների, Գ. Պ Լ ե խ ա ն օ վ ի և մի գլուխ Պ. Ա ք-  
ս ե լ ր օ գ ի «Բանւորական շարժում» գրուածքից: Թարգ-  
մանութիւն . . . . . գ. 25 սանտիմ.
- 7) Հայերն Ամերիկայում, Ա կ ն — ե ա ն ց ի և Ինչ  
է աշխատանքի վարձ, Թարգմանութիւն Կ ա Ր Լ Մ ա Ր ք-  
ս ի ց . . . . . գ. 15 սանտիմ.
- 8) Սահմանադրութեան հոլթեան մասին, Ֆ է Ր գ ի-  
ն ա ն դ Լ ա ս ս ա լ ի, հեղինակի պատկերով և մէկ առաջա-  
բանով «Հնչակի» խմբագրութեան կողմից. գ. 40 սանտիմ.

\*\*\*

Բրօշերների վճարն ընդունվում է նաև նամակա-  
գրով: Ընդհանուր համարը «Հնչակի» խմբագրութեան  
կողմից:



13378

00

2013

« Ազգային գրադարան »



NL0046993

2-952 a.